IPPF

Մասնագիտական գործունեության
միջազգային հայեցակարգ

Լրացուցիչ ուղեցույցներ
Գործնական ուղեցույց

Ֆինանսական
ծառայություններ

Ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերություններում ներքին աուդիտի հիմունքները

The Institute of Internal Auditors | Global

Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի մասին

Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգը (IPPF®) կոնցեպտուալ հայեցակարգ է, որը հրապարակվում է ՆԱԻ-ի կողմից՝ որպես հեղինակավոր ուղեցույց ամբողջ աշխարհում ներքին աուդիտի մասնագետների համար:



Պարտադիր ուղեցույցները մշակվում են սահմանված պատշաճ ուսումնասիրության գործընթացի արդյունքում, որը ներառում է հանրային ծանոթացման և շահագրգիռ անձանց կողմից կարծիքի տրամադրման համար ժամանակահատված:

Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի պարտադիր տարրերն են.

- Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության Հիմնական սկզբունքները
- Ներքին աուդիտի Սահմանումը
- Էթիկայի կանոնները
- Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային Ստանդարտները:

Ցանկալի ուղեցույցները ներառում են Կիրառական և Լրացուցիչ ուղեցույցները: Կիրառական ուղեցույցները մշակված են, որպեսզի օգնեն ներքին աուդիտորներին հասկանալ՝ ինչպես կիրառել և համապատասխանել Պարտադիր ուղեցույցների պահանջներին:

Լրացուցիչ ուղեցույցների մասին

Լրացուցիչ ուղեցույցները տրամադրում են հավելյալ տեղեկատվություն, խորհրդատվություն և ներքին աուդիտի ծառայությունների լավագույն փորձի մասին տեղեկություններ: Դրանք օժանդակում են Ստանդարտներին՝

անդրադառնալով կոնկրետ ոլորտներին և առանձնահատուկ խնդիրներին ավելի մանրամասնորեն, քան Կիրառական ուղեցույցները, և հավանության են արժանանում ՆԱԻ կողմից պաշտոնական դիտարկման և հաստատման գործընթացից հետո:

Գործնական ուղեցույցներ

Գործնական ուղեցույցները Լրացուցիչ ուղեցույցների տեսակ են, որտեղ ներկայացվում են մանրամասն մոտեցումներ, քայլ առ քայլ գործընթացներ և օրինակներ, որոնց նպատակն է աջակցել ներքին աուդիտորներին: Հատուկ գործնական ուղեցույցները կենտրոնանում են հետևյալ թեմաների վրա.

- Ֆինանսական ծառայություններ,
- Հանրային հատված,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ (GTAG®):

ՆԱԻ կողմից հրապարակվող ուղեցուցային նյութերին ծանոթանալու համար այցելե՛ք www.globaliia.org/standards-guidance հղումով:

Բովանդակություն

Ամփոփագիր

Ֆինանսական ծառայությունների ոլորտում գիտելիքներ ու փորձ ունեցող ներքին աուդիտորների նկատմամբ պահանջարկն արագորեն աճում է, ինչը պայմանավորված է կարգավորողների կողմից ճնշմամբ՝ ապահովելու ներքին աուդիտի ծրագրերը ճիշտ քանակի և կարողությունների ռեսուրսներով: Սա հանգեցրել է նրան, որ ֆինանսական ծառայությունների խիստ կարգավորվող ոլորտում ներքին աուդիտի անձնակազմը որակականապես և քանակականապես աճում է ՝ նոր գլոբալ գործառնական միջավայրին համապատասխան:

Այլ ունակությունների հետ մեկտեղ, ներքին աուդիտորները պետք է ունենան հմտություն գնահատելու, թե որքանով են կազմակերպության գործառնությունները համահունչ ռիսկի ախորժակին, հաճախորդների և կարգավորողների ակնկալիքներին: Նրանք նաև պետք է կարողանան տրամադրել այն ներըմբռնումները, որոնք հիմնական շահառուները ցանկանում են ստանալ իրենց աշխատանքը կատարելու համար:

Ֆինանսական ծառայությունների աուդիտորների ուսուցմանն ու վերապատրաստմանն օժանդակող ներքին աուդիտի ուղեցույցներում առկա է որոշակի բաց: Ոլորտը պահանջում է, որ գործող մասնագետներն ունենան հատուկ և բազմակողմանի գիտելիքներ, ինչպիսիք են կարգավորող մարմինների պահանջների և ակնկալիքների, ֆինանսական կազմակերպությունների պրոդուկտների իմացությունը: Միևնույն ժամանակ ակնկալվում է, որ ներքին աուդիտորները պետք է պատշաճ իրականացնեն իրենց դերակատարումը կազմակերպության, շահառուների, հաճախորդների, աշխատակիցների և համայնքի պաշտպանության հարցում: Տվյալ պահանջների ու ակնկալիքների կառավարումը և առաջնահերթությունների որոշումը պահանջում է բարձր պրոֆեսիոնալիզմ ու հմտություն, ինչպես նաև ստեղծարարություն և նորարարություն:

Այս պահանջների արդյունքում ֆինանսական ծառայությունների աուդիտորների համար ստեղծվում է շատ բազմաբնույթ և սիներգետիկ միջավայր, որտեղ հիմնական ակնկալիքներից բացի վերջիններից ակնկալում են լրացուցիչ գիտելիքներ, ինչպիսիք են մշակույթի և դրա ազդեցության իմացությունը, վարվելակերպը, վարձատրությունը, ինչպես նաև բանկերի և այլ ֆինանսական ծառայությունների գործունեությունը կարգավորող հատուկ կանոնակարգերի միջև փոխկապակցվածության վերաբերյալ գիտելիքները:

Այս ուղեցույցը իրազեկում և կրթում է ֆինանսական ծառայությունների ոլորտում նորեկ ներքին աուդիտորներին կարգավորող միջավայրի մասին, որում

ֆինանսական կազմակերպությունները գործում են: Ուղեցույցը ներքին աուդիտորներին և այլ շահագրգիռ անձանց տրամադրում է նաև ընդհանուր պատկերացում, թե ինչպես է ներքին աուդիտի գործառույթի կառավարումը ֆինանսական ծառայությունների ոլորտում տարբերվում այլ ոլորտներից՝ կարգավորողների հետ փոխհարաբերությունների, կորպորատիվ կառավարման և ռիսկերի առումով:

Ներածություն

Առանց պատշաճ ուղղորդման, վերապատրաստման ու կրթության և էթիկայի կանոնների իմացության, ֆինանսական ծառայությունների ոլորտի համար կարող է լուրջ մարտահրավեր լինել բավարար ունակություններ ու հմտություններ ունեցող ներքին աուդիտորներ գտնելը, որոնց կհաջողվի այս առանձնահատուկ բնագավառում պատշաճ կատարել իրենց պարտականությունները:

Ընդգծված բառերի սահմանումները տրված են Հավելված 2. «Տերմինաբանություն» -ում:

Ուղեցույցում օգտագործված հապավումները ներկայացված են Հավելված 4-ում:

Սա կարող է հանգեցնել չբացահայտված և չզսպված **ռիսկերի**, որոնք կարող են մեծացնել ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների ենթարկվածությունը ռիսկի, ավելացնել կարգավորող մարմնի կողմից հարկադիր գործողությունները և խաթարել սպառողների վստահությունը:

Մեծ ակնկալիքներով այս ոլորտում ներքին աուդիտի գործառույթի պատշաճ և հեռանկարային կառավարումը առանցքային նշանակություն ունի: Այս ուղեցույցը շեշտում է ֆինանսական ծառայությունների ոլորտում արդյունավետ ներքին աուդիտի գործառույթի կառավարման կարևորությունը, ներառյալ.

- Ֆինանսական ծառայությունների ոլորտի ռիսկերի ընդհանուր պատկերը
- Ֆինանսական ծառայությունների ոլորտի կարգավորման ընդհանուր պատկերը
- Ռիսկերի հուսալի կառավարման հիմնական սկզբունքները
- Հավաստիացում տրամադրող այլ մարմինների հետ համագործակցությունը
- Ներքին աուդիտի շրջանակները
- Ներքին աուդիտի գործառույթի կառավարումը ֆինանսական ծառայությունների համատեքստում:

Այս ուղեցույցը կարդալուց հետո ներքին աուդիտորները պետք է կարողանան.

- Հասկանալ ֆինանսական ոլորտին բնորոշ միջավայրը, ներառյալ՝ հիմնական նպատակները, բիզնես ուղղությունները և դրանց հետ կապված ռիսկերը, ինչպես նաև, ոլորտում գործող օրենքների և կանոնակարգերի համար հիմք հանդիսացող, միջազգայնորեն ընդունված սկզբունքների ազդեցությունը,
- Բացահայտել ոլորտին հատուկ ռիսկերը, որոնք վերաբերում են օրենսդրությանը, որի ներքո կազմակերպությունը գործում է, և հաճախակի օգտագործվող հայեցակարգերին,
- Հասկանալ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններում կորպորատիվ կառավարման հիմնական սկզբունքները,
- Հասկանալ ֆինանսական կազմակերպություններում ոլորտին բնորոշ ռիսկերը ծածկող պաշտպանության 2-րդ գիծ հանդիսացող գործառույթների դերերը և հավաստիացման գործառույթները,
- Հասկանալ ներքին աուդիտի և արտաքին կարգավորողի/վերահսկողի փոխհարաբերությունները և թե ինչպես արդյունավետ կերպով կառավարել կարգավորողի ակնկալիքները՝ միաժամանակ պահպանելով հաշվետվողականությունը խորհրդին,
- Բացահայտել կազմակերպության հասունության մակարդակը՝ կապված ռիսկի և **հսկողության** գործառույթների շուրջ տարվող աշխատանքի հետ (բացարձակ առանձնացվածից մինչև ամբողջովին ինտեգրված)
- Հասկանալ, թե ինչպես կարող են 2-րդ գծի գործառույթները ինտեգրվել ներքին աուդիտի գործունեության հետ՝ ռիսկերի գնահատման, պլանավորման, հանձնառությունների ընթացքում կատարված աշխատանքի ու եզրակացությունների օգտագործման և արդյունքների ներկայացման առումով:

Այս ուղեցույցը ընթերցումը կարող է օգտակար լինել ֆինանսական ծառայությունների թեմային վերաբերող այլ՝հետևյալ գործնական ուղեցույցների ընթերցման հետ համատեղ.

- «Բանկերի կապիտալի համարժեքության և սթրես-թեստավորման աուդիտ» (Auditing Capital Adequacy and Stress Testing for Banks) գործնական ուղեցույց
- «Իրացվելիության ռիսկի աուդիտ. ընդհանուր ակնարկ» (Auditing Liquidity Risk: An Overview) գործնական ուղեցույց
- «Մոդելների ռիսկերի կառավարման աուդիտ» (Auditing Model Risk Management) գործնական ուղեցույց

Խրախուսվում է նաև ՆԱԻ Էթիկայի կանոնների և Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտների վերընթերցումը:

Ֆինանսական ծառայությունների ոլորտի կարգավորման ընդհանուր պատկերը

Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները վերահսկվում են երկու տիպի կարգավորողների կողմից: Պրուդենցիալ կարգավորողները պահանջում են, որ ֆինանսական կազմակերպությունները կառավարեն իրենց ռիսկերը և պահպանեն, կապիտալի նկատմամբ պահանջներով սահմանված, բավարար մակարդակի **կապիտալ** (անվտանգություն և հուսալիություն): Վերահսկողական կարգավորող մարմինները ուսումնասիրում են առանձին ֆինանսական կազմակերպությունների ֆինանսական վիճակը և գնահատում օրենքներին (ներառյալ՝ սպառողներին պաշտպանող օրենքները) ու կանոնակարգերին համապատասխանությունը: Օրինակ՝ ԱՄՆ-ում Դաշնային պահուստային խորհուրդը (Federal Reserve Board (FRB կամ Fed)), Ավանդների երաշխավորման դաշնային կորպորացիան (Federal Deposit Insurance Corporation (FDIC)) և Արժույթի վերահսկողի գրասենյակը (Office of the Comptroller of the Currency (OCC)) պրուդենցիալ կարգավորողներ են, որոնք նաև ունեն վերահսկողի իրավասություն: Միայն վերահսկողական և սպառողների պաշտպանության դեր կատարող կարգավորողներից են՝ Սպառողների ֆինանսական պաշտպանության բյուրոն (Financial Protection Bureau (CFPB)) և Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը (U.S. Securities and Exchange Commission (SEC)):

Այս կազմակերպությունները հաճախ միմյանց հետ փոխանակվում են տեղեկատվությամբ: Միջազգային, պետական, տարածաշրջանային և տեղական կարգավորողները կապվում են այլ մարմինների հետ և կիսվում ստուգումների արդյունքներով, ռիսկերի և այլ տեղեկատվությամբ:

Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններում ստուգումներ իրականացնելիս, կարգավորողները կիրառում են բազմաթիվ հնարքներ, ինչպիսիք են.

- Տեղեկատվություն հավաքելու նպատակով ինքնագնահատումներ օգտագործում
- Որոշ ստուգումների ամբողջովին կամ մասնակի արտապատվիրակում
- Իրենց համար աուդիտի անցկացում ստուգվող ֆինանսական կազմակերպության ներքին աուդիտորներին խնդրելը՝
- Այլ մարմինների հետ համատեղ ստուգումներ իրականացում
- Այլ կարգավորող մարմինների կողմից իրականացվող ստուգումների դիտարկում:

Աուդիտի նկատառում

Քանի որ կարգավորողները հաճախ տեղեկատվությամբ կիսվում են այլ մարմինների հետ, լավ փորձ կարող է լինել գործարքներին և տեղեկատվությանը (կարգավորողների հետ փոխհարաբերություններին, նրանց կողմից կատարված հարցումներին, պահանջներին և տրամադրված փաստաթղթերի և տեղեկատվության գրանցումներին) կենտրոնացված անվտանգ հարթակից հետևելու պաշտոնական գործընթացի ներդրումը:

Միտումները ցույց են տալիս, որ պրուդենցիալ և վերահսկողական կարգավորող մարմինները ավելի շատ ժամանակ են ծախսում կազմակերպությունների 2-րդ գծերի գործառույթների հետ համագործակցելիս, ինչպիսիք են՝ ֆինանսական հսկողությունների, **ռիսկերի կառավարման**, համապատասխանության և այլ գործառույթները, որոնք ուղղակիորեն աշխատում են բիզնեսի հետ տեղեկատվության հավաքագրման և ռեալ ժամանակում գործարքներ իրականացնող գործառույթների ստուգումների իրականացման համար: ԱՄՆ-ում Դաշնային պահուստային խորհուրդը 2-րդ գծի գործառույթներից ակնկալում է պրոֆեսիոնալիզմ առանձին բիզնես գործառույթների հսկողությունների ինքնագնահատման աշխատանքը դիտարկելիս և ռիսկերի բարձրաձայնման ընթացակարգերը գնահատելիս: Ակնկալիքն այն է, որ կազմակերպության ղեկավարությունը անում է իր գործը՝ ռիսկերի խնդիրներին տիրապետելու և հսկողությունների թեստավորման իմաստով:

Ի տարբերություն պրուդենցիալ կարգավորողի, որը ունի ստուգումների ավելի ակտիվ ժամանակացույց՝ վերահսկողական կարգավորողները հավանական չէ որ կանդրադառնան ֆինանսական կազմակերպությանը, մինչև որևէ խնդրի ի հայտ գալը: ԱՄՆ-ում, օրինակ, Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը (Securities and Exchange Commission (SEC)) և Ֆինանսական ոլորտի կարգավորող մարմինը (Financial Industry Regulatory Authority (FINRA)) կարող են չայցելել

կամ չստուգել կազմակերպությունը, քանի դեռ տեղի չի ունեցել դեպք, որը ազդեցություն ունի սպառողների վրա և հատում է վնասի որոշակի շեմը: Այնուամենայնիվ, հանրային մեկնաբանություններում այս մարմինները երկուսն էլ նշել են, որ ապագայում ավելացնելու են տեղում այցելությունների հաճախականությունը: Ի տարբերություն այս երկու մարմինների, Սպառողների ֆինանսական պաշտպանության բյուրոն (Financial Protection Bureau (CFPB)) ակտիվորեն ստուգումներ է իրականացնում ֆինանսական կազմակերպություններում, որոնք ունեն 10 միլիարդ դոլարից ավել ակտիվներ:

Չկա ստուգումների իրականացման միասնական կանոն, որը կարող է կիրառվել բոլոր կարգավորողների համար: Ստուգումների ժամկետները կարող են լինել կարգավորողի կողմից ընտրված կանոնավոր ժամանակացույցի համաձայն՝ հիմնված կարգավորողի կողմից ռիսկերի գնահատման վրա, կամ սահմանված օրենքով:

Ներքին աուդիտի փոխհարաբերությունները կարգավորողների հետ

Ներքին աուդիտորները ընդհանուր առմամբ «ծանոթ են կարգավորողների լեզվին» և հետևաբար նրանց հաճախ դիմում են ստուգումները կազմակերպելու համար՝ ներառյալ սկզբնական և եզրափակիչ հանդիպումները: Նրանք կարող են մասնակցություն ունենալ կամ ներկա գտնվել սկզբնական հանդիպումներին, քանի որ օգտակար կլինի հասկանալ, թե ինչ տեղեկատվություն են կարգավորողները հաղորդում ղեկավարությանը: Հետաքրքրաշարժ է, որ հաճախակի պատահող երևույթ չէ, երբ ներքին աուդիտորները մասնակցում են ղեկավարների ու կարգավորողների անհատական հանդիպումներին, բայց շատ տարածված երևույթ է, երբ կարգավորողները առանձին հանդիպումներ են ունենում ներքին աուդիտի հետ՝ հասկանալու համար, թե ինչ տեղեկություններ նրանք ունեն բաց խնդիրների, գործընթացներում փոփոխությունների, նոր պրոդուկտների և/կամ այլ հարցերի վերաբերյալ: Կազմակերպությունների մեծամասնության դեպքում ներքին աուդիտորները մասնակցում են եզրափակիչ հանդիպումներին, և արտաքին ստուգման արդյունքում բացահայտված ցանկացած խնդիր կարող են ներառել իրենց աուդիտների շրջանակներում:

Կարգավորողները անմիջապես հաղորդակցվում են ղեկավարության հետ, սակայն ներքին աուդիտը կարող է էապես ներգրավված լինել՝ հատկապես եթե կարգավորողները խնդրեն տրամադրել զեղծարարության, վարկերի, ռիսկերի կառավարման և այլ հետաքրքրող ոլորտների վերաբերյալ նրանց կատարած աշխատանքը: Ստուգողները տեղեկատվությունը ստանում են և' անմիջապես բիզնես ստորաբաժանումներից, և' ներքին աուդիտից: Որոշ դեպքերում ներքին աուդիտը գործում է որպես կարգավորող մարմնի շարունակող օղակ: Օրինակ.

Եվրոպական կենտրոնական բանկը (European Central Bank (ECB)) կարող է անդամ ազգային կենտրոնական բանկերի աուդիտորներից պահանջել իր համար աուդիտներ իրականացնել:

Կարգավորողները տարբերվում են իրարից այնքանով, թե որքանով են հիմնվում ներքին աուդիտի կողմից տրամադրված աշխատանքի և տեղեկատվության վրա: ԱՄՆ-ում կարգավորողները հիմնվում են ներքին աուդիտի աշխատանքի վրա, բայց միևնույն ժամանակ իրականացնում են ամբողջական շրջանակով ներքին աուդիտի ստուգումներ:

Խորհուրդ է տրվում, որ ներքին աուդիտի գործառույթները հետստուգում իրականացնեն արտաքին աուդիտորների և կարգավորող մարմինների կողմից տրված դիտարկումների գծով, հատկապես, եթե արտաքին աուդիտորները բացի իրենց աուդիտի շրջանակներից, ստուգում են նաև կարգավորմանն առնչվող հարցերը: Արտաքին աուդիտորի և վերահսկող մարմնի միջև կարող է լինել համագործակցություն, որի ընթացքում արտաքին աուդիտորը կարող է իր հաշվետվություններն ուղարկել վերահսկող մարմնին և կարող է ստանձնել վերահսկող մարմնի որոշ լիազորություններ:

Խնդիրներից խուսափելու համար կարևոր է, որ վերահսկող մարմնի և ներքին աուդիտի գործառույթի միջև լինի թափանցիկ հաղորդակցություն: Կարգավորողները նշում են, որ մինչև 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը, ներքին աուդիտորները ոչ միշտ էին այնքան անկախ, որքան պետք է լինեին, և ոչ էլ համարժեք ռեսուրսներ ունեին: Այնուամենայնիվ, այժմ վերահսկողներն ու կարգավորողները, որպես կանոն, նախկինում չտեսնված հեղինակություն և կարևորություն են տալիս ներքին աուդիտի դերին: Վերահսկողների և կարգավորողների կողմից ներքին աուդիտորների աշխատանքի հանդեպ վստահությունը չափազանց մեծ կարևորություն է հաղորդում այս սուբյեկտների միջև հաղորդակցմանը նտեղի ունեցող հանդիպումներին: Իր հերթին, ներքին աուդիտի գործառույթը նաև պատասխանատու է ստուգումների ժամանակ հայտնի դարձած/ օգտագործված վերահսկողական գաղտնի տեղեկատվության պահպանման համար: ՆԱԻ Էթիկայի կանոնները, այլ թեմաների հետ մեկտեղ, ներքին աուդիտորներին ուղղորդում են նաև գաղտնիության թեմայով:[1]

Ստորև կարգավորվող տարբեր տիպի ֆինանսական կազմակերպությունների (նաև բանկ չհանդիսացող) փոխհարաբերությունների մի քանի օրինակ `

[1] "The IIA's Code of Ethics," The IIA, accessed June 13, 2019, https://global.theiia.org/standards-guidance/mandatory- guidance/Pages/Code-of-Ethics.aspx.

Բանկեր

Օրինակ 1. ԱՄՆ-ում գործող խոշոր բանկը վերահսկվում է երկու հիմնական կարգավորողների՝ Դաշնային պահուստային խորհրդի (Federal Reserve Board (FRB կամ Fed)) և Արժույթի վերահսկողի գրասենյակի (Office of the Comptroller of the Currency (OCC)) կողմից, որոնք կոորդինացնում են իրենց ստուգումները և միմյանց հետ կիսվում արդյունքներով:

Վերջերս այս երկու մարմինները իրականացրեցին համատեղ ստուգում, որը վերաբերվում էր փողերի լվացման դեմ պայքարին և «Բանկային գաղտնիքի մասին» ԱՄՆ օրենքով (U.S. Bank Secrecy Act (BSA)) նախատեսված այլ թեմաներին: Այս պայմանավորվածության առավելություններից էին աշխատանքների կրկնությունից խուսափումը և ռեսուրսների ավելի արդյունավետ կառավարումը, քանի որ ներքին աուդիտորները հաճախ կարգավորող մարմինների համար կատարում են աշխատանքներ կամ օգնում են նրանց՝ ստուգման համար տեղեկատվությունը հավաքելու/հասկանալու հարցում:

Օրինակ 2.

ԱՄՆ-ում գործող համայնքային բանկը կարգավորվում է Ավանդների երաշխավորման դաշնային կորպորացիայի (Federal Deposit Insurance Corporation (FDIC)) և նահանգի բանկային գործունեության դեպարտամենտի կողմից:

Թափանցիկություն

Հարց. Ներքին աուդիտի և կարգավորող մարմինների միջև թափանցիկության ո՞ր մակարդակն է իդեալականը:

Պատասխան. Ներքին աուդիտորները պետք է հստակ լինեն փաստերի շուրջ և խուսափեն կարծիքներից: Նրանք պետք է հարցերին տրամադրեն մանրամասն պատասխաններ և ըստ պահանջի կիսվեն փաստաթղթերով:

Ներքին աուդիտորները կարգավորողի հետ հարաբերությունները պետք է դիտարկեն որպես գործընկերային: Եթե ձեր կազմակերպությունը նախատեսում է ունենալ նոր պրոդուկտ կամ ծառայություն, ուղղորդման համար կապ հաստատեք կարգավորողի հետ: Ներքին աուդիտի ղեկավարները պետք է հստակ լինեն նաև նոր պրոդուկտներին և ծառայություններին պատշաճ կերպով անդրադառնալու համար իրենց անհրաժեշտ ռեսուրսների հարցում, ինչպես պահանջում է 1200 – «Հմտություն և մասնագիտական պատշաճ ուշադրություն» ստանդարտը:

Ներքին աուդիտորները պետք է միշտ լինեն ազնիվ և թափանցիկ: Նրանք պետք է խուսափեն գործողություններից, որոնք կարող են բացասաբար ազդել կազմակերպության վրա և ուշադիր լինեն անկախ և անաչառ մնալու հարցում, ինչպես պահանջում են 1100 – «Անկախություն և անաչառություն» ստանդարտը և ՆԱԻ էթիկայի կանոնները:

Ներքին աուդիտի գործառույթները և կարգավորողները ունեն միևնույն նպատակը. ապահովել, որ կազմակերպությունը լինի անվտանգ և հուսալի:

Բանկի տեսանկյունից ակնկալիքները ստուգողից ստուգող կարող են փոխվել, բայց ընդհանուր առմամբ բանկի կարգավորող մարմինները ներքին աուդիտից ակնկալում են ունենալ ռիսկերի վրա հիմնված աուդիտի պլան՝ միևնույն ժամանակ աուդիտների շրջանակներում ընդգրկելով կարգավորող մարմինների պահանջները: Այս նպատակին հասնելու համար **ներքին աուդիտի ղեկավարը** վերափոխել է ներքին աուդիտի ստորաբաժանումը՝ ավելացնելով առաջատար հմտություններ և անձնակազմ, որը բանկի համար ավելի մեծ արժեք կստեղծի: Այնուհետև ներքին աուդիտի ղեկավարը քննարկել է այս ծրագիրը կարգավորողների հետ՝ նրանց համաձայնությունը ստանալու համար: Դրանից հետո ներքին աուդիտի ղեկավարը նշում է. «Եթե դուք թափանցիկ լինեք կարգավորողների հետ և ասեք, թե ինչ ճանապարհով եք առաջ գնալու, նրանք ձեր առաջընթացը կգնահատեն՝ համեմատելով ձեր կողմից նշված նպատակների հետ»: Կարգավորողի հետ պլանավորված հանդիպումների ժամանակ ներքին աուդիտի ղեկավարը համոզվեց, որ վերափոխման իր ծրագիրը կապված է որակական արդյունքների, քննությունների արդյունքների և լավագույն փորձի հետ: Փոփոխությունների կառավարման և կազմակերպության ու կարգավորողների սպասելիքները բավարարելու նրա փորձը դրական էր՝ շնորհիվ նրա պրոակտիվ մոտեցման:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական կազմակերպությունների և դրանց ներքին աուդիտի գործառույթների համար պարտադիր է լավ աշխատանքային հարաբերություններ հաստատել իրենց կարգավորող մարմինների հետ: Սա կարող է հնարավորություն տալ աուդիտորներին հասկանալ և կանխատեսել փոփոխվող սպասելիքները:

Ապահովագրություն

Օրինակ. ԱՄՆ-ում հիմնված ապահովագրական ընկերությունը Լոնդոնում ունի խումբ, որը կարգավորվում է Պրուդենցիալ կարգավորման մարմնի (Prudential Regulation Authority (PRA)) կողմից: Ընկերության ներքին աուդիտի ղեկավարը յուրաքանչյուր տարի պետք է ստորագրի հավաստագրեր, որով կհաստատի, որ իրենց կազմակերպությունները համապատասխանում են կանոնակարգերին: Ներքին աուդիտի ղեկավարի հաղորդմամբ՝ ներքին աուդիտի թիմերը ազատ հաղորդակցվում են կարգավորող մարմինների հետ: Նրա թիմը հաճախ աշխատանքներ է կատարում Պրուդենցիալ կարգավորման մարմնի համար, որը բացահայտ արտահայտում է ներքին աուդիտի գործառույթից իր ակնկալիքները և բաց է ցանկացած հարցերի դեպքում: Պրուդենցիալ կարգավորման մարմինը (PRA), իր հերթին գնահատում է ներքին աուդիտորների բիզնեսի վերաբերյալ տեսակետները և նրանց աուդիտորական հանձնառությունների արդյունքները:

Եթե Պրուդենցիալ կարգավորման մարմինը սկսում է բիզնես գործառույթներից մեկի ռազմավարական ստուգում, նրանք հարցազրույց են իրականացնում ներքին աուդիտի ղեկավարի հետ: Երբեմն այս ապահովագրական ընկերության նահանգային կարգավորողը, Պրուդենցիալ կարգավորման մարմնի հետ միասին, մասնակցում է տեղեկատվական հանդիպումներին ու ներքին աուդիտի կողմից կատարված աշխատանքների շուրջ քննարկումներին: Պրուդենցիալ կարգավորման մարմինը նաև ստանում է զեկույցներ կատարված աշխատանքի առաջընթացի վերաբերյալ , կազմակերպության մասին տեղեկատվություն և ներքին աուդիտի տարեկան պլանները:

Կարգավորողների հետ արդյունավետ հաղորդակցման նպատակով ներքին աուդիտորները պետք է ձգտեն ձևավորել գործընկերային մհարաբերություններ և շարունակաբար աշխատեն նրանց հետ, որպեսզի ապահովվի տեղեկատվության պատշաճ հոսքը ինչպես կազմակերպության ներսում, այնպես էլ կարգավորողի հետ: Որոշ կարգավորող մարմիններ հրապարակել են ներքին աուդիտի դերի և ներքին աուդիտի ու կարգավորողի միջև հաղորդակցման ստանդարտների վերաբերյալ ուղեցույցներ: Տե'ս ԱՄՆ-ում Դաշնային պահուստային խորհրդի (Federal Reserve Board) կողմից SR 13-1 թողարկումը և Եվրոպական բանկային մարմնի (European Banking Authority (EBA)) կողմից թողարկված «Իրավասու մարմինների և աուդիտորների միջև հաղորդակցման ուղեցույցների վերաբերյալ վերջնական զեկույց» փաստաթուղթը: [2,3]

Ակտիվների կառավարում

Նույնիսկ Ֆինանսական ծառայությունների այնպիսի ոլորտներում, ինչպիսին է ակտիվների կառավարումը, որը (որոշ դեպքերում) բանկերի նման խստորեն չի կարգավորվում, կրկին կան բազմաթիվ կարգավորող մարմիններ՝ տարբեր հեռանկարներով, մանդատներով և ընթացակարգերով: Ներքին աուդիտորները պետք է տեղեկացված լինեն գլոբալ, տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում կարգավորողների և կարգավորողների ցանցերի մասին (Լրացուցիչ տեղեկատվության համար տե'ս Հավելվածներ 3-ը և 4-ը):

[2] "SR 13-1/CA 13-1: Supplemental Policy Statement on the Internal Audit Function and Its Outsourcing," Board of Governors of the Federal Reserve System, last modified January 23, 2013, https://www.federalreserve.gov/supervisionreg/srletters/sr1301.htm.

[3] "Final Report on the Guidelines on Communications Between Competent Authorities and Auditors," EBA/GL/2016/05, European Banking Authority, last modified July 26, 2016, https://eba.europa.eu/documents/10180/1531117/EBA-GL- 2016-05+%28Final+report+on+GL+on+communication+between+competent+authorities%29.pdf/d095b68c-17a1- 40b3-9188-5f9facc23886.

Ֆինանսական ծառայությունների ոլորտի ռիսկերի ընդհանուր պատկերը

Ֆինանսական ծառայությունների ոլորտը խիստ կարգավորվում են գլոբալ հիմունքներով և ենթակա են համակարգային և վարակի ռիսկերի: Շատ ֆինանսական կազմակերպություններ առաջարկում են պրոդուկտների և ծառայությունների բազմազանություն (օրինակ՝ ապահովագրական ընկերությունները կարող են իրականացնել բանկային գործառույթներ, իսկ բանկերը կարող են առաջարկել ապահովագրական ընկերությունների կամ ակտիվների կառավարիչների ծառայություններ): Սա դժվարացնում է ինչպես ֆինանսական կազմակերպությունների դասակարգումը այն կարգավորող միջավայրը, որում վերջիններս գործունեություն են ծավալում:

Ընդհանուր առմամբ ֆինանսական ծառայությունների բնագավառը ներառում է ուշադրություն պահանջող հետևյալ ոլորտները.

- *Բանկեր* – Կան ակտիվների տարբեր չափեր ունեցող տարբեր տեսակի բանկեր, որոնք ունեն են գլոբալ, ազգային և համայնքային ազդեցություն: Այս հաստատություններն ունեն իրենց սեփական կանոնադրություններն ու մանդատները: Օրինակ՝ ԱՄՆ-ում կան փոխադարձ բանկեր, «խնայողությունների և վարկերի» ընկերություններ, վարկային միություններ և այլն: Աշխարհում, ի թիվս այլոց, կան մանրածախ բանկեր և ներդրումային բանկեր: Յուրաքանչյուր տեսակ ենթարկվում է առանձին կանոնակարգումների, որոնք տարբերվում են գլոբալ, պետական և տարածաշրջանային մակարդակներում: Բանկերի կարգավորմամբ կարող են զբաղվել տարբեր կարգավորողներ, կախված այն հանգամանիքից թե ինչ պրոդուկտներ և ծառայություններ է հաստատությունը առաջարկում իր հաճախորդներին :

- *Ոչ բանկ հանդիսացող ֆինանսական կազմակերպություններ* – Այս խմբում ընդգրկվում են բազմաթիվ կազմակերպություններ, որոնք մատուցում են այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են ճանապարհորդական չեկերի տրամադրումը, արտարժույթի մանրածախ փոխանակումը, դրամական փոխանցումները, չեկերի կանխիկացումը և դրամական օրդերները: Համաշխարհային բանկի համաձայն այս խումբը ներառում է նաև որոշ ապահովագրական ընկերություններ, վենչուրային կապիտալիստներ, միկրո վարկային կազմակերպություններ և նույնիսկ գրավատներ:[4]

[4] "Nonbanking financial institutions," The World Bank, accessed June 13, 2019, http://www.worldbank.org/en/publication/gfdr/gfdr-2016/background/nonbank-financial-institution.

Այս կազմակերպությունները չունեն բանկային գործունեության լիցենզիա և պարտադիր չէ, որ վերահսկվեն որևէ պետական կամ միջազգային բանկային կարգավորող մարմնի կողմից, չնայած որ որոշակի օրենսդրություններում գործելու համար կարող են պահանջվել թույլտվություններ և այլ փաստաթղթեր:

- *Ապահովագրական ընկերություններ* – Այս ընկերությունները սովորաբար դասակարգվում են ըստ առաջարկվող ապրանքատեսակների, ինչպիսիք են՝ կյանքի և առողջության ապահովագրողները, գույքի և դժբախտ պատահարների ապահովագրողները և վերաապահովագրողները: Առկա են նաև բազմաթիվ ենթախմբեր.

    - Առողջություն. հատուցումների վճարում հիվանդության կամ առողջությանը պատճառված վնասի հետևանքով, ներառյալ դժբախտ պատահարներից, բժշկական ծախսերից կամ հանկարծակի մահից և անդամահատումից առաջացած վնասները:
    - Կյանք. հատուցման վճարում սահմանված շահառուներին՝ ապահովագրված անձի մահվան դեպքում: Որոշ պրոդուկտներ կարող են ներառել մահացու կամ ծայրահեղ ծանր հիվանդությունների ռիսկը:
    - Անուիտետներ. պարբերական վճարների տրամադրում՝ որպես ապահովագրություն այն հնարավորությունից, որ թոշակառուն կապրի ավելի երկար, քան կբավարարեն իր ֆինանսական ռեսուրսները:
    - Գույք և դժբախտ պատահարներ. բազմատեսակ ծածկույթների տրամադրում՝ օգնելու համար անհատներին և ընկերություններին կառավարել վնասներ կրելու իրենց ռիսկերը: Կազմակերպություններին առաջարկվող ապահովագրական ծածկույթներն ընդգրկում են հետևյալ ուղղությունները՝ գույք, աշխատակիցներին փոխհատուցումներ, աշխատանքային գործունեության պատասխանատվություն, ընդհանուր պատասխանատվություն, տնօրենների և պաշտոնյաների պատասխանատվություն, ավտոտնտեսություն, կիբեր ոլորտ, երաշխիքային պարտատոմսեր, սխալներ և բացթողումներ, բժշկական մասնագիտական պատասխանատվություն, հանցագործություն և աշխատակիցների «հավատարմություն», սարքավորումների խափանում, գյուղատնտեսական բերք: Անհատներին առաջարկվում են գույքի (տան սեփականատերերի), ջրհեղեղից, ավտոմեքենայի (գույք և պատասխանատվություն)

հիփոթեքի, նավերի, տնային կենդանիների ապահովագրական ծածկույթներ:

- Վերաապահովագրում. Ապահովագրական ընկերության կողմից գնված ապահովագրական ծածկույթ, որով այն իր սեփական ապահովագրական պատասխանատվության մի մասը փոխանցում է մեկ այլ ընկերության:
- Կենսաթոշակային հաշիվներ. համարվում են ապահովագրական ոլորտի մի մաս: ԱՄՆ-ում ապահովագրողները կարգավորվում են պետական և նահանգային մակարդակներում: Եվրոպական Միությունում (ԵՄ) Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմինը (European Insurance and Occupational Pensions Authority (EIOPA)) առանցքային դեր է խաղում իրավական կարգավորման շրջանակում, ինչով այն իր ներդրումն է ունենում Եվրոպական հանձնաժողովի կողմից քաղաքականությունների մշակման գործում:[5]

- *Ակտիվների կառավարում* – Ֆինանսական ծառայությունների համատեքստում ակտիվների կառավարումը հաճախորդի ներդրումների ուղղորդումն է բանկի կամ հատուկ ներդրումային ընկերության կողմից, որը կայացնում է ներդրումային որոշումներ ի շահ հաճախորդի, բայց իր հայեցողությամբ: Ներդրումները պահվում են հաճախորդների առանձին հաշիվներում կամ ներդրումային ֆոնդերում: Ակտիվների տիպիկ դասերն են բաժնետոմսերը, պարտատոմսերը, անշարժ գույքը և մասնավոր կապիտալը:

Այս ոլորտները կարգավորվում են մատրիցային կազմակերպությունների սկզբունքով, երբ մեկ կազմակերպությունը վերահսկվում է մի քանի կարգավորողների կողմից՝ կախված առաջարկվող պրոդուկտներից ու ծառայություններից և / կամ գտնվելու վայրից:

[5] "Missions and tasks," European Insurance and Occupational Pensions Authority, accessed June 13, 2019, https://eiopa.europa.eu/about-eiopa/missions-and-tasks.

Համաշխարհային ստանդարտներ սահմանողները

Աշխարհի երկրները ներկայացնող Միջազգային հաշվարկների բանկը (Bank for International Settlements (BIS)), նշում է, որ իր առաքելությունն է ծառայել կենտրոնական բանկերին՝ դրամավարկային և ֆինանսական կայունության նպատակին հասնելու գործում:[6] Այն ներառում է ինը միջազգային կազմակերպություն, այդ թվում՝ Բանկերի վերահսկողության Բազելյան կոմիտեն (BCBS), որը բանկերի պրուդենցիալ կարգավորման համաշխարհային ստանդարտների հիմնական սահմանողն է: Ներքին աուդիտորների համար էական կարևորություն ունի ամբողջ աշխարհում տարբեր կարգավորող ու վերահսկողական մարմիններին ճանաչելը: Միջազգային հաշվարկների բանկն իր կայքում ներկայացնում է այդ մարմինների ցանկ:[7]

Կարգավորումը Ասիայում

Ընդհանուր առմամբ, Ասիայում ֆինանսական ծառայությունների ոլորտի կարգավորողները հետևում են Բանկերի վերահսկողության Բազելյան կոմիտեի (Basel Committee of Banking Supervision) սահմանած ստանդարտներին: Օրինակ, Հոնկոնգի Դրամավարկային մարմինը (Hong Kong Monetary Authority) թողարկել է Բանկերի ռիսկերի սահմանաչափերի կանոններ (Banking Exposure Limits Code), որոնք համահունչ են Բազել III-ով սահմանված կապիտալի պահանջներին:

Թեև որոշ վերահսկող մարմիններ կարգավորում են ինչպես ապահովագրական ընկերությունները, այնպես էլ բանկային հաստատությունները, ապահովագրության ոլորտում աշխատողների համար կարևոր է հասկանալ Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (International Association of Insurance Supervisors (IAIS)) նպատակը և պարտականությունները: Ըստ նրանց կայքի. «1994 թվականին հիմնադրված Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիան (International Association of Insurance Supervisors (IAIS)) աշխարհում ապահովագրավճարների 97%-ը կազմող օրենսդրություններից ավելի քան 200 ապահովագրական վերահսկողների և կարգավորողների կամավոր անդամակցությամբ կազմակերպություն է»:

[6] "About BIS," Bank for International Settlements, accessed June 13, 2019, https://www.bis.org/.

[7] "Regulatory authorities and supervisory agencies," Bank for International Settlements, accessed June 13, 2019, https://www.bis.org/regauth.htm.

Այն միջազգային ստանդարտներ սահմանող մարմին է, որը պատասխանատու է ապահովագրական ոլորտի վերահսկողության սկզբունքներ, ստանդարտներ և այլ օժանդակ նյութեր մշակելու և դրանց կիրառման մասով աջակցելու համար: Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (International Association of Insurance Supervisors (IAIS)) առաքելությունն է խթանել ապահովագրական ոլորտի արդյունավետ և գլոբալ մակարդակով համահունչ վերահսկողությունը…, նպաստել համաշխարհային ֆինանսական կայունությանը», զարգացնել և պահպանել արդար, անվտանգ և կայուն ապահովագրական շուկաներ՝ ելնելով ապահովագրվող անձանց շահերից և պաշտպանությունից: [8]

Բանկերի կարգավորվող վերահսկողության կառուցվածքը ԱՄՆ-ում

Նկար 1-ում պատկերված է ԱՄՆ-ում բանկային գործունեության կարգավորող վերահսկողության կառուցվածքը՝ պայմանական Նյու-Յորք նահանգում գտնվող ABC բանկի օրինակով:

ԱՄՆ-ում գործող այս պայմանական բանկը, կախված ակտիվների չափից, ենթակա է ստուգման 15 վերահսկողական մարմինների կողմից, եթե համարենք, որ բանկը մասնաճյուղեր ունի միայն Նյու-Յորք նահանգում: Եթե բանկը մասնաճյուղեր ունենար բոլոր 50 նահանգներում, ապա կներգրավվեին բոլոր 50 նահանգների կարգավորող մարմինները: Եթե բանկը մասնակցեր ապահովագրական շուկաներին, ապա ներգրավված կլինեին նաև ապահովագրական ոլորտը կարգավորող մարմինները: Ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերության բիզնես գործառույթների, ակտիվների և աշխարհագրական ընդլայնման հետ մեկտեղ մեծանում է նաև կարգավորման բեռը:

[8] International Association of Insurance Supervisors, accessed June 13, 2019, https://www.iaisweb.org/home.

Նկար 1: ԱՄՆ-ում միջին չափի բանկի կարգավորող վերահսկողական մարմինների օրինակ

Միջազգային ստանդարտներ սահմանող մարմիններ

1. Բանկերի վերահսկողության Բազելյան կոմիտե (Basel Committee on Banking Supervision)
2. Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպություն (International Organization of Securities Commissions)

Դաշնային կարգավորողներ

3. Սպառողների ֆինանսական պաշտպանության բյուրո (Consumer Financial Protection Bureau)
4. Ավանդների երաշխավորման դաշնային կորպորացիա (Federal Deposit Insurance Corporation)
5. Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալություն (Federal Emergency Management Agency)
6. Ֆինանսական կազմակերպությունների ստուգման դաշնային խորհուրդ (Federal Financial Institutions Examination Council)
7. Դաշնային պահուստային բանկ (Federal Reserve Bank)
8. Բնակարանային և քաղաքաշինության դեպարտամենտ և Բնակարանային դաշնային ադմինիստրացիա (Housing and Urban Development & Federal Housing Administration)
9. Ներքին եկամուտների ծառայություն (Internal Revenue Service)
10. Արժույթի վերահսկողի գրասենյակ (Office of the Comptroller of the Currency)
11. Արժեթղթերի և բորսաների հանձնաժողով (Securities and Exchange Commission)
12. Գանձապետական դեպարտամենտ (U.S. Department of the Treasury)

Նյու-Յորք նահանգի կարգավորողներ

13. Ֆինանսական ծառայությունների դեպարտամենտ (Department of Financial Services)
14. Պետական դեպարտամենտ (Department of State)
15. Բանկիրների ասոցիացիա (Bankers Association)

ABC բանկ, Նյու-Յորք, ԱՄՆ
Ակտիվների չափը՝ 20 մլրդ դոլար

Բիզնես գործառույթները

- Կապիտալի շուկաներ
- Առևտրային բանկային գործունեություն
- Վճարումներ
- Մանրածախ բանկային գործունեությունը
- Հարստության կառավարում

Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

Բանկերի կարգավորող վերահսկողության կառուցվածքը ԵՄ երկրներում

Նկար 2-ում պատկերված է ԵՄ երկրներից մեկում բանկային գործունեության կարգավորող վերահսկողության կառուցվածքը՝ Նիդերլանդներում գտնվող պայմանական DEF բանկի օրինակով:

Նկար 2: Նիդերլանդներում միջին չափի բանկի կարգավորող վերահսկողական մարմինների օրինակ



Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

Ֆինանսական վերահսկողության եվրոպական համակարգը (European System of Financial Supervision (ESFS)) ազգային և եվրոպական վերահսկող մարմինների ինտեգրված ցանց է: Եվրոպական բանկային մարմինը (European Banking Authority (EBA)) ԵՄ անկախ մարմին է, որը գործում է Եվրոպայի բանկային ոլորտում արդյունավետ և համահունչ պրուդենցիալ կարգավորում և վերահսկողություն ապահովելու նպատակով:[9] Եվրոպական բանկային մարմնի ընդհանուր նպատակներն են ԵՄ-ում ֆինանսական կայունության և բանկային հատվածի ամբողջականության, արդյունավետության և կանոնավոր գործունեության պահպանումը: Եվրոպական կենտրոնական բանկը բանկային հաստատությունների անմիջական վերահսկողն է, որն ապահովում է, որ ոլորտը հետևի Եվրոպական բանկային մարմնի դիրեկտիվներին:

Ինչպես արդեն նշվել է, Եվրոպական կենտրոնական բանկը պատասխանատու է ԵՄ-ում խոշոր բանկերի կարգավորման համար: Դա իրականացվում է «Մեկ վերահսկողական մեխանիզմի» (Single Supervisory Mechanism (SSM)) միջոցով: «Մեկ վերահսկողական մեխանիզմ»-ի հիմնական նպատակներն են՝ նպաստել վարկային հաստատությունների անվտանգությանն ու հուսալիությանը, եվրոպական ֆինանսական համակարգի կայունությանը և ապահովել համահունչ վերահսկողություն:

[9] "About Us," European Banking Authority, accessed June 13, 2019, https://eba.europa.eu/about-us.

Ինչպես պատկերված է Նկար 2-ում, Նիդերլանդներում Եվրոպական կենտրոնական բանկը համագործակցում է Նիդերլանդների Կենտրոնական բանկի (Dutch Central Bank (De Nederlandsche Bank)) և Նիդերլանդներում Ֆինանսական շուկաների մարմնի (Netherlands Authority for the Financial Markets (Autoriteit Financiële Markten)) հետ՝ բանկերին վերահսկելու համար:

Ապահովագրական գործունեության կարգավորող վերահսկողության կառուցվածքը ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում ապահովագրական ընկերություններն ավելի խիստ են կարգավորվում նահանգային մակարդակով, քան բանկային հաստատությունները: Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիան (International Association of Insurance Supervisors (IAIS)) սահմանում է համաշխարհային ստանդարտներ, բայց այդ ստանդարտները պետական ու նահանգային կանոնակարգերի և դիրեկտիվների հետ համատեղ են կազմում ապահովագրական ընկերությունների համար ընդհանուր կարգավորման համակարգը: Նահանգային կարգավորողները նահանգային կառավարությունների կողմից լիազորված են վերահսկել ապահովագրական ոլորտը և ներդնել ապահովագրական կանոնակարգումները: Նահանգային կարգավորողները (բոլորը Ապահովագրության հանձնակատարների ազգային ասոցիացիայի (National Association of Insurance Commissioners (NAIC)) անդամներ են) պատասխանատու են ապահովագրական ընկերությունների ֆինանսական վճարունակության ապահովման և փոխհատուցումների՝ արդար, համաձայն ապահովագրության պայմանագրերի, տրամադրման համար:

ԱՄՆ-ում ապահովագրական ոլորտի հիմնական երկու դաշնային կարգավորող մարմիններն են Ֆինանսական կայունության վերահսկման խորհուրդը (Financial Stability Oversight Council (FSOC)) և Ապահովագրության դաշնային գրասենյակը (Federal Insurance Office (FIO)): Երկու մարմիններն էլ հիմնադրվել են Դոդդ-Ֆրանկ ակտով (Dodd-Frank Act):[10] Ապահովագրության դաշնային գրասենյակը (Federal Insurance Office) տեղակայված է Գանձապետական դեպարտամենտի (Treasury Department) ներքո և այն ղեկավարում է Գանձապետարանի քարտուղարի կողմից նշանակված տնօրենը: Գրասենյակը ԱՄՆ կառավարությանը խորհրդատվություն է տրամադրում ապահովագրական հարցերի վերաբերյալ և մասնակցում է ապահովագրության հետ կապված միջազգային քննարկումների: Ապահովագրության դաշնային գրասենյակի (Federal Insurance Office) տնօրենը հանդիսանում է Ֆինանսական կայունության վերահսկման խորհրդի (Financial Stability Oversight Council) խորհրդատվական անդամ:

[10] Dodd-Frank Wall Street Reform and Consumer Protection Act of 2010. https://www.congress.gov/bill/111th- congress/house-bill/4173/text.

Ֆինանսական կայունության վերահսկման խորհուրդը (Financial Stability Oversight Council) մոնիտորինգի է ենթարկում ԱՄՆ ընդհանուր ֆինանսական համակարգը, ներառյալ՝ ապահովագրական ոլորտը: Նրա պատասխանատվության շրջանակի մեջ են մտնում այնպիսի ռիսկերի բացահայտումը, որոնք կարող են հանգեցնել համակարգային ճգնաժամերի, շուկայի կարգապահության խթանումը և ԱՄՆ ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող ռիսկերին արագ արձագանքը: Ֆինանսական կայունության վերահսկման խորհուրդը (Financial Stability Oversight Council) իրավասու է նույնականացնել ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունները և նրանց վերագրել համակարգային նշանակություն, ինչն այդ ընկերություններին բերում է Դաշնային պահուստային բանկի վերահսկողության դաշտ: Իր իրավասությունների շրջանակում Ֆինանսական կայունության վերահսկման խորհուրդը որոշ ապահովագրական ընկերությունների ճանաչել է ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններ:

Նահանգային մակարդակում ապահովագրական ընկերությունները պետք է համապատասխանեն նահանգային արժեթղթերի դեպարտամենտներին և Ապահովագրության հանձնակատարների ազգային ասոցիացիային (National Association of Insurance Commissioners), որը կազմված է բոլոր 50 նահանգներից ապահովագրության ոլորտի գլխավոր կարգավորողներից: Ասոցիացիան առանձին նահանգների կարգավորողների համար ծառայում է որպես հարթակ, որտեղ նրանք կոորդինացնում են իրենց գործունեությունը և կիսվում ռեսուրսներով: Ասոցիացիան նաև գործում է որպես խորհրդատվական և ծառայություններ մատուցող մարմին նահանգային ապահովագրության դեպարտամենտների համար՝ օգնելու նրանց իրենց վերահսկողական պարտականությունների կատարման գործում:

Նկար 3: Ապահովագրական գործունեության կարգավորող վերահսկողության կառուցվածքը ԱՄՆ-ում



Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

Ապահովագրական գործունեության կարգավորող վերահսկողության կառուցվածքը ԵՄ երկրներում

ԵՄ-ում ապահովագրական ընկերությունները ղեկավարվում են հարմոնիզացված պրուդենցիալ հայեցակարգով, որը հայտնի է որպես «Վճարունակություն 2» (Solvency 2) փաստաթուղթ: Բանկային ոլորտում գործող Բազել III-ի նման, «Վճարունակություն 2»-ը ապահովագրական ընկերություններից պահանջում է ունենալ կապիտալ՝ կախված իրենց **ռիսկի պրոֆիլներից**՝ երաշխավորելու համար, որ նրանք ունեն ֆինանսական դժվարություններին դիմակայելու ռեսուրսներ:

«Վճարունակություն 2»-ը նաև անդրադառնում է կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման, վերահսկողական հաշվետվողականության և տեղեկատվության հանրային բացահայտման պահանջներին:[11] «Վճարունակություն 2» դիրեկտիվը հրապարակվել է Եվրահանձնաժողովի կողմից, և ԵՄ երկրները պետք է վերածեն այդ դիրեկտիվը ազգային օրենսդրության: Եվրահանձնաժողովն աջակցում է ԵՄ երկրներին այս գործընթացում և հսկում է այն ազգային չափորոշիչների ընդունումը, որոնք առանձին երկրները որոշում են պահանջել: Օրինակ, Գերմանիայում, ինչպես ներկայացված է Նկար 4-ում, «Վճարունակություն 2»-ն ընդունվել է և վերահսկվում է Bundesanstalt fuer Finanzdienstleistungsaufsicht (BaFin) կողմից: BaFin-ը ստուգումների արդյունքների մասին զեկուցում է Եվրահանձնաժողովին և Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմնին (European Insurance and Occupational Pensions Authority (EIOPA)):

Նկար 4: Ապահովագրական գործունեության կարգավորող վերահսկողութան կառուցվածքը Գերմանիայում

Միջազգային ստանդարտներ սահմանող մարմին

1. Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպություն (International Organization of Securities Commissions)

Եվրոպական կարգավորողներ

2. Եվրահանձնաժողով (European Commission)
3. Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմին (European Insurance and Occupational Pensions Authority)

Պետական կարգավորող

4. Bundesanstalt fuer Finanzdienstleistungsaufsicht (BaFin)

JKL ապահովագրական ընկերություն, Ֆրանկֆուրտ, Գերմանիա

Բիզնես գործառույթները

- Գույք և դժբախտ պատահարներ
- Կյանք
- Անուիտետներ
- Առողջություն

Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

[11] "Risk management and supervision of insurance companies (Solvency 2)," European Commission, accessed June 13, 2019, https://ec.europa.eu/info/business-economy-euro/banking-and-finance/insurance-and-pensions/risk- management-and-supervision-insurance-companies-solvency-2_en.

Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմինը (European Insurance and Occupational Pensions Authority) Եվրահանձնաժողովին տրամադրում է տեխնիկական խորհրդատվություն՝ «Վճարունակություն 2»-ի և օրենքում ցանկացած փոփոխության վերաբերյալ: Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմնի (European Insurance and Occupational Pensions Authority) պարտականությունները նման են ԱՄՆ-ում Ֆինանսական կայունության վերահսկման խորհրդի (Financial Stability Oversight Council) պարտականություններին: Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմնի (European Insurance and Occupational Pensions Authority) պարտականություններից են նաև ֆինանսական համակարգի կայունությանը, շուկաների և ֆինանսական պրոդուկտների թափանցիկությանն աջակցելը, ինչպես նաև ապահովագրվող անձանց, կենսաթոշակառուների և շահառուների պաշտպանությունը: Այս մարմինը նաև մոնիտորինգի է ենթարկում ռիսկերը, որոնք կարող են հանգեցնել ԵՄ ֆինանսական ոլորտում համակարգային խնդիրների:

Ակտիվների կառավարման ոլորտի կարգավորող վերահսկողության կառուցվածքը ԱՄՆ-ում

ԱՄՆ-ում ակտիվների կառավարիչների կարգավորումը 1930-ականներից ի վեր էականորեն չի փոխվել: Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը (U.S. Securities and Exchange Commission) ԱՄՆ-ում ներդրումային ընկերությունների և ներդրումային խորհրդատուների հիմնական կարգավորողն է: Հիմնական օրենքը, որով կարգավորվում են ԱՄՆ ներդրումային ընկերությունները, «Ներդրումային ընկերության մասին» 1940 թվականի օրենքն է: «Ներդրումային ընկերության մասին» օրենքի ներքո Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովն (U.S. Securities and Exchange Commission) ընդունել է տարբեր կանոնակարգեր, որոնք ավելի մանրամասն են կարգավորում ներդրումային ընկերությունների գործունեությունը: Այս կանոնակարգերը հրապարակված են Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (Code of Federal Regulations (CFR)) 17-րդ գլխում, մաս 270: Ներդրումային ընկերությունները ենթարկվում են նաև արժեթղթերի մասին այլ դաշնային օրենքներին (օրինակ՝ 1933 թ. Արժեթղթերի մասին օրենք (Securities Act of 1933) և 1934 թ. Արժեթղթերի փոխանակման մասին օրենք (Securities Exchange Act of 1934)): Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովը (U.S. Securities and Exchange Commission) նաև ընդունել է տարբեր կանոնակարգեր, որոնք ընդհանուր առմամբ կիրառելի են ներդրումային ընկերությունների համար, այս օրենքների ներքո: [12]

[12] "An Introduction to the Regulation of Investment Companies," U.S. Securities and Exchange Commission, accessed June 13, 2019, https://www.sec.gov/investment/fast- answers/divisionsinvestmentinvcoreg121504htm.html#P46_2920.

1940 թ. «Ներդրումային խորհրդատուների մասին օրենք»-ի (Investment Advisers Act) համաձայն գրանցված ներդրումային ընկերություններում պորտֆելների կառավարմամբ զբաղվող անհատները պետք է գրանցվեն Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովում (U.S. Securities and Exchange Commission) որպես ներդրումային խորհրդատուներ: «Ներդրումային խորհրդատուների մասին օրենք»-ը և հանձնաժողովի կողմից այդ օրենքի ներքո ընդունված կանոնակարգերը կարգավորում են գրանցված ներդրումային խորհրդատուների գործունեությունը: Կանոնակարգերը հրապարակված են Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի (Code of Federal Regulations) 17-րդ գլխում, մաս 275:

Ֆինանսական ոլորտի կարգավորող մարմինը (Financial Industry Regulatory Authority (FINRA)) ԱՄՆ կառավարության մաս չի կազմում. այն վերահսկվում է Արժեթղթերի և բորսաների հանձնաժողովի կողմից: Այն շահույթ չհետապնդող կազմակերպություն է և հանդիսանում է ԱՄՆ-ում ամենամեծ ինքնակարգավորվող կազմակերպությունը (self-regulatory organization (SRO)) արժեթղթերի ոլորտում (ինքնակարգավորվող կազմակերպությունը անդամակցության վրա հիմնված կազմակերպություն է, որը անդամների համար մշակում և կիրառում է կանոններ՝ հիմնված դաշնային օրենքների վրա): Ֆինանսական ոլորտի կարգավորող մարմինը (Financial Industry Regulatory Authority) մասնակցում է բրոքեր-դիլերների լիցենզավորմանը և կարգավորմանը: Այն նաև ապահովագրության կարգավորման միջավայրի մի մասն է, քանի որ անուիտետներ վաճառելու համար ներկայացուցիչները պետք է ունենան Ֆինանսական ոլորտի կարգավորող մարմնի (Financial Industry Regulatory Authority) համապատասխան լիցենզիա:

Ակտիվների կառավարման ոլորտի կարգավորող վերահսկողության կառուցվածքը Եվրոպական միությունում

ԵՄ-ում ֆոնդերի կառավարման ոլորտն ընդգրկում է գործունեության լայն շրջանակ և բազմաթիվ սուբյեկտներ, այդ թվում՝ ֆոնդի ադմինիստրատորներ, դեպոզիտարներ, մասնագիտական ծառայություններ մատուցողներ (օրինակ՝ ռիսկերի կառավարման խորհրդատուներ) և գնահատողներ: Կան նաև տարբեր տիպի ֆոնդեր, որոնցից որոշները կարգավորվում են հատուկ օրենսդրությամբ, ներառյալ՝ կանոնակարգերը և «Եվրոպական վենչուրային կապիտալի ֆոնդեր» (Regulations and European Venture Capital Funds (EuVECA), «Եվրոպայի սոցիալական ձեռներեցության ֆոնդեր» (European Social Entrepreneurship Funds (EuSEF)) և «Եվրոպայի երկարաժամկետ ներդրումային ֆոնդեր» (European Long-term Investment Funds (ELTIF)) փաստաթղթերը:

Ընդհանուր առմամբ, ԵՄ ակտիվների կառավարիչների վրա ամենամեծ ազդեցություն ունեցող երեք հիմնական դիրեկտիվներն են.

1. Շրջանառվող արժեթղթերում կոլեկտիվ ներդրումների կազմակերպության դիրեկտիվը (Undertakings for Collective Investment in Transferable Securities Directive (UCITS)).
2. Այլընտրանքային ներդրումային ֆոնդի կառավարիչների դիրեկտիվը (Alternative Investment Fund Managers Directive (AIFMD))
3. Ֆինանսական գործիքների շուկաների դիրեկտիվ (Markets in Financial Instruments Directive (MiFID II)):

Արժեթղթերի և շուկայի եվրոպական մարմինը (European Securities and Market Authority (ESMA)) ակտիվ է կոլեկտիվ ներդրումների կառավարման ոլորտում, որը սովորաբար հայտնի է որպես ֆոնդերի կառավարում: Շրջանառվող արժեթղթերում կոլեկտիվ ներդրումների կազմակերպության դիրեկտիվի (UCITS) և Այլընտրանքային ներդրումային ֆոնդի կառավարիչների դիրեկտիվի (AIFMD) հետ կապված Արժեթղթերի և շուկայի եվրոպական մարմնի (ESMA) պարտականությունների շրջանակը ներառել է Եվրահանձնաժողովին տեխնիկական խորհրդատվության տրամադրումը, շուկայի մասնակիցների համար ուղեցույցների մշակումը, կարգավորող ստանդարտների պատրաստումն ու տեխնիկական ստանդարտների ներդնումը և կարծիքների թողարկումը: Չնայած ֆոնդերի կառավարման ոլորտում Արժեթղթերի և շուկայի եվրոպական մարմնի աշխատանքի մեծ մասը վերաբերում է վերոնշյալ դիրեկտիվներին, այն նաև աշխատանքներ է իրականացնում վենչուրային կապիտալի ֆոնդերի, սոցիալական ձեռնարկատիրության ֆոնդերի և երկարաժամկետ ներդրումային ֆոնդերի հետ կապված:

Ֆինանսական գործիքների շուկաների դիրեկտիվը (Markets in Financial Instruments Directive (MiFID II)) կազմված է ԵՄ կողմից ընդունված մի շարք օրենքերից, որոնց նպատակն է բարեփոխել ֆինանսական ծառայությունների ամբողջ ոլորտը: Դիրեկտիվը ազդում է ֆինանսական ծառայություններ մատուցող բոլոր կազմակերպությունների վրա, այնուամենայնիվ, այն ունի երկու հիմնական նպատակ, որոնք ավելի շատ ազդում են ակտիվների կառավարիչների վրա, քան մյուս կազմակերպությունների.

1. Կարգավորում է արտաբորսայական առևտուրը՝ այն, ըստ էության, տանելով դեպի պաշտոնական բորսաներ
2. Մեծացնում է ծախսերի թափանցիկությունը և բարելավում գործարքների հաշվառումը

Որպես օրինակ, Գերմանիայում ակտիվների կառավարիչները ուղղակիորեն վերահսկվում են BaFin-ի կողմից: BaFin-ն, սովորաբար, ընդունում է ուղեցույցները, որոնք թողարկվել են Եվրոպական բանկային մարմնի (EBA)- ի, Արժեթղթերի և շուկայի եվրոպական մարմնի (ESMA) և Ապահովագրության և կենսաթոշակների եվրոպական մարմնի (EIOPA) կողմից (միասին հայտնի որպես՝ Եվրոպական վերահսկողական մարմիններ (European supervisory authorities (ESA)): Որպես համատեղ կոմիտե՝ այս երեք կարգավորողները նաև թողարկում են ուղեցույցներ: BaFin-ը ակտիվների կառավարման խոշոր ընկերությունները ստուգում է մոտ երեք տարին մեկ, բայց առնվազն տարին մեկ անգամ կարգավորողը հանդիպում է ընկերության ղեկավարության հետ:

ՆԱԻ ֆինանսական ծառայությունների ռիսկերի հայեցակարգը

Կազմակերպության առջև ծառացած ռիսկերը պատշաճ կերպով կառավարելու համար աշխատակիցները պետք է հասկանան ռիսկերի կառավարման, համապատասխանության և ներքին աուդիտի հետ առնչվող տերմինաբանությունը: Կազմակերպություններում ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հաղորդման գործիքներից մեկը ռիսկերի հայեցակարգն է: ՆԱԻ-ի Ֆինանսական ծառայությունների ուղղորդման հանձնաժողովը (Financial Services Guidance Committee) մշակել է ռիսկերի համապարփակ հայեցակարգ հատուկ ֆինանսական կազմակերպությունների համար: Հայեցակարգը, որը ներկայացված է Նկար 5-ում, դիտարկում է գլոբալ առումով ֆինանսական ծառայությունների ոլորտին բնորոշ հիմնական ռիսկերը:

Կազմակերպությունները կարող են մշակել ռիսկերի հայեցակարգ՝ ելնելով իրենց կառուցվածքից, պրոդուկտների տեսակներից, չափից և այլ գործոններից: Յուրաքանչյուր ռիսկի ոլորտ պետք է սահմանվի և համապատասխանեցվի այն ֆինանսական կազմակերպությանը, որում այն կիրառվելու է: Ռիսկի վերաբերյալ միասնական մոտեցում ձևավորելը կազմակերպությունում գործող ռիսկերի կառավարման գործընթաց ունենալու կարևորագույն բաղադրիչն է: ՆԱԻ-ն առաջարկում է հետևյալ մոդելը, որը կարող է կիրառվել կամ, ըստ անհրաժեշտության, ադապտացվել կազմակերպությանը:

Նկար 5: ՆԱԻ ֆինանսական ծառայությունների ռիսկերի հայեցակարգ



Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

Կազմակերպության ռիսկի գործոնները

Ռազմավարական և հեղինակության ռիսկերը հայեցակարգի վերևում են, քանի որ դրանք հանդիսանում են կազմակերպության ռիսկի գերակա գործոններ:

Ռազմավարական ռիսկ – զուտ եկամտի՝ սահմանված շեմից ներքև անկման ռիսկն է հասույթի կամ հաստատուն ծախսերի անկանխատեսելի փոփոխությունների արդյունքում, որոնք կարող են պայմանավորված լինել ֆինանսական կազմակերպությունների մրցակցային միջավայրում միտումներով կամ նրանով, թե որքանով է կազմակերպությունը կարողանում ժամանակին ադապտացվել այդ միտումներին: [13]

[13] Arun Chockalingam, Shaunak Dabadghao, and Rene Soetekouw, "Strategic Risk, Banks, and Basel III: Estimating Economic Capital Requirements," *SSRN,* October 23, 2017, https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=3057235.

Հեղինակության ռիսկ – Հեղինակության ռիսկը կարող է սահմանվել որպես ռիսկ, որն առաջանում է հաճախորդների, գործընկերների, բաժնետերերի, ներդրողների, պարտատերերի, շուկայի վերլուծաբանների, այլ համապատասխան կողմերի կամ կարգավորողների բացասական ընկալման արդյունքում, ինչը կարող է բացասաբար ազդել բանկի գործող գործարար հարաբերությունները պահպանելու կամ նոր հարաբերություններ ստեղծելու կարողության, ինչպես նաև շարունակական ֆինանսավորում ստանալու հնարավորության վրա: Հեղինակության ռիսկը բազմաչափ է և արտացոլում է շուկայի այլ մասնակիցների ընկալումը: [14]

Ֆինանսական ռիսկեր

Ռիսկի հինգ սյուները ներկայացնում են ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ֆինանսական ռիսկերը:

Իրացվելիության ռիսկ –ֆինանսական կազմակերպության անկարողությունն է բավարարել ֆինանսական պահանջները, հաճախ այն պատճառով, որ կազմակերպությունը չի կարողանում այլ ակտիվներն՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու, վերածել իրացվելի կապիտալի:

Կապիտալի ռիսկ – գործունեությունը շարունակելու և, միևնույն ժամանակ, վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը և անկայունությունը կլանելու համար բավարար մակարդակի կապիտալ պահպանելու անկարողությունը:

Վարկային և գործընկերոջ ռիսկ – հավանականությունը, որ ֆինանսական կազմակերպությունը, վարկառուն կամ գործընկերը սահմանված կարգով չի կատարի իր պարտավորությունները:[15]

Շուկայական և տոկոսադրույքի ռիսկ – շուկայական գների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերում վնասի առաջանալու հավանականությունը: Ներառում է գնային և տոկոսադրույքի ռիսկերը:[16]

[14] "Basel SPR Supervisory Review Process No. 30 Risk Management" Basel Committee on Banking Supervision, Bank for International Settlements, January 2019, https://www.bis.org/basel_framework/chapter/SRP/30.htm?inforce=20190101&export=pdf&pdfid=15652719772036635.

[15] "Principles for the Management of Credit Risk," Basel Committee on Banking Supervision, Bank for International Settlements, July 1999, https://www.bis.org/publ/bcbs54.pdf.

[16] "Market risk," Regulation and policy, European Banking Authority, accessed June 17, 2019, https://www.eba.europa.eu/regulation-and-policy/market-risk.

Ապահովագրական ռիսկ – ապահովագրական պրոդուկտի մշակման և գնագոյացման փուլում արված նախնական կանխատեսումների համեմատ անբարենպաստ արդյունքների հետևանքով վնասի հավանականությունը: Սա բխում է ապահովագրական վկայագրի գնագոյացման հիմքում դրված սխալ ենթադրություններից (որքան ժամանակ է գործում ապահովագրության վկայագիրը առանց ուժը կորցնելու/փոխարինման [շարունակականություն], որքանով է առողջ ապահովագրվող անձը՝ ըստ ապահովագրական ընկերության [հիվանդացություն], ապահովագրվող անձի կյանքի սպասվող տևողության սխալ հաշվարկում [մահացություն] և այլն):

Ամբողջ կազմակերպությունը ներառող ռիսկի ոլորտներ

Սյուների տակ պատկերված չորս հորիզոնական ռիսկերը կարող են տեղի ունենալ միմյանց հետ խաչվելով և ազդել ամբողջ կազմակերպության վրա:

Մոդելների ռիսկ – Սխալ կամ սխալ կիրառված մոդելի արդյունքների ու հաշվետվությունների հիման վրա կայացված որոշումների պատճառով անբարենպաստ հետևանքների առաջացման հավանականությունը: [17]

Համապատասխանության ռիսկ – Ռիսկը, որ ֆինանսական կազմակերպությունը կենթարկվի իրավական կամ կարգապահական պատժամիջոցների, կկրի էական ֆինանսական կամ հեղինակության կորուստ՝ օրենքներին, կանոնակարգերին, կանոններին, ինքնակարգավորվող կազմակերպության ստանդարտներին կամ ֆինանսական գործունեության վարքագծային կանոններին չհամապատասխանելու արդյունքում: [18]

Գործառնական ռիսկ – Ոչ համարժեք կամ ձախողված ներքին գործընթացների, մարդկանց և համակարգերի կամ արտաքին իրադարձությունների հետևանքով վնաս կրելու ռիսկը:[19]

Ակտիվի/պարտավորության համապատասխանեցման ռիսկ –ակտիվների և պարտավորությունների միջև անհամապատասխանությունների հատևանքով

[17] "Supervisory Guidance on Model Risk Management," Federal Deposit Insurance Corporation, 2017, https://www.fdic.gov/news/news/financial/2017/fil17022a.pdf.

[18] "Compliance and the compliance function in banks," Basel Committee on Banking Supervision, Bank of International Settlements, April 2005, https://www.bis.org/publ/bcbs113.pdf.

[19] "Principles for the Sound Management of Operational Risk," Basel Committee on Banking Supervision, Bank of International Settlements, June 2011, https://www.bis.org/publ/bcbs195.pdf.

առաջացող ռիսկերի կառավարման պրակտիկա: Այն ներառում է այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ ակտիվների օպտիմալացման ռազմավարությունների կիրառման արդյունքում (օրինակ՝ իրացվելիություն, մարման ժամկետներ, տոկոսադրույքներ, ակտիվների դասերի խառնուրդ), որպեսզի ակտիվների ապագա դրամական հոսքերը առավելագույնս արդյունավետ կերպով համապատասխանեն ապագա պարտավորություններին:

Հիմք

Մշակութային և վարքագծային ռիսկը ընկած է ֆինանսական կազմակերպության հիմքում: Մշակույթը բնութագրում է կազմակերպության արժեքները, իսկ վարքագիծը ցույց է տալիս կազմակերպության հավատարմությունը այդ արժեքներին:

Մշակութային և վարքագծային ռիսկ – ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող տերմին է. բնութագրում է այն ռիսկերը որոնք կապված են այն հանգամանքից, թե ինչպես են կազմակերպությունները, դրանց աշխատակիցները, գործակալները ու խորհրդատուները հարաբերվում հաճախորդների և ավելի լայն ֆինանսական շուկաների հետ: [20]

Ռիսկերի գնահատումը ֆինանսական կազմակերպություններում

2010 – «Պլանավորում» ստանդարտի համաձայն. «Ներքին աուդիտի ղեկավարը պետք է կազմի ռիսկերի վրա հիմնված ծրագիր կազմակերպության նպատակներին համահունչ ներքին աուդիտի գործունեության գերակայությունները որոշելու համար:» Դա նշանակում է, որ ներքին աուդիտի հանձնառությունները պետք է պայմանավորված լինեն ոչ թե կարգավորողների պահանջներով, այլ ռիսկի մակարդակներով:

Իդեալական տարբերակում աուդիտորների կողմից իրականացվող ռիսկերի գնահատումը համահունչ է բիզնեսի բոլոր ոլորտներում կիրառվող ռիսկերի գնահատման մոտեցումների, մեթոդների 7 կատեգորիաների հետ: Այս կատեգորիաների ռիսկերը հաշվի առնելով ներքին աուդիտի հանձնառության պլանավորումը հաճախ կհանգեցնի կարգավորողների բազմաթիվ սպասելիքների բավարարմանը: Այնուամենայնիվ, այս կատեգորիաները միշտ չէ, որ ներառում են կարգավորողների պահանջները՝ կապված համապատասխանության խնդիրների կամ ոլորտում նոր առաջացող ռիսկերի հետ:

[20] "Conduct risk," Chartered Institute of Internal Auditors, March 1, 2018, https://www.iia.org.uk/resources/sector- specific-standards-guidance/financial-services/conduct-risk/?downloadPdf=true.

Կարգավորող մարմինների կողմից դեռևս չի եղել լիարժեք անդրադարձ խափանումների և սպառնալիքների հետ կապված էական ռիսկերին, ինչպիսիք արհեստական բանականությունը, ֆինանսական տեխնոլոգիաները, ռոբոտների միջոցով գործընթացների ավտոմատացումը և այլն: Հաճախ ֆինանսական կազմակերպությունները, կարգավորողների հայտնի պահանջներն բավարարելու հետ մեկտեղ, պետք է սովորեն բացահայտել, գնահատել և կառավարել նոր առաջացող ռիսկերը՝ իրենց ուղղորդող կարգավորման բացակայության պայմաններում:

Հանձնառության մակարդակով ռիսկերի գնահատման ժամանակ ներքին աուդիտորները պետք է ուսումնասիրեն աուդիտի ենթակա գործընթացի, ստորաբաժանման, ռիսկի կամ պրոդուկտի նախորդ աուդիտի կամ ստուգման աշխատանքային փաստաթղթերը, և հաշվի առնեն, թե երբ է ավարտվել ամբողջական շրջանակներով կամ նպատակային վերջին հանձնառությունը: Երբ ներքին աուդիտորները պլանավորում են հանձնառություններ, որոնք ներառում են ռազմավարական ռիսկեր կամ ռիսկեր որոնք առնչվում են տարբեր դեպարտամենտների կամ բիզնես գործառույթների հետ, նրանք պետք է հաշվի առնեն ամբողջ կազմակերպության համար կատարված ռիսկերի գնահատումը, եթե այդպիսինն առկա է:

Հանձնառության պլանավորում

Ռիսկերի գնահատման հիման վրա հանձնառության նպատակների և շրջանակների սահմանման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տե'ս «Հանձնառության պլանավորում. Նպատակների և շրջանակների սահմանում» ("Engagement Planning: Establishing Objectives and Scope.") ՆԱԻ գործնական ուղեցույցը:

Քանի որ ռիսկերի գնահատումները իրականացվում են ողջ կազմակերպությունում, և պաշտպանության երկրորդ գծի գործառույթները, ինչպիսիք են իրավաբանական, համապատասխանության և ռիսկերի կառավարման գործառույթները, կատարում են իրենց թեստավորման և մոնիտորինգի պարտականությունները, ռիսկերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ազատ կերպով տարածվի ամբողջ կազմակերպությունում: [21]

Ռիսկերի հուսալի կառավարման հիմնական սկզբունքները

Ֆինանսական ծառայությունների ոլորտի ներքին աուդիտորները պետք է ընդունեն ռիսկերի կառավարման արդյունավետ կառուցվածքի հիմնական տարրերի կարևորությունը: Հաստակ **ռիսկի ախորժակը** և ռիսկերի կառավարման հայեցակարգը առանցքային նշանակություն ունեն ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերության գործունեության համար:

Ռիսկի ախորժակ

Ներքին աուդիտորների ինստիտուտը սահմանում է ռիսկի ախորժակը որպես ռիսկի մակարդակ, որը կազմակերպությունը պատրաստ է ընդունել:[22] Կազմակերպությունները պետք է ներառեն ռիսկի ախորժակի սահմանումը իրենց **ռիսկի ռազմավարության** մեջ: Ըստ Եվրոպական բանկային մարմնի (European Banking Authority (EBA))՝ ղեկավարության պարտականությունները ներառում են կազմակերպության ընդհանուր ռիսկի ռազմավարության սահմանումը, հաստատումը և կիրառման վերահսկումը: Սա ներառում է նրանց ռիսկի ախորժակը, ռիսկերի կառավարման հայեցակարգը և միջոցառումները՝ երաշխավորելու համար, որ կառավարման մարմինը բավարար ժամանակ է տրամադրում ռիսկերի հետ կապված խնդիրներին: [23]

[21] Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission, Enterprise Risk Management–Integrating with Strategy and Performance, (Durham, NC: AICPA, 2017). https://bookstore.theiia.org/enterprise-risk-management- integrating-with-strategy-and-performance.

[22] *International Professional Practices Framework, 2017 Edition.* (Lake Mary, FL: Internal Audit Foundation, 2017), 243.

[23] "Guidelines on internal governance (revised), "Regulation and policy, Internal Governance, European Banking Authority. October 28, 2016, https://eba.europa.eu/regulation-and-policy/internal-governance/guidelines-on-internal- governance-revised-/-/regulatory-activity/consultation-paper.

Ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունները պետք է կարողանան ձևակերպել, ներկայացնել և ապահովել համապատասխանությունը համաձայնեցված ռիսկի ախորժակին, սակայն, միշտ չէ, որ դա այդպես է: Որոշ կազմակերպություններում **ռիսկի հիմնական ցուցանիշները** սահմանվում և հսկվում են գործադիրի մակարդակում, սակայն չեն հաղորդակցվում բիզնես գործառույթների մակարդակի հետ: Դա կարող է հանգեցնել հակասության սահմանված ռիսկի ախորժակի և կազմակերպության կողմից կրած կորուստների միջև, ինչպես ներկայացված է Նկար 6-ում:

Նկար 6: Ռիսկի ախորժակը՝ հակադրված կազմակերպության կրած կորուստներին



Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

Կազմակերպությունները կարող են դժվարությամբ կապել ռիսկի ախորժակը՝ այդ ախորժակն ապահովելու համար օգտագործվող չափանիշների հետ: Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները սովորաբար ունեն ռիսկի բարդ տեսակներ և, համապատասխանաբար, **ռիսկի սահմանաչափերի** բարդ կառուցվածք: Նաև կարող է դժվար լինել այդ չափանիշների ներկայացումը կազմակերպության համապատասխան աշխատակիցներին, վերջիններիս կողմից մոնիտորինգի իրականացման և դրանց վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման նպատակով: Կազմակերպության համար խելամիտ կլինի կենտրոնանալ առաջնային չափանիշների վրա, որպեսզի աուդիտի կոմիտեի, ղեկավարության և աշխատակիցների հետ ռիսկի ախորժակի և ռիսկի չափանիշների վերաբերյալ հաղորդակցությունը պարզեցվի: Սակայն, ինչպես ցույց է տրված Նկար 6-ում,

կազմակերպությունը կարող է դա ճիշտ իրականացնել և այնուամենայնիվ չապահովել սահմանված ռիսկի ախորժակը:

Ներքին աուդիտի դերը կայանում է նրանում, որ օբյեկտիվորեն որոշի՝ արդյոք **ռիսկի ախորժակի սահմանումները** կան, համարժեք են և հետևողականորեն գործադրվում և վերահսկվում են:

Ռիսկերի կառավարման դերերն ու պարտականությունները

Կարգավորողների համար կարևոր է խորհրդի մակարդակում ռիսկերի ներկայացվածությունն ու զեկուցումը, քանի որ նրանք ցանկանում են հավաստիանալ, որ խորհուրդը ստանում է թափանցիկ և հասկանալի հաշվետվություններ ճիշտ ժամանակին: Կարևոր է ունենալ ռիսկերի կառավարման փաստաթղթավորված կառուցվածք, որի միջոցով կազմակերպությունը հաղորդում է ռիսկերի վերաբերյալ տեղեկատվություն: Կորպորատիվ կառավարման հարցում ներքին աուդիտի դերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տե'ս ՆԱԻ կողմից թողարկված «Ներքին աուդիտի դերը կորպորատիվ կառավարման հարցում» (“Internal Audit’s Role in Corporate Governance.”) փաստաթուղթը: [24]

Համագործակցությունը պաշտպանության առաջին և երկրորդ գծերի միջև

Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները էապես տարբերվում են կախված նրանից, թե որքանով են լավ համագործակցում երկրորդ գծի գործառույթները (օրինակ՝ ֆինանսական հսկողություն, իրավաբանական գործառույթ, համապատասխանության գործառույթ, ռիսկերի կառավարում): Որոշ ֆինանսական կազմակերպություններ դեռևս աշխատում են առանձնացված խմբերով և ներքին աուդիտը իրականացնում է բիզնես (առաջին գծի) և երկրորդ գծի գործառույթների ավանդական աուդիտներ:[25] Երբեմն պատմական կազմակերպական կառուցվածքները լրացուցիչ դժվարություն են ավելացնում:

Հավաստիացման գործառույթներին ապավինումը

Տեղեկատվության համար, թե ինչպես մշակել հավաստիացման քարտեզ, տե'ս «Կոորդինացում և ապավինում. Հավաստիացման քարտեզի մշակում» (“Coordination and Reliance: Developing an Assurance Map.”) ՆԱԻ գործնական ուղեցույցը:

[24] The IIA Position Paper, “Internal Audit’s Role in Corporate Governance,” (The IIA: Lake Mary, FL, 2018), https://global.theiia.org/about/about-internal-auditing/Public%20Documents/Internal-Auditings-Role-in-Corporate- Governance.pdf.

[25] The IIA Position Paper. “The Three Lines of Defense in Effective Risk Management and Control,” (The IIA: Altamonte Springs, FL, 2013), https://global.theiia.org/standards- guidance/Public%20Documents/PP%20The%20Three%20Lines%20of%20Defense%20in%20Effective%20Risk%20Management%20and%20Control.pdf.

Եվրոպայում որոշ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ համապատասխանության գործառույթը բաժանում են երկու դեպարտամենտների. մեկը կենտրոնանում է կարգավորմանը համապատասխանության վրա, իսկ մյուսը՝ ներդրումային համապատասխանության վրա (հետևում է սահմանաչափերի խախտումներին): Այս կառուցվածքը դժվարություններ է ավելացնում, քանի որ գործառույթները տարանջատված են, և յուրաքանչյուր գործառույթ ունի առանձին հաշվետվողականության ուղի՝ ղեկավարության միջոցով դեպի խորհուրդ: Սա ստեղծում է իրավիճակ, որը ներքին աուդիտից պահանջվում է իրականացնել հանձնառություններ համապատասխանության երկու ոլորտներում և դրանք առանձին վերլուծել: Այնուամենայնիվ, ներկայիս կարգավորման միջավայրում այս մոտեցումները դառնում են ծախսատար և պակաս արդյունավետ: Ֆինանսական ծառայություններ մատուցող շատ կազմակերպություններ երկրորդ գծի գործառույթների համար միմյանց հետ պրոակտիվ կերպով հաղորդակցվելու միջոցներ են մշակում, որպեսզի աուդիտի գործառույթը մնա արդյունավետ ու ինքն իրեն չսպառի, և կազմակերպությունում ապահովվի ռիսկերի պատշաճ ընդգրկվածություն:

Գլոբալ առումով, փոքր ֆինանսական կազմակերպությունները կարող են ունենալ ռիսկերի կառավարման կոմիտե: Որոշներից պահանջվում է ունենալ աուդիտի կոմիտե, և բոլորը պետք է ունենան ռիսկերի կառավարիչ և համապատասխանության պատասխանատու: Այնուամենայնիվ, սահմանափակ ռեսուրսների և կազմակերպության ներսում մարդկանց թվաքանակի պատճառով, ռիսկի և աուդիտի կոմիտեները հաճախ միավորվում են: Որոշ բանկերում գործադիր ղեկավարը (օրինակ՝ գործադիր տնօրենը/ նախագահը) նաև հանդիսանում է ռիսկերի կառավարման ղեկավար: Այս կառուցվածքը ստեղծում է մի իրավիճակ, երբ ներքին աուդիտորը պետք է ավելի ուշադիր ստուգի կազմակերպությունում ռիսկերի կառավարումը, քանի որ գործադիր ղեկավարն է վերահսկում ոլորտը, որի վերաբերյալ նա նաև որոշումներ է կայացնում, ինչը կարող է հանգեցնել շահերի բախման: Ներքին աուդիտորները պետք է ավելի շատ ներգրավված լինեն, ավելի շատ թեստավորումներ իրականացնեն և ավելի խորը պատկերացում կազմեն այն մասին, թե գործող ֆինանսական կազմակերպություններում ռիսկերի կառավարման ինչ տեսակներ պետք է առկա լինեն կառավարման այս կառուցվածքի ներքո:

Երկրորդ գծի գործառույթների և ներքին աուդիտի միջև փոխհարաբերությունների բարելավման համար մոտեցումներից մեկը կարող է լինել փաստաթղթի ստեղծումը, որում նշված կլինեն յուրաքանչյուր թիմի դերերն ու պարտականությունները պաշտպանության երկրորդ և երրորդ գծերում (օրինակ՝ ռիսկերի կառավարում, համապատասխանություն,

իրավական գործառույթ և ներքին աուդիտ):[26] Ապահովագրական համաշխարհային մի ընկերություն ստեղծել է փաստաթուղթ, որում նշվում են պաշտպանության երեք գծերից յուրաքանչյուրի հստակ դերերն ու պարտականությունները՝ կապված ռիսկի և հսկողության հետ: Այն հաստատվում է գործադիր թիմի կողմից և պարբերաբար ներկայացվում է խորհրդին: Պաշտպանության երկրորդ և երրորդ գծերի եռամսյակային հանդիպումների ժամանակ քննարկվում են յուրաքանչյուր բիզնես գործառույթի կամ ռիսկի ոլորտի նախագծերը: Իրավաբանական և համապատասխանության գործառույթները կատարում են իրենց ավելի մանրամասն հետազոտությունները և կարող են ներքին աուդիտից վերցնել համապատասխան աուդիտների արդյունքներ, որոնք կարող են օգտակար լինել: Երկրորդ գծի գործառույթները և ներքին աուդիտը նաև համակարգում են իրենց աշխատանքը ծրագրերի մշակման և փոփոխությունների ժամանակ, որպեսզի աջակցեն հիմնական ռիսկերի համապարփակ ընդգրկմանը և խուսափեն բիզնեսում աուդիտի ինքն իրեն սպառելուց: Բացի այդ, այս ընկերության ներքին աուդիտը գործադիր ղեկավարների հետ տարեկան ռիսկերի գնահատման հարցազրույցներում ներառում է համապատասխանության, իրավական և ռիսկերի գործառույթները:

Ենթադրելով, որ ներքին աուդիտի գործառույթը պահպանում է իր անկախությունն ու օբյեկտիվությունը՝ առանձնացված հատուկ փորձառություն և աշխատանքի նեղ շրջանակներ ունեցող գործառույթների կրճատումը, և փոխհարաբերությունների (ինչպիսիք են՝ ընդհանուր հաղորդակցությունը, արդյունքներով փոխանակումը և ոլորտները միասին գնահատելու նպատակով աուդիտի ընթացքում համագործակցությունը) ընդլայնումն ապահովում է ավելի լավ ներըմբռնում: Մտքերի բազմազանությամբ ավելի լայն տեսակետը թույլ է տալիս ավելի արագ բացահայտել կոնկրետ թեմային վերաբերող և համակարգային խնդիրները:

Նման կոորդինացումն անսովոր է, բայց քանի որ դրա՝ հնարավոր լինելու մասին իրազեկվածությունն աճում է, ավելի շատ ֆինանսական կազմակերպություններ են սկսում ուսումնասիրել, թե ինչպես կարող են խթանել դեպարտամենտների միջև համագործակցությունը ռիսկի ոլորտները ավելի լավ գնահատելու և բիզնեսին ծառայելու համար:

[26] The IIA Position Paper, "The Three Lines of Defense in Effective Risk Management and Control."

Բիզնես գործառույթների, երկրորդ գծի գործառույթների և ներքին աուդիտի փոխհարաբերությունների հնարավորինս օգտագործելը

2050 – «Կոորդինացում և Ապավինում» ստանդարտի համաձայն. «Անհրաժեշտ է, որ ներքին աուդիտի ղեկավարը տեղեկատվություն փոխանակի, կոորդինացնի գործունեությունը և հաշվի առնի հավաստիացման կամ խորհրդատվական այլ ներքին կամ արտաքին ծառայություններ մատուցողների աշխատանքի վրա հիմնվելու հնարավորությունը՝ գործողությունների կրկնությունը նվազեցնելու և աշխատանքների պատշաճ ընդգրկվածություն ապահովելու նպատակով»: Կարգավորողների և համապատասխան վերահսկող մարմինների կողմից պարտադիր պահանջների ստանձնումը ստանդարտի այս դրույթը շատ կարևոր է դարձնում: Ինչպես անդրադարձ է կատարվում «Կոորդինացում և ապավինում. Հավաստիացման քարտեզի մշակում» (“Coordination and Reliance: Developing an Assurance Map.”) ՆԱԻ գործնական ուղեցույցում. «հավաստիացման ծառայություններ մատուցող տարբեր կողմեր աջակցում են ընդհանուր, կազմակերպության մասշտաբով ռիսկերի և հսկողության համակարգին՝ միասին հավաստիացնելով, որ ռիսկերը բացահայտվում են և զսպվում մինչև ընդունելի մակարդակ»: Պահանջներին բավարարելու համար հավաստիացման քարտեզի փաստաթղթավորումը միշտ պետք է կազմի ներքին աուդիտի պլանավորման գործընթացի մաս:

Տեսականորեն, կազմակերպությունը պետք է կարողանա գործել առանց երկրորդ գծի գործառույթների կամ ներքին աուդիտի գործառույթի: Փոքր կազմակերպություններում համապատասխանության հիբրիդային թիմը կարող է ունենալ նաև ռիսկերի կառավարման պարտականություններ: Այնուամենայնիվ, եթե կազմակերպությունը սկսում է միավորել ավելի շատ գործառույթներ, դա կարող է հանգեցնել շահերի բախման ռիսկի, որը վնասում է **հսկողության միջավայրին**: Նկար 7-ը ներկայացված են տարբեր համակցություններ և որոշակի նկատառումներ:

Նկար 7: Հսկողության կառուցվածքի տարբերակներ

Սցենար 1	
Բիզնես անձնակազմ	Ղեկավարություն
Երկրորդ գծի գործառույթներ	Համապատասխանություն + Ռիսկերի կառավարում + Տվյալների գաղտնիության պատասխանատու (պահանջվում է Եվրոպայում Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգով (GDPR))[27] + Փողերի լվացման դեմ պայքար
Ներքին աուդիտ	Ներքին աուդիտ

Նկատառումներ

Սա փոքր կազմակերպություններում ամենահաճախ հանդիպող կառուցվածքն է: Եթե ռիսկի, համապատասխանության, տվյալների գաղտնիության (ԵՄ-ում) և փողերի լվացման դեմ պայքարի գործառույթները համատեղ են, ապա առկա է ռիսկի ու համապատասխանության գործառույթների ներըմբռնում և օժանդակություն: Բացի այդ, ռիսկի և համապատասխանության գործառույթները տրամադրում են հայեցակարգը, որն օգտագործվում է ղեկավարության կողմից, երբ նրանք իրականացնում են բիզնեսում ռիսկերի և հսկողությունների ինքնագնահատումներ (Risk and control self-assessments (RCSA): Սա դեռևս թույլ է տալիս երկրորդ գծի գործառույթներին, այդ թվում՝ տվյալների գաղտնիության պատասխանատուին և փողերի լվացման դեմ պայքարի գործառույթի աշխատակիցներին, ձևավորել գործընթացներ համապատասխանության ռիսկը կառավարելու և կարգավորողների ակնկալիքները հասկանալու համար: Սա նաև թույլ է տալիս ռիսկերի կառավարման անձնակազմին մշակել և իրականացնել ֆինանսական կազմակերպության ռիսկերի և հսկողությունների հետ կապված գործունեությունը: Ներքին աուդիտը վերահսկում է և կարող է ստուգել և գնահատել ռիսկի, համապատասխանության, տվյալների գաղտնիության և փողերի լվացման դեմ պայքարի ոլորտներում գտնվողների աշխատանքը:

Սցենար 2	
Բիզնես անձնակազմ	Ղեկավարություն
Երկրորդ գծի գործառույթներ	Ռիսկերի կառավարում + Տվյալների գաղտնիության պատասխանատու (պահանջվում է Եվրոպայում Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգով (GDPR)) + Փողերի լվացման դեմ պայքար
Ներքին աուդիտ	Ներքին աուդիտ + Համապատասխանություն

Նկատառումներ

Եթե միավորված են համապատասխանության և ներքին աուդիտի գործառույթները, ապա հսկողություն իրականացնելու և ռիսկերը կառավարելու համար ղեկավարության պատասխանատվությունն էլ ավելի առանցքային նշանակություն ունի: Ավելին, ներքին աուդիտը չի կարող իրականացնել աուդիտորական հանձնառություններ կազմակերպության համապատասխանության գործառույթի վերաբերյալ, ինչի արդյունքում ռիսկի մի զգալի ոլորտ մնում է չընդգրկված: Այս կառուցվածքը նաև թույլ չի տալիս համապատասխանության մասնագետներին՝ մշակել և ներդնել համապատասխանության կառավարման համակարգեր, որոնք կօգնեին ղեկավարությանը կարգավորման բարդ ոլորտում: Համապատասխանության գործառույթի անձնակազմը կսահմանափակվի զուտ թեստավորումների վրա կենտրոնացած դերով:

[27] General Data Protection Regulation (GDPR) legislation requires the data privacy officer be independent of management and internal audit.

Նկար 7: Հսկողության կառուցվածքի տարբերակներ (շարունակություն)

Սցենար 3	
Բիզնես անձնակազմ	Ղեկավարություն
Երկրորդ գծի գործառույթներ	Տվյալների գաղտնիության պատասխանատու (պահանջվում է Եվրոպայում Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգով (GDPR)) + Փողերի լվացման դեմ պայքար
Ներքին աուդիտ	Ներքին աուդիտ + Համապատասխանություն + Ռիսկերի կառավարում

Նկատառումներ

Այս սցենարը չի նախատեսում մոնիտորինգի և կանխարգելման որևէ մակարդակ ղեկավարության և ներքին աուդիտի միջև ՝ բացի տվյալների գաղտնիության պատասխանատուից և փողերի լվացման դեմ պայքարի գործառույթի անձնակազմից: Ներքին աուդիտորներն աշխատում են երկրորդ գծի գործառույթների և ներքին աուդիտի պատասխանատվության ոլորտներում: Ներքին աուդիտը հնարավորություն չունի թեստավորել և գնահատել համապատասխանության և ռիսկերի կառավարման գործառույթները կամ ռիսկայնության նրանց դատողությունները, քանի որ չի ստացվի խուսափել իր իսկ պատասխանատվության ոլորտների աուդիտ իրականացնելուց: Նույնիսկ եթե ներքին աուդիտի գործառույթն արտապատվիրակվի, կազմակերպության ներսում որևէ մարմին պատասխանատու է այդ գործառույթի վերահսկման համար, ինչը նշանակում է, որ ծառայություններ մատուցողը զեկուցում է այդ մարմնին և, ամենայն հավանականությամբ, չունի անմիջական հասանելիություն աուդիտի կոմիտեին: Այս սցենարի պարագայում ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունը սովորաբար ռիսկերի կառավարման և համապատասխանության գործառույթների ստուգումներն ամբողջությամբ կամ մասամբ արտապատվիրակում է երրորդ անձի՝ ավելի օբյեկտիվ/անկախ գնահատման համար:

Միակ իրավիճակը, որի դեպքում այս համակցությունը կարող է աշխատել, այն է, երբ ներքին աուդիտի գործառույթն արտապատվիրակված է այլ ընկերության, և այդ ընկերությունն անմիջական հասանելիություն ունի աուդիտի կոմիտեին: Այդ դեպքում, կառուցվածքը նման կլինի առաջին սցենարի տարբերակին՝ համապատասխանության/ռիսկերի կառավարչի կողմից արտապատվիրակված ներքին աուդիտի ընկերությանը սահմանափակ վարչական աջակցության տրամադրմամբ:

Սցենար 4	
Բիզնես անձնակազմ	Ղեկավարություն + Համապատասխանություն + Ռիսկերի կառավարում + Փողերի լվացման դեմ պայքար
Երկրորդ գծի գործառույթներ	Տվյալների գաղտնիության պատասխանատու (պահանջվում է Եվրոպայում Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգով (GDPR))
Ներքին աուդիտ	Ներքին աուդիտ

Նկատառումներ

Կրկին, ղեկավարության և ներքին աուդիտի միջև չկա պաշտպանության երկրորդ մակարդակ՝ բացի տվյալների գաղտնիության պատասխանատուից, ով, կանոնակարգման համաձայն, պետք է անկախ լինի: Ֆինանսական ծառայություններ մատուցող շատ կազմակերպություններ ունեն աշխատակիցներ, որոնք տեխնիկապես հաշվետու են ղեկավարությանը, բայց կատարում են երկրորդ գծի գործառույթների պարտականություններ: Շատ կազմակերպություններ նաև ունեն աշխատակիցներ, որոնք տեխնիկապես հաշվետու են երկրորդ գծի գործառույթներին, բայց կատարում են ղեկավարության պարտականություններ: Այս կառուցվածքի տարբերակում երկրորդ գծի գործառույթները ներառված է ղեկավարության կազմում, ինչի պարագայում նրանք չեն կարող գործել որպես ղեկավարությանը օբյեկտիվ հակակշիռ և հսկողություն: Այս դեպքում ներքին աուդիտը դառնում է թեստավորումներն իրականացնելու և խնդիրները բացահայտելու կազմակերպության միակ գործիքը:

Շահերի բախման մեկ այլ դեպք կարող է առաջացնել նոր համակարգի կամ գործընթացի իրականացման համար ներքին աուդիտին պատասխանատու դարձնելը: Ներքին աուդիտորները կարող են ներգրավվել որպես խորհրդատու՝ ուշադրություն հրավիրելով ռիսկերի և նկատառումների վրա: Այնուամենայնիվ, եթե ներքին աուդիտը պատասխանատու է համակարգի կամ գործընթացի նախագծման և իրականացման համար, ապա, համաձայն 1100 - «Անկախություն և օբյեկտիվություն» ստանդարտի, նրանք կզրկվեն այդ համակարգի կամ գործընթացի թեստավորում և գնահատում իրականացնելու իրավունքից:

Ենթադրելով, որ կազմակերպությունն ունի ներքին աուդիտի և երկրորդ գծի գործառույթների միջև պատշաճ պարտականությունների տարանջատում, կան որոշակի գործողություններ և բնութագրեր, որոնք կարող են երկու գործառույթների և ղեկավարության միջև փոխհարաբերությունները արդյունավետ դարձնել:

Եթե երկրորդ գծի գործառույթները և ներքին աուդիտը միասին են աշխատում, տվյալ սիներգիան պետք է հանգեցնի մեթոդաբանության կատարելագործման նպատակով, ոլորտում նոր կանոնակարգերի և ուղեցույցների կամ այլ զարգացումների ավելի արդյունավետ բացահայտման: Օրինակ, Պորտուգալիայում, բանկի համապատասխանության գործառույթը սովորաբար պատասխանատու է նոր կանոնակարգերի կամ գործող կանոնակարգերում փոփոխությունների բացահայտման համար: Սա տեղեկատվություն է, որը անհրաժեշտ է ոչ միայն ղեկավարությանը, այլ նաև ներքին աուդիտին, որպեսզի նրանք համապատասխանաբար փոփոխեն աուդիտի պլաններն ու ծրագրերը: Կանոնակարգերը, ինչպիսիք են Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (GDPR), ՖՀՄՍ 9, Եվրոպական կենտրոնական բանկի Anacredit-ը, Փողերի լվացման դեմ պայքարի կանոնակարգը, Ֆինանսական գործիքների շուկաների դիրեկտիվը (Markets in Financial Instruments Directive (MiFID II)) և այլն, արմատապես փոխվել են երկու տարվա ընթացքում՝ պահանջելով, որ կազմակերպությունները նոր պահանջների վերաբերյալ ժամանակին և ճշգրիտ տեղեկատվություն ունենան գործընթացներում փոփոխությունները պատշաճ կերպով իրականացնելու համար:

Կոորդինացման մեկ այլ կարևոր ուղղություն է ռիսկերի գնահատումը: Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների մեծ մասում ռիսկերի գնահատում իրականացնում են ռիսկերի կառավարման պատասխանատուները: Յուրաքանչյուր դեպարտամենտ կարող է ունենալ ռիսկի գծով աշխատակից, ով հաշվետու է ռիսկերի կառավարման դեպարտամենտին և պատասխանատու է գործառնական ռիսկերի գնահատումների տվյալների բազայի վարման և թարմացման համար: Ռիսկի

գծով աշխատակիցները գնահատում են ռիսկերը և հսկողական մեխանիզմների որակն ու բավարար լինելը:

Եթե կազմակերպությունը գործառնական ռիսկերի կատեգորիայում ներառում է բնական աղետների կամ այնպիսի միջադեպերի ռիսկերը, ինչպիսիք են՝ SS խափանումները կամ համաճարակը, ռիսկի գծով աշխատակիցները կարող են պատասխանատու լինել բիզնեսի վրա ազդեցության վերլուծության (որը բիզնեսի անընդհատության պլանի էական մաս է) գնահատման համար: Ռիսկերի կառավարման դեպարտամենտի դերն է ապահովել, որ բոլոր մյուս բիզնես ռիսկերը (շուկայական, իրացվելիության, վարկային, SS, հեղինակության) ենթարկվեն մոնիտորինգի: Համապատասխանության գործառույթի կողմից մոնիտորինգի են ենթարկվում միայն համապատասխանության ռիսկերը (իրավական և փողերի լվացման դեմ պայքարի), ինչը դարձնում է ռիսկերի կառավարման, երկրորդ գծի այլ գործառույթների և ներքին աուդիտի միջև հաղորդակցությունը խիստ կարևոր:

Ներքին աուդիտի պարտականությունները

2000 – «Ներքին աուդիտի գործառույթի կառավարում» ստանդարտի համաձայն. «Ներքին աուդիտի ղեկավարը՝ պետք է արդյունավետ կերպով կառավարի ներքին աուդիտի գործառույթը՝ երաշխավորելով, որ այն արժեք է ստեղծում կազմակերպության համար:» Ավելին, ստանդարտի մեկնաբանության մեջ նշվում է, որ «Ներքին աուդիտի գործառույթն արժեք է ավելացնում կազմակերպությանը և նրա շահագրգիռ անձանց, երբ հաշվի է առնում ռազմավարությունը, նպատակները և ռիսկերը, առաջարկներ է ներկայացնում կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների ամրապնդման համար և անաչառ կերպով տրամադրում է համապատասխան հավաստիացում:» Արժեք ավելացնելու համար ներքին աուդիտը պետք է բացահայտի և հասկանա շահագրգիռ անձանց սպասելիքները, իրականացնի ռիսկերի գնահատում, որի հիման վրա կկազմվի աուդիտ պլան, և ղեկավարությանն ու աուդիտի կոմիտեին կտրամադրվի հավաստիացում ռիսկերի հիմնական ոլորտների վերաբերյալ:

Ներքին աուդիտի գործառույթը հանձնառությունների պլանավորումն իրականացնում է կազմակերպության կարիքներին համապատասխան: Ներքին աուդիտի ղեկավարների կողմից պետք է ընդգրկվեն կազմակերպության բարձր ռիսկայնության ոլորտները, որոնց ոչ ճիշտ կառավարումը կարող է վտանգել կազմակերպության նպատակների իրագործումը: Բացի այդ, ներքին աուդիտի ղեկավարները պետք է նաև հետևեն կանոնակարգման պահանջներին, շարունակեն պարբերական (ցիկլային) աուդիտների իրականացումը և պատշաճ կերպով կառավարեն հասանելի ռեսուրսները:

Հանձնառությունների ռեսուրսներով ապահովումը

Աուդիտի տարեկան պլանը սովորաբար հիմնված է կազմակերպության նպատակների հետ կապված ռիսկերի վրա: Ֆինանսական կազմակերպությունները կարող են ունենալ գերակա ռազմավարական նպատակներ և գործել բիզնես գործառույթների, երկրների կամ տարածաշրջանների կողմից սահմանված նպատակների իրականացման ուղղությամբ: Եթե ռազմավարական նպատակներ սահմանված չեն, ներքին աուդիտորները կարող են ուղղակիորեն կապվել ղեկավարության հետ՝ փաստաթղթավորելու այն նպատակները, որոնց ակնկալվում է հասնել տարվա ընթացքում: Ներքին աուդիտորները կարող են նաև ծանոթանալ գործադիր ղեկավարության և խորհրդի նիստերի արձանագրություններին և վերջին կանոնակարգերին՝ հասկանալու համար, թե ինչպես կարող են փոփոխություններն ազդել իրենց կազմակերպությունների վրա:

Ներքին աուդիտի այլ գործառույթներ իրականացնում են ռիսկի գնահատումներ, որոնք մանրամասն նկարագրում են կազմակերպության հիմնական ոլորտները՝ դիտարկելով բնորոշ ռիսկը, հսկողական միջավայրի ցուցանիշները և մնացորդային ռիսկը: Սովորաբար անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել նաև ցիկլը, քանի որ ռիսկերի վրա հիմնված աուդիտները կարող են փոխվել: Այս մոտեցման դեպքում ամեն տարի կիրականացվեն բարձր ռիսկային ոլորտների աուդիտները, ինչպես նաև ցածր ռիսկային ոլորտների աուդիտների մի մասը՝ կախված հասանելի հմտություններից ու ռեսուրսներից: Ներքին աուդիտը պետք է աշխատի գործադիր ղեկավարության և խորհրդի հետ՝ գործառույթի առաջնահերթությունները՝ կազմակերպության նպատակներին համահունչ, սահմանելու համար: Այդ տեղեկատվությունը ունենալով, համաձայն 2010 – «Պլանավորում» ստանդարտի, ներքին աուդիտի ղեկավարը պետք է կազմի ռիսկերի վրա հիմնված ծրագիր: Մասնավորապես, 2010.Հ2 ստանդարտը պահանջում է, որ Ներքին աուդիտի ղեկավարը՝ ներքին աուդիտի կարծիքներ կամ այլ եզրակացություններ կազմելիս, հասկանա և հաշվի առնի գործադիր ղեկավարության, խորհրդի և այլ շահագրգիռ անձանց ակնկալիքները: Ի լրումն, 1111 – «Խորհրդի հետ անմիջական փոխհարաբերություն» ստանդարտը պահանջում է, որ ներքին աուդիտի ղեկավարը անմիջականորեն հաղորդակցվի և համագործակցի Խորհրդի հետ: Այս գործընթացը կարող է օգտակար լինել ղեկավարության՝ կարգավորողներից ստացած պահանջների և/ կամ նոր, դեռևս չիրագործված պրոդուկտների և գործընթացների մասին ներքին աուդիտին զգուշացնելու հարցում:

Ավելի փոքր կազմակերպություններում ներքին աուդիտի գործառույթը կարող է ստիպված լինեն էլ ավելի նեղացնել իր շրջանակը, միգուցե վերլուծելով

«ամենակարևոր գործառույթները», կամ նրանք, որոնք հսկողության հնարավոր բացեր ունեն, վերահսկվում են մի քանի ընտրված անձանց կողմից և կարող են էական ազդեցություն ունենալ կազմակերպության վրա, եթե ինչ-որ բան սխալ գնա: Այս գործառույթները միշտ չէ, որ ունեն ամենաբարձր գնահատված ռիսկերը, բայց դրանց ներկայացրած ռիսկերը կարող են լինել ավելի բարձր գնահատված ռիսկերի բաղադրիչներ:

Օրինակ, ներքին աուդիտի գործառույթը կարող է պատմականորեն համարել, որ բանկի փոքր մասնաճյուղերը բարձր ռիսկային չեն, քանի որ դրանք մանրակրկիտ կերպով կառավարվում են և ուշադիր են ներքին հսկողությունների ներդրման հարցում: Այս պարագայում, ներքին աուդիտը կարող է որոշել խնայել ռեսուրսները՝ ցածր ռիսկային փոքր մասնաճյուղերում անցկացնելով հեռավար աուդիտներ և տեղում աուդիտներ անցկացնելով միայն մեծ մասնաճյուղերում: Սա պետք է լինի փոփոխելի/ճկուն պլան, եթե, օրինակ, փոքր մասնաճյուղն իրագործում է նոր պրոդուկտ (օրինակ՝ տեղում կրեդիտ քարտերի թողարկում) կամ կատարում է այլ գործունեություն, որը որակվում է որպես բարձր ռիսկային: Այս դեպքում ներքին աուդիտի գործառույթը կարող է նախընտրել անցկացնել մասնաճյուղի աուդիտ տեղում: Ճկուն պլանները ներքին աուդիտորներին թույլ են տալիս թեստավորման աշխատանքներ կատարել, երբ կա անհրաժեշտություն:

Ներքին աուդիտի որոշ գործառույթների առավելություն է հիմնական ադմինիստրատիվ համակարգում ինտեգրված աուդիտի համակարգ ունենալը: Այդպիսի ինտեգրված աուդիտի համակարգ ունենալը կարող է զգալի արդյունավետություն ապահովել: Ահա ֆինանսական կազմակերպությունների մի քանի օրինակներ, որոնք օգտագործում են ծրագրեր՝ ինտեգրված աուդիտի համակարգի մշակմանն աջակցելու համար:

- Հիփոթեքային ծառայություններ մատուցող խոշոր կազմակերպությունում հիփոթեքային վարկավորման համար աուդիտը կարող է բացահայտել մինչև 1,500 հսկողական միավորներ: Ծրագիրը թույլ է տալիս հասկանալ արդյոք ղեկավարությունը և ռիսկերի կառավարումը ցանկացած պահի համապատասխանում են ընդունելի սահմանաչափերին: Այն նաև թույլ է տալիս ներքին աուդիտին տեսնել առավել հաճախ կրկնվող սխալները և տվյալների վերլուծության միջոցով ուսումնասիրել, արդյոք այդ սխալները կապված են գործընթացում արդյունավետության պակասի հետ: Սա կարող է հնարավորություն տալ գործառույթին՝ առաջարկել գործողություններ սխալները շտկելու համար:
- 2,500 մասնաճյուղ ունեցող կազմակերպությունում ներքին աուդիտի գործառույթը իր ծրագրում

պահպանում է մասնաճյուղերի բոլոր աուդիտների տվյալները՝ իրական ժամանակում ներկա և նախկին տեղեկատվությունը տեսնելու համար: Նրանք զտում են նախորդ աուդիտների դիտարկումները և նայում մակրո մակարդակով, թե ինչ է տեղի ունենում ընդհանրապես բանկի մասնաճյուղերում:

- Եթե ներքին աուդիտը օգտագործում է ինտեգրված համակարգ, որը պարունակում է նաև համապատասխանությանը վերաբերող տեղեկատվությունը, նրանք կարող են նաև հասանելիություն ունենալ պայմանագրերին, նոր կանոնակարգերին կամ նոր պրոդուկտներին: Ներքին աուդիտորները կարող են ուսումնասիրել պլանավորված աուդիտ(ներ)ին առնչվող ոլորտները և աշխատել սցենարներով՝ օգտագործելով նախկին տեղեկատվությունը: Այս վերլուծությունը կարող է օգնել ներքին աուդիտորներին՝ բացահայտել հիմնական հսկողական միավորների առկայությունն ու արդյունավետությունը և կարող է հանգեցնել նրան, որ ներքին աուդիտորները փոփոխեն իրենց ընթացակարգերը, քանի որ նրանք վստահություն են ձեռք բերում ղեկավարության գործողությունների նկատմամբ:

- Ինտեգրված համակարգերը կարող են նաև նույնականացնել առանձին աուդիտորներին, որոնք հանձնառություններ են կատարել դիտարկվող ոլորտում: Ներքին աուդիտի ղեկավարը կարող է խնայել ռեսուրսները՝ նշանակելով աուդիտորների, որոնք ծանոթ են ոլորտի գործընթացներին: Այդ դեպքում ներքին աուդիտի ղեկավարը պետք է հավաստիանա, որ 1130 – «Անկախության կամ անաչառության խաթարում» ստանդարտը չի խախտվել, կամ եթե ռեսուրսները քիչ են, պետք է ներկայացնի փաստացի կամ ենթադրյալ խաթարումը համապատասխան կողմերին:

Օրինակ. Փոքր կազմակերպություններում SS ոլորտի աուդիտների իրականացումը

Համայնքային բանկն ընդունել է Ստանդարտների և տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի (National Institute of Standards and Technology (NIST) կիբերանվտանգության ստանդարտը և այն վերածել Կիբերանվտանգության գնահատման գործիքի (Cybersecurity Assessment Tool (CAT): Ներքին աուդիտորները ստուգողներին ցույց են տալիս, թե ինչպես է աուդիտի ռիսկերի բազմությունը համապատասխանեցված NIST, CAT և COBIT- ին, և ինչպես են աուդիտի միավորները կապված յուրաքանչյուրի հետ՝ դասակարգված ըստ ռիսկերի: Յուրաքանչյուր տարի ներքին աուդիտի ղեկավարը կատարում է ռիսկերի վրա հիմնված աուդիտի պլանը և ստուգողներին ցույց տալիս, թե որ ոլորտներն են ենթարկվել աուդիտի: Աուդիտի չենթարկված ոլորտներում կատարվում է հսկողությունների գնահատում (օրինակ՝ հսկողության պահպանման թեստավորում՝ ամփոփ կարծիքով): Այս մոտեցումը ապահովում է ներքին աուդիտի գործառույթի կողմից կանոնակարգերի համապատասխանության ստուգումը՝ միաժամանակ մնալով ռիսկերի վրա հիմնված:

- Համակարգերը կարող են պարունակել նաև յուրաքանչյուր աուդիտից հետո նշումները, որոնցում հետագա աուդիտորների համար հասանելի կլինեն բարձր ռիսկայնության տարրեր պարունակող հսկողական միավորները, առաջարկությունները, դիտարկումները և այլն:

Աուդիտի համակարգերը կարող են օգտակար լինել, բայց նույնիսկ եթե չկա երկրորդ գծի գործառույթները սպասարկող միասնական ծրագիր, կարևոր է, որ ներքին աուդիտը կարողանա հասանելիություն ունենալ կազմակերպության ցանկացած SS ծրագրի, ներառյալ այն ծրագրերը, որոնք սպասարկում են ռիսկերի կառավարմանը և համապատասխանությանը: Դա էական է աուդիտի պլանի մշակման և վերլուծությունների փուլերում:

Հանձնառության պլանավորում

Աուդիտի պլանավորումը ռիսկերի գնահատմանն արձագանքն է, որը հիմնված է բիզնեսի վերաբերյալ ներքին աուդիտի պատկերացումների և շահառուների հետ քննարկումների վրա: Բիզնեսի լավ պատկերացումը օգնում է ներքին աուդիտին սահմանել աուդիտի միավորներն ու ռազմավարությունը, որպես հիմք՝ ռիսկերի հայտնաբերման և աուդիտի բազմության ձևավորման նպատակով անհրաժեշտ տեղեկատվության հետագա հավաքագրման համար: Չնայած ֆինանսական կազմակերպության ռիսկերի սահմանումը և գերակայությունների որոշումը հաճախ կատարվում է ներքին աուդիտի տեսանկյունից, բիզնես կամ ռիսկերի գործառույթների կողմից իրականացվող ռիսկերի գնահատումների օգտագործումը կարող է օգտակար և արդյունավետ լինել ռիսկերի բազմությունը կազմելու գործում: Դա կարող է նաև նվազեցնել կամ վերացնել աշխատանքի կրկնությունը: Այս տեղեկատվությունը կարող է հատկապես օգտակար լինել սահմանափակ բյուջեներով և ռեսուրսներով աշխատող ներքին աուդիտի գործառույթների համար:

Երբ ներքին աուդիտի գործառույթը մշակում է հանձնառությունների իր տարեկան ծրագիրը, այն կարող է անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ կազմակերպության ղեկավարությունից և երկրորդ գծի գործառույթներից: 2201 «Պլանավորման նկատառումներ» ստանդարտում նշվում է, որ հանձնառության պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնվեն. «գործունեության նպատակների, ռեսուրսների և գործառնությունների հետ կապված էական ռիսկերը և միջոցները, որոնցով ռիսկի հավանական ազդեցությունը պահվում է ընդունելի սահմաններում»: Վերջին աուդիտի գնահատականը, վերջին հանձնառությունից անցած ժամանակահատվածը, վերջին աուդիտի մանրակրկիտությունը, կամ նույնիսկ համաձայնեցված գործողությունների կատարման կարգավիճակը ռիսկի գործոնների օրինակներ են, որոնք կարող են հաշվի առնվել: Ֆինանսական ծառայություններ մատուցող

կազմակերպությունների բիզնես ստորաբաժանումներում կան ռիսկի այլ գործոններ, ինչպիսիք են՝ չաշխատող վարկերը, նախկինում տրված առաջարկությունները, իրականացման արդյունավետությունը, հայցերի քանակը և այլն: Ներքին աուդիտը նաև պետք է հարցնի կազմակերպական այլ ռիսկերի վերաբերյալ մյուս դեպարտամենտների և խորհրդի կարծիքները:

Հանձնառությունը պլանավորելիս պետք է հաշվի առնվեն կարգավորողների, երկրորդ գծի գործառույթների և այլ կողմերի հաշվետվություններ, ինչպես նաև առաջարկությունները ու ռիսկի գնահատականները, գործող օրենսդրությունը, լիազորություններն ու առաջադրանքները և ընթացակարգերի ձեռնարկները: Սկզբնական հանդիպման ժամանակ ներքին աուդիտը պետք է հարցնի աուդիտի ենթարկվող ստորաբաժանման ղեկավարին՝ արդյոք կան հանգամանքներ, որոնք պետք է հաշվի առնել աուդիտորական հանձնառության ժամանակ: Հնարավորության և տեղին լինելու դեպքում պահանջվող թեմաները պետք է ընդգրկել հանձնառության մեջ և փաստաթղթավորել պահանջը:

Ներքին աուդիտի հանձնառությունների աշխատանքային փաստաթղթերը, եզրակացությունները, ղեկավարության կողմից կատարված ինքնագնահատումները և երկրորդ գծի գործառույթների կողմից կատարված ստուգումները կարող են կարևոր մուտքային տվյալներ հանդիսանալ կազմակերպության գործող կամ նույնիսկ քննարկման փուլում գտնվող նախագծերի համար: Բարելավումները կամ առաջարկությունները կարող են հաշվի առնվել հետագա նմանատիպ նախագծերում, որոնք ամբողջությամբ իրականացնելու դեպքում կարող են հանգեցնել արդյունավետության ավելի բարձր մակարդակի:

Աուդիտի իրականացում

Աուդիտի իրականացումը պետք է նախատեսված լինի այնպես, որ բավարարի շահառուների սպասելիքները և կազմակերպության համար արժեք ավելացնի: Մի նախագիծը կարող է իրենից ներկայացնել միայն քայլ առ քայլ գնահատում՝ հմտության և պատշաճ մասնագիտական ուշադրության պահանջները բավարարելու համար, իսկ մեկ այլ նախագծի դեպքում կարող է իրականացվել մանրակրկիտ ստուգում՝ կիրառելով տարբեր մեթոդներ, ինչպիսիք են՝ քայլ առ քայլ գնահատումները, հսկողությունների թեստավորումը, տեղում դիտարկումները, սկզբնապատճառների վերլուծությունները (root cause analisys) և այլն:

Հետևյալ ստանդարտները օգնում են ուղղորդել հանձնառության այս փուլը.

- 2100 – «Աշխատանքի էությունը» ստանդարտում նշվում է. «Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի և նպաստի կազմակերպության կորպորատիվ կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության գործընթացների բարելավմանը՝ կիրառելով համակարգված, հետևողական և ռիսկերի վրա հիմնված մոտեցում: Ներքին աուդիտի հեղինակությունն ու արժեքն ամրապնդվում են, երբ աուդիտորները պրոակտիվ են, և նրանց գնահատումներն առաջարկում են նոր ներըմբռնումներ և հաշվի են առնում ապագա հետևանքները»:

- 2110 – «Կորպորատիվ կառավարում» ստանդարտում նշվում է. «Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի և համապատասխան առաջարկներ ներկայացնի՝ բարելավելու կազմակերպության կորպորատիվ կառավարման գործընթացները հետևյալ ոլորտներում.

    - ռազմավարական և գործառնական որոշումների կայացում,
    - ռիսկերի կառավարման և հսկողության նկատմամբ վերահսկում,
    - կազմակերպության ներսում համապատասխան էթիկայի և արժեքների խթանում,
    - կազմակերպական արդյունավետ կառավարման և հաշվետվողականության ապահովում,
    - ռիսկերի և հսկողության վերաբերյալ տեղեկատվության ներկայացում կազմակերպության համապատասխան հատվածներին,
    - խորհրդի, արտաքին ու ներքին աուդիտորների, այլ հավաստիացում մատուցողների և ղեկավարության գործողությունների կոորդինացում և տեղեկատվության տարածում

- 2120 – «Ռիսկերի կառավարում» ստանդարտում նշվում է. «Ներքին աուդիտի գործառույթը պետք է գնահատի ռիսկերի կառավարման գործընթացի արդյունավետությունը և նպաստի դրա բարելավմանը»:

- 2130 – «Հսկողություն» ստանդարտում նշվում է. «Ներքին աուդիտի գործառույթը պետք է աջակցի կազմակերպությանն արդյունավետ հսկողություններ ունենալու գործընթացում՝ դրանց արդյունավետության ու նպատակայնության գնահատման և դրանց շարունակական բարելավմանը նպաստելու միջոցով»:

Հաշվետվության ներկայացում

2400 – «Արդյունքների ներկայացում» և 2410 – «Ներկայացման չափանիշներ» ստանդարտներին բավարարելու համար հանձնառության ավարտից հետո

ներքին աուդիտի գործառույթը պետք է ներկայացնի հանձնառության նպատակները, շրջանակը և արդյունքները: 2410.A1 ստանդարտում նշվում է, որ հանձնառության արդյունքները. «պետք է ներառեն համապատասխան եզրակացություններ, ինչպես նաև համապատասխան առաջարկներ և/կամ գործողությունների ծրագիր: Անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացվի ներքին աուդիտորների կարծիքը, որը պետք է հաշվի առնի գործադիր ղեկավարության, խորհրդի և այլ շահագրգիռ անձանց ակնկալիքները և պետք է հիմնավորված լինի բավարար, արժանահավատ, էական և օգտակար տեղեկատվությամբ»:

Հաշվետվությունը կարող է սկսվել կարճ ամփոփագրով, որը ներառում է.

- Բացատրություն, թե ինչու է իրականացվել հանձնառությունը (աուդիտի ծրագիր, խորհրդի կամ որևէ դեպարտամենտի ղեկավարի կողմից հարցում, ներքին աուդիտի ղեկավարի որոշում՝ հիմնված կազմակերպության ռիսկերի վրա),
- Հանձնառության շրջանակներ,
- Եզրակացություններ և առաջարկություններ կամ շտկող գործողություններ,
- Ղեկավարության գործողությունների վերջնական ծրագիր:

Այն կարող է ներառել նաև կարճ ակնարկ ներգրավված աշխատակիցների և աուդիտի մեթոդաբանության վերաբերյալ, ներառյալ՝ հարցազրույցները, վերլուծված տվյալների և փաստաթղթերի աղբյուրները և ընտրանքի չափերն ու մեթոդները:

Ամփոփագրից հետո կարող են ներկայացվել արդյունքները՝ յուրաքանչյուր ռիսկի, գործընթացի, պրոդուկտի և այլնի համառոտ նկարագրությամբ, որին կհետևեն հնարավոր ազդեցությունը(ները), եթե դրանք դեռ չեն շտկվել, առաջարկությունները և դրանց սեփականատերը (իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումը), ռիսկի տեսակը (գործառնական ռիսկ, վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկ) և ռիսկի գնահատականը (ցածր, ցածր-միջին, միջին-բարձր, բարձր):

2440 – «Արդյունքների տրամադրում» ստանդարտի համաձայն. «Ներքին աուդիտի ղեկավարը պետք է տրամադրի արդյունքները համապատասխան անձանց»: Շահագրգիռ տարբեր կողմերը կարող են նախընտրել հաշվետվության տարբեր ձևեր՝ իրենց գործառույթներին և սպասելիքներին համապատասխան: Գործադիր ղեկավարությունը պետք է ժամանակին ստանա

հաշվետվություններ՝ եզրակացություններով (եթե դրանք տրամադրվում են), որոնք պետք է հիմնավորված լինեն բավարար, արժանահավատ, էական և օգտակար տեղեկատվությամբ (2450 – «Ընդհանուր եզրակացություններ» ստանդարտ): Աուդիտի կոմիտեները սովորաբար պահանջում են մանրամասն հաշվետվություններ, իսկ խորհուրդը կարող է բավարարվել ամփոփագրով:

Առաջարկությունների և դիտարկումների շտկման մոնիտորինգ

Ֆինանսական ծառայությունների ոլորտի վերահսկողները չեն ակնկալում կատարելություն, բայց նրանք մտահոգված են, որ երկրորդ և երրորդ գծի գործառույթները (ռիսկերի կառավարում, համապատասխանություն և ներքին աուդիտ) աշխատեն միասին և, ի վերջո, արդյունավետ: Շատ խորհուրդների համար, այնուամենայնիվ, ցածր ռիսկայնություն ունեցող դիտարկումները շտկելու համար ներքին հսկողություններում ժամանակի, ջանքերի և փողի ներդրումը այդքան կարևոր չէ, երբ կան այլ բիզնես առաջնահերթություններ և գերակա ներդրումներ:

Կարող է գալ մի պահ, երբ կարգավորող կամ վերահսկող մարմինը հարցնի, թե ինչու կարգավորմանն առնչվող ցածր ռիսկայնության առաջարկությունները դեռ չեն կատարվել: Յուրաքանչյուր ստուգումից հետո կարգավորողները սովորաբար քննարկում են դիտարկումները ղեկավարության հետ և դրանով ակնկալում են, որ ստուգման ընթացքում հայտնաբերված բոլոր բացթողումներին կամ թերություններին կլինի անդրադարձ և դրանք կշտկվեն:

Ներքին աուդիտը պետք է ունենա քաղաքականություն, որը մանրամասնում է, թե ինչպես են կատարվում հետստուգումները: Իդեալական տարբերակում պետք է լինի նաև ծրագիր, որով պարբերաբար համապատասխան բիզնես ստորաբաժանումների սեփականատերերի հետ անդրադարձ կկատարվի հանձնառությունների առաջարկություններին՝ հասկանալու իրականացման հետ կապված առկա որևէ դժվարություն և, անհրաժեշտության դեպքում, օգնելու որոշել ռիսկերը զսպելու այլընտրանքային եղանակներ: Եթե աուդիտի հանձնառության արդյունքում տրվում են բազմաթիվ առաջարկություններ, օգտակար կլինի սահմանել առաջնահերթություններ և իրականացնել գործողություններ, որոնք կհանգեցնեն անհապաղ լուծումների կամ «արագ հաղթանակների» (quick wins), և կօգնեն մշակել գործողությունների ծրագրեր մնացած հարցերի համար, որոնք ավելի շատ ուշադրություն են պահանջում: Գործողությունների ծրագրերում պետք է ներառվեն բոլոր բացահայտված անհամապատասխանությունները՝ անկախ ռիսկի մակարդակից:

Ռիսկի և կարգավորողների պահանջների հավասարակշռության պահպանումը

2008թ.-ի համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո ստանդարտներ սահմանող շատ միջազգային մարմիններ և պետական/ տեղական կարգավորող մարմիններ ավելացրեցին ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների նկատմամբ կարգավորման պահանջները `փորձելով շտկել ներքին հսկողության թույլ կողմերը, որոնք ընկալվում էին որպես պատճառային: Արդյունքում, ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար այսօր կարգավորող միջավայրը ավելի բարդ և ռեսուրսներ պահանջող է, քան երբևէ:

Սահմանափակ ռեսուրսներ ունեցող ներքին աուդիտի գործառույթները կարող են խնայել ժամանակ և ջանքեր՝ համագործակցելով ղեկավարության և կազմակերպության երկրորդ գծի գործառույթների հետ: Օգտակար կլինի ծրագրի ներդնումը և տվյալների վերլուծությունների կիրառումը: Կարող են մշակվել համակարգեր, որոնցով կթվայնացվեն մասնաճյուղերում գործառնությունների աուդիտները: Այնուամենայնիվ, այս գործողություններից ոչ մեկով չեն փոխվում կարգավորողների ակնկալիքները կամ կազմակերպության՝ կանոնակարգերին հետևելու պարտավորությունը: Ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները սովորաբար գործում են մի միջավայրում, որը պահանջում է հետաձգել անդրադարձն այն ռիսկերին, որոնք նրանք կնախընտրեն աուդիտի ենթարկել՝ ի շահ կարգավորողների պահանջների բավարարման: Սա կարող է ավելի բարդ լինել, երբ ստուգողից ստուգող ակնկալիքները փոխվում են, կամ ստուգողները գալիս են առանց նախազգուշացման: Այս դեպքերում ստուգողները կարող են չտեսնել, որ ներքին աուդիտն աշխատում է այն հարցերի շուրջ, որոնք իրենք ակնկալում են տեսնել: Դասն այն է, որ ներքին աուդիտը պետք է պատրաստ լինի և կարողանա պաշտպանել իր աուդիտի պլանը կարգավորող մարմինների մոտ՝ միևնույն ժամանակ հատկացնելով տարվա մեջ բավականաչափ ժամանակ և ռեսուրսներ նրանց հիմնական ակնկալիքները բավարարելուն:

Ավելի փոքր ներքին աուդիտի թիմերին բնորոշ խնդիրներ

Ոլորտներից մեկը, որտեղ ներքին աուդիտի ավելի փոքր գործառույթները դժվարանում են բավարարել կարգավորողների պահանջներին, SS ոլորտն է: Ստուգողները հաճախ ականկալում են տարեկան կտրվածքով SS ռիսկերի բազմության մեծ մասի աուդիտի իրականացում: Փոքր ֆինանսական կազմակերպությունների ներքին աուդիտի ղեկավարները հաճախ պետք է բանակցեն ստուգողների հետ՝ բացատրելով, որ այդ մասշտաբի աուդիտի իրականացումն արդյունավետ կամ ռիսկերի վրա հիմնված չէ:

Ակտիվների ու ռեսուրսների տարբեր մակարդակներ ունեցող բազմաթիվ կազմակերպություններում նշանակված ստուգողները կարող է փոքր հաստատություններից ականկալել ավելի խոշոր բազմազգային կորպորացիաներին բնորոշ գործընթացներ, փաստաթղթավորում և վերլուծություններ ունենալ:

Ֆինանսական կազմակերպություններում Ներքին աուդիտի գործառույթի կառավարումը

Ֆինանսական ծառայությունների ներքին աուդիտորները պարտավոր են ոչ միայն պաշտպանել շահառուներին, հաճախորդներին և աշխատողներին, այլ նաև համայնքը: Այսպիսով, ֆինանսական ծառայությունների ներքին աուդիտորները պետք է դիտարկեն ավելի ընդգրկուն ռիսկերի բազմություն, ներառյալ այնպիսի տարրերը, ինչպիսիք են՝ մշակույթը, վարքագիծը, վարձատրությունը և համապատասխան կարգավորումների հետ կապը: Դա կարող է հանգեցնել ավելի համապարփակ ռիսկերի գնահատման և հաճախ ռիսկերի և հսկողությունների ավելի մանրակրկիտ ուսումնասիրման, քան արդարացված կլինի այլ ոլորտների դեպքում: Ավելին, կարգավորողները ակնկալում են որոշակի մակարդակի հմտություն և փորձառություն այնպիսի մասնագիտացված ոլորտներում, ինչպիսիք են.

- Մաթեմատիկական հմտություններ ակտուարական և մոդելների ստուգումների համար,
- Վարկերի տրամադրման գործընթացի համար վարկային փորձ,
- Ճկունություն (agile) և նախագծերի կառավարման մոտեցումներ,
- Կազմակերպչական հոգեբանություն մշակութային ռիսկի գնահատումների համար,
- Համակարգչային գիտելիքներ տվյալների վերլուծությունների և ծրագրավորման համար,
- Կիբերանվտանգություն/ Տվյալների գաղտնիություն,
- Համապատասխանություն:

Այս տարրերին համապատասխանելը պահանջում է ավելի շատ ռեսուրսներ, մասնագիտացված հմտություններ և պարտականությունները կատարելու համար գործիքներ, քան ունեն ներքին աուդիտի տիպիկ գործառույթները:

Կազմակերպական կառուցվածք

1110 – «Կազմակերպական անկախություն» ստանդարտը նշում է. «Ներքին աուդիտի ղեկավարը պետք է հաշվետու լինի կազմակերպության այն օղակին, որը թույլ կտա ներքին աուդիտի գործառույթին իրականացնել իր պարտականությունները: Ներքին աուդիտի ղեկավարը, առնվազն տարին մեկ անգամ, պետք է ներքին աուդիտի գործառույթի կազմակերպական անկախությունը հաստատի Խորհրդին»: Շատ կարևոր է, որ ներքին աուդիտի ղեկավարը հասանելիություն ունենա աուդիտի կոմիտեին, նույնիսկ եթե ի պաշտոնե ուղղակիորեն հաշվետու չէ աուդիտի կոմիտեի նախագահին:

Շատ դեպքերում ներքին աուդիտի ղեկավարը ադմինիստրատիվ առումով (օրինակ՝ բյուջեների վերահսկում և ծախսերի հաշվետվություններ) ունի կետագծային հաշվետվողականության ուղի գործադիր տնօրենի կամ գործադիր ղեկավարության այլ անդամի հետ, բայց ֆունկցիոնալ առումով հաշվետու է աուդիտի կոմիտեի նախագահին: Ջուգահեռ հաշվետվողականության այս մոդելի կիրառումը համարվում է լավ պրակտիկա: Գործադիր մարմինը, ում ադմինիստրատիվ առումով հաշվետու է ներքին աուդիտի ղեկավարը, չպետք է ունենա միակողմանի լիազորություններ՝ դադարեցնելու ներքին աուդիտի ղեկավարի աշխատանքը: Դա պետք է լինի աուդիտի կոմիտեի գործառույթ:

Ներքին աուդիտի ղեկավարից բացի, ներքին աուդիտի գործառույթները հիմնականում ունենում են ստանդարտ կազմակերպական կառուցվածք: Նկար 8-ում պատկերված է բանկի ներքին աուդիտի գործառույթի պայմանական կազմակերպական կառուցվածք:

Այս դիագրամն օրինակ է: Ավելի փոքր կազմակերպությունները կարող են ունենալ ավելի պարզ պարտականությունների տարանջատում, իսկ ավելի մեծ կազմակերպությունները կարող են ունենալ լրացուցիչ մակարդակներ, սակայն ֆինանսական ծառայությունների կազմակերպությունների ներքին աուդիտի գործառույթները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, որը կօգնի ընդգրկել աուդիտի ռիսկերի ամբողջ բազմությունը՝ ի լրումն առանձնահատուկ կարգավորման պահանջների:

Օրինակ, ներքին աուդիտը իդեալական տարբերակում պետք է ունենա SS մասնագետներ, որոնք SS աուդիտի հանձնառություններ կատարելուց բացի, կաջակցեն տվյալների ստացման հարցում: Փոքր կազմակերպությունները կարող են ունենալ միայն մեկ մասնագետ գործառույթի կազմում, և, հետևաբար, ներքին աուդիտի գործառույթի մեծ հատված պետք է մասնակի արտապատվիրակվի, սովորաբար՝ անկախ աուդիտորական ընկերության: Այս դեպքերում աուդիտի գործառույթի կազմում ներառված աշխատակիցները պետք է ապահովեն, որ երրորդ անձ հանդիսացող աուդիտորական ընկերությունը տրամադրի գիտելիքներ, հմտություններ և այլ կարողություններ, որոնք անհրաժեշտ են գործադիր ղեկավարության, ինչպես նաև՝ կարգավորող մարմինների և վերահսկողների սպասելիքները բավարարելու համար:

Նկար 8: Ներքին աուդիտի դեպարտամենտի կառուցվածքի օրինակ



Թիմերի պարտականությունները	
Թիմ 1	Պատասխանատու է կենտրոնացված դեպարտամենտներին վերաբերող ներքին աուդիտի հանձնառությունների համար (Մարդկային ռեսուրսներ, Մարկետինգ, Ֆինանսական)
Թիմ 2	Պատասխանատու է մասնաճյուղերի աուդիտների համար
Թիմ 3	Պատասխանատու է SS գործառույթի աուդիտների համար
Թիմ 4	Պատասխանատու է զեղծարարության վերլուծությունների համար
Թիմ 5	Պատասխանատու է կարգավորմանը վերաբերող աուդիտների համար, ներառյալ՝ ռիսկերի կառավարում, Փողերի լվացման դեմ պայքար, Ներքին կապիտալի համարժեքության գնահատման գործընթաց (Internal Capital Adequacy Assessment Process (ICAAP)), Ներքին իրացվելիության համարժեքության գնահատման գործընթաց (Internal Liquidity Adequacy Assessment Process (ILAAP)), սթրես-թեստեր, վարձատրության քաղաքականություն, և այլն:

Աղբյուրը՝ Ներքին աուդիտորների ինստիտուտ

Աշխատանքի ընդունման ռազմավարություններ

Նոր աշխատակիցների ընդունումը կախված է այն հմտություններից, որոնք անհրաժեշտ են, որպեսզի դեպարտամենտը կատարի իր մանդատը: Սկսնակ աուդիտոր փնտրելիս դիտարկեք կազմակերպության ներսից աշխատանքի ընդունելը: Քանի որ որևէ հատուկ փորձ չի պահանջվում, ներքին թեկնածուն կարող է իր հետ բերել գիտելիքներ կազմակերպության բիզնես գործընթացների վերաբերյալ՝ լրացնելով դեպարտամենտի հմտություններում բացերը:

Տաղանդների կառավարում

Թիմում տաղանդների աճը կառավարման վերաբերյալ տեղեկատվության համար, տե՛ս «Տաղանդների կառավարում. թիմում հիանալի անդամներ աշխատանքի ընդունելը, զարգացնելը, մոտիվացնելը և պահելը» (“Talent Management: Recruiting, Developing, Motivating, and Retaining Great Team Members.”) ՆԱԻ գործնական ուղեցույցը:

Ընդհանրապես, փորձառու ներքին աուդիտորների աշխատանքի ընդունումը կարող է իրենից խնդիր ներկայացնել: Ֆինանսական կազմակերպությունները կարող են դիտարկել պրակտիկայի ծրագիր հովանավորելու տարբերակը, որի միջոցով կարող են ձևավորվել ապագա տաղանդներ: Պրակտիկայի ծրագիրը կարող է լինել տարբեր ձևերի. Մարդկային ռեսուրսների դեպարտամենտը կարող է աջակցել ամառային պրակտիկայի ծրագրի մշակման հարցում, որի ընթացքում պրակտիկանտները կարող են օգնել՝ կատարելով մեծ ծավալի ոչ բարդ աշխատանք: Պրակտիկայի ծրագրի համակարգողը կարող է աշխատել տեղական քոլեջների և համալսարանների հետ՝ ներգրավելով ուսանողների, ովքեր անցնում են ներքին աուդիտի դասընթացներ կամ պատրաստվում են ստանալ կոչում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են հաշվապահությունը, տվյալների վերլուծությունը կամ ֆինանսները:

Օրինակ. Միջին չափի ապահովագրական կազմակերպությունում ներքին աուդիտի ղեկավարը աշխատում է պրակտիկայի ծրագրի համակարգողի հետ՝ երկու ամբողջ դրույքով աշխատատեղը լրացնելու ուղղությամբ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ, Sarbanes-Oxley ակտին համապատասխանության աշխատանքները: Ներքին աուդիտի ղեկավարը նշում է. «Այս ծրագրի մասնակիցները կարող են տարիներ շարունակ աշխատել մեզ համար, քանի դեռ նրանք ուսանող են: Նրանցից ոմանք ամառային պրակտիկա կանցնեն հանրային հաշվապահական ընկերությունում և կվերադառնան մեր ընկերություն ուսումնական տարվա ընթացքում»: Այս

ծրագրի միջոցով ընկերությունը հեշտությամբ գրավում է ներքին աուդիտի նոր թեկնածուների, ովքեր արդեն իսկ ծանոթ են կազմակերպությանը:

Կարգավորողները պարբերաբար հարցնում են ներքին աուդիտի անձնակազմի փորձառության մասին: Թափուր աշխատատեղերի առկայության դեպքում, շատ օգտակար է իրականացնել թիմում հմտությունների բացերի վերլուծություն: Սա կարող է օգնել ապահովել ներքին աուդիտի գործառույթի կողմից ռիսկերի վրա հիմնված, ինչպես նաև կարգավորողին հետաքրքրող ոլորտների կոմպետենտ աուդիտների իրականացում:

Ընդհանրապես, նոր ընդունված ներքին աուդիտորների համար առկա են մի քանի պահանջներ, բացի բիզնեսի խորը իմացությունից և համապատասխան ոլորտի ակադեմիական գիտելիքներից, ինչպիսիք են ֆինանսները, հաշվապահական հաշվառումը, տեղեկատվական տեխնոլոգիաները կամ մաթեմատիկան: Ֆինանսական կազմակերպություններում աճի հնարավորությունների կամ կառավարչական պաշտոններին առաջխաղացման համար կարող է պահանջվել համապատասխան ոլորտում սերտիֆիկացում: Ավելի ու ավելի են կարգավորող մարմինները շեշտում ներքին աուդիտորների՝ համապատասխան սերտիֆիկատներ ունենալու անհրաժեշտությունը (օրինակ, CIA, CRMA, CISA, CPA, CA, CFE), և կարող են կասկածի տակ դնել ներքին աուդիտի ավագ մենեջերներին, ովքեր դեռ չունեն վստահելի սերտիֆիկատներ:

Որոշ երկրներում այն ուսանողներից, ովքեր համալսարանն ավարտելուց հետո ցանկանում են դիմել ներքին աուդիտորի պաշտոնի, կարող է պահանջվել հանձնել ընդունելության քննություն: Այս քննությունները կարող են պահանջվել նաև փորձառու նոր ընդունվող աշխատակիցների համար: Պետական մակարդակով կանոնակարգերը կարող են սահմանել նաև այն մակարդակը, որտեղից նոր ներքին աուդիտորները կարող են սկսել իրենց կարիերան, անկախ նրանից, թե նրանք նոր ավարտած ուսանողներ են, թե փորձառու նոր ընդունվող աշխատակիցներ, ընդհուպ մինչև պահանջելով, որ նոր ընդունվողները սկսեն աշխատել որպես աուդիտորի օգնականներ: Կանոնակարգերը կարող են նաև սահմանել որոշակի հմտություններ հավաստող սերտիֆիկատներ (օրինակ՝ CISA-ն SS աուդիտորների համար): Ներքին աուդիտի ղեկավարները պետք է տեղյակ լինեն ցանկացած կանոնակարգի մասին, որը կարող է ազդել աշխատակիցների ընտրության վրա:

Հատուկ հմտությունների ձեռքբերումը

Ֆինանսական ծառայությունների ոլորտում հանձնառությունը երբեմն պահանջում է հատուկ գիտելիքներ: Այս պարտավորությունը կատարելու և, հմտության առումով, ՆԱԻ ստանդարտներին և էթիկայի կանոններին համապատասխանելու համար ներքին աուդիտը կարող է և պետք է դիմի ներքին կամ արտաքին աջակցություն ստանալու համար, եթե իր աշխատակազմում առկա է գիտելիքների բաց: Մասամբ պատվիրակումը կարող է խնդրի լուծման տարբերակ լինել փոքր կազմակերպությունների համար, կամ երբ ներքին աուդիտները հատուկ հմտություններ են պահանջում երկու-երեք տարին մեկ անգամ:

ԱՄՆ-ում հմտությունների պահանջների փոփոխության օրինակ. Ավանդների երաշխավորման դաշնային կորպորացիան (Federal Deposit Insurance Corporation (FDIC)) փոքր կազմակերպությունների համար սահմանել է նոր պահանջներ, որոնց համաձայն նրանք պետք է իրականացնեն ֆինանսական մոդելների աուդիտ: Նախկինում հաստատություններից պահանջվում էր միայն դիտարկել մուտքային ու ելքային տվյալները և քաղաքականությունները: Ներքին աուդիտի գործառույթների նկատմամբ պահանջը բավարարվում էր նրանց կողմից տվյալների հոսքերի ճշգրտության, տվյալների պատշաճ օգտագործման և քաղաքականություններին հետևելուն ստուգումներով:

Այժմ ներքին աուդիտի փոքր գործառույթներից (նույնիսկ նրանցից, ովքեր ունեն միայն մեկ կամ երկու ներքին աուդիտոր), պահանջվում է իրականացնել կազմակերպություններում օգտագործվող մոդելների գույքագրում: Եթե նրանք չունեն մոդելների ռիսկերի կառավարման մանրամասն աուդիտ իրականացնելու հմտություններ, պետք է մշակվի ծրագիր, որում կնշվի, թե ինչպես է բավարարվելու այս նոր պահանջը:

Կազմակերպության հսկողական գործառույթներին ապավինումը

Կազմակերպության պաշտպանության մյուս գծերի հետ աշխատելու վերաբերյալ տեղեկատվության համար տե'ս «Ներքին աուդիտը և պաշտպանության երկրորդ գիծը» (Internal Audit and the Second Line of Defense) ՆԱԻ գործնական ուղեցույցը:

Փոքր ֆինանսական կազմակերպություններից կարող է պահանջվել ներքին աուդիտի հանձնառություններում ներգրավել ռիսկերի կառավարիչներին և սերտորեն համագործակցել պաշտպանության ողջ երկրորդ գծի հետ՝ պատշաճ ընդգրկում ապահովելու համար: Որպես այլընտրանք, նրանք կարող են դիմել

ներքին աուդիտի ծառայությունների մասամբ պատվիրակման, ինչը լրացուցիչ, անհայտ ռիսկեր է պարունակում:

Խորհուրդը և մասնավորապես՝ աուդիտի կոմիտեն, պետք է տեղյակ լինի ներքին աուդիտի անձնակազմում մարդկային ռեսուրսների կարիքների մասին: Ներքին աուդիտի մանդատը կատարելու և կարգավորող մարմինների ակնկալիքները բավարարելու համար անհրաժեշտ հմտությունները հասկանալը կարող է ավելի հավանական դարձնել հատուկ վերապատրաստումներին հավանություն տալը կամ արտաքին աղբյուրներից հատուկ գիտելիքներ պահանջող հանձնառությունների համար միջոցներ հատկացնելը: Ներքին աուդիտի ղեկավարները աուդիտի կոմիտեին ներկայացնելու համար կարող է ցանկանան իրականացնել տարեկան համեմատական վերլուծություններ (benchmarking analyses)՝ ներառյալ մասնագիտական վերապատրաստումների, սերտիֆիկացումների և շարունակական մասնագիտական կրթության (CPE) ծախսերը: Աուդիտի կոմիտեները շահագրգռված են, որ ներքին աուդիտորները հանձնառություններն իրականացնեն արհեստավարժ և կոմպետենտ ձևով և, ներքին աուդիտի ղեկավարի կողմից բավարար տեղեկատվություն տրամադրելու դեպքում, կարող է հատկացնեն բյուջե:

Ռոտացիա

Շատ կազմակերպություններում ներքին աուդիտի գործառույթի աշխատատեղերը լրացվում են ռոտացիոն սկզբունքով: Մարդիկ, ովքեր չունեն աուդիտի և ռիսկերի կառավարման ոլորտում փորձ, բիզնես ստորաբաժանումից կամ այլ գործառույթից ռոտացվում են ներքին աուդիտ, և, համաձայն 1210 - «Հմտություն» ստանդարտի. «Ներքին աուդիտորները պետք է ունենան գիտելիք, հմտություններ և այլ պահանջվող ունակություններ՝ իրենց հանձնառություններն իրականացնելու համար:» Այս ստանդարտը պահանջում է, որ նոր աուդիտորները անցնեն համապատասխան վերապատրաստում՝ ստանդարտին համապատասխան «հմուտ» որակվելու համար: «Աուդիտի իրականացման» գիտելիքները հաճախ ժամանակավոր են ռոտացված աշխատակիցների համար և կարող են փոխհատուցվել նրանց մասնագիտական գիտելիքներով և փորձով, ինչպիսիք են վարկի, շուկայի, ներդրումների, առևտրի, տեղեկատվական տեխնոլոգիաների, գործարքների ձևակերպումների և այլ ոլորտների իմացությունը: Այս մոդելում անձնակազմը մի քանի տարի անց կարող է ռոտացվել կազմակերպության այլ ոլորտներ: Սա տարածված պրակտիկա է Ճապոնիայում, որտեղ մարդիկ հաճախ աշխատում են մեկ կազմակերպությունում իրենց ամբողջ կարիերայի ընթացքում: Աշխատակիցներն ունենում են զարգացման և առաջխաղացման

հնարավորություններ՝ ռոտացվելով կազմակերպության ներսում տարբեր դերերում:

Վերապատրաստում

Շարունակական վերապատրաստումը ոչ միայն պահանջվում է հավաստագրերի մեծ մասի համար՝ որպես շարունակական մասնագիտական կրթություն (CPE) կամ շարունակական մասնագիտական զարգացում (CPD), այլ նաև կարևոր է նոր ներքին աուդիտորների և այն ներքին աուդիտորների համար, որոնք սկսում են զբաղվել կազմակերպության՝ նախկինում անծանոթ ոլորտներով: Կրթական հնարավորություններով ապահովումն օգնում է կազմակերպություններին բավարարել 1230 - «Շարունակական մասնագիտական զարգացում» ստանդարտի պահանջը: Ահա երկու օրինակ, թե ինչպես կարող է այդ պահանջը բավարարվել:

Օրինակ 1. Եվրոպական մի բանկում ներքին աուդիտի ծրագիրը նոր աշխատակիցներին կցում է փորձառու աուդիտորներին՝ երեքից վեց ամիս տևող «ողջույնի և հյուրընկալման ծրագրի» շրջանակներում: Նոր աուդիտորը սովորաբար առաջին շաբաթն անցկացնում է մասնակցելով կազմակերպությունում գործառույթի դերի վերաբերյալ մի քանի օր տևող դասընթացին: Ակնկալվում է, որ նա կուսումնասիրի կարևոր փաստաթղթերը, ինչպիսիք են *Ներքին աուդիտի Մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտները*, ներառյալ՝ Էթիկայի կանոնները, կազմակերպության ներքին աուդիտի կանոնադրությունը և հիմնական կարգավորող մարմնի կողմից թողարկված ծանուցումները, որոնցում հստակ սահմանված են ներքին աուդիտի գործառույթի պարտականությունները: Փորձառու աուդիտորը հանդես է գալիս որպես մենթոր և աշխատում է այլ դեպարտամենտների հետ, որպեսզի նրանք հատկացնեն ժամանակ, և նոր աուդիտորը ուսումնասիրի բիզնեսի այլ ոլորտները:

Օրինակ 2. ԱՄՆ-ում գործող ապահովագրական ընկերությունը խրախուսում է և աջակցում է ներքին աուդիտորներին ստանալ համապատասխան հավաստագրեր: Կազմակերպությունը հովանավորում է դասընթացներ, որոնց միջոցով ներքին աուդիտի բոլոր աշխատակիցները ստացել են COSO հավաստագիր: Ներքին աուդիտի ղեկավարը հրավիրում է բիզնես ստորաբաժանումների թիմերին իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ վերապատրաստումներ անցկացնելու աուդիտորների համար և ի պատասխան՝ աուդիտորները իրազեկման դասընթացներ են կազմակերպում բիզնես ստորաբաժանումների համար:

Որակի հավաստիացման և բարելավման ծրագիր

ՆԱԻ 1300 ստանդարտների համաձայն ներքին աուդիտի գործառույթներից պահանջվում է ունենալ Որակի հավաստիացման և բարելավման ծրագրեր (Quality assurance and improvement programs (QAIPs)): Այս ստանդարտներին համապատասխանությունն ապահովելու համար կարող է նպատակահարմար լինի իրականացնել «բացերի վերլուծություն» (gap analysis), որի արդյունքում հայտնաբերված յուրաքանչյուր բացը դառնում է լուծման ենթակա խնդիր: Ահա մի օրինակ, թե ինչպես կարող է այս մեթոդը կիրառվել:

Աջակցություն որակի հավաստիացման և բարելավման ծրագրին

Որակի հավաստիացման և բարելավման համապարփակ ծրագիր մշակելու և ներդնելու վերաբերյալ տեղեկատվության համար տե՛ս ՆԱԻ «Որակի հավաստիացման և բարելավման ծրագիր» գործնական ուղեցույցը:

Օրինակ. Կախված թիմի մեծությունից բաժանվե՛ք խմբերի՝ յուրաքանչյուր խմբին հանձնարարելով հայտնաբերված բացերից մեկը: Թիմերը կարող են կազմված լինել ընդամենը երկու կամ երեք անձանցից՝ կախված ներքին աուդիտի գործառույթի մեծությունից: Լուծումների շուրջ կարծիքների քննարկումից հետո կազմակերպե՛ք հանդիպում ամբողջ դեպարտամենտով՝ կիսվելու, թե ինչի վրա է աշխատում յուրաքանչյուր խումբը, ինչ դժվարությունների հետ են նրանք բախվել, և խրախուսե՛ք թիմերի միջև քննարկումը՝ առաջարկվող լուծումների վերաբերյալ: Համաձայնության գալուց հետո լուծումները կարող են ներդրվել և վերահսկվել՝ հաջողությունը երաշխավորելու համար: Նման վարժությունները մոտիվացնում են թիմի անդամներին և խրախուսում են անհատական նվիրվածությունը, ինչը կարող է օգտակար լինել, քանի որ այդ լուծումները կարող են ազդել ամբողջ թիմի առօրյա առաջադրանքների և աշխատանքի վրա:

Ներքին աուդիտի ավելի մեծ գործառույթները և խմբերը, որոնց կարող են մասնակի պատվիրակված լինել ներքին աուդիտի գործառույթներ, կարող են ունենալ իրենց սեփական որակի հավաստիացման ներքին գործառույթը: Սա հաճախ առանձին խումբ է, որը չի իրականացնում աուդիտներ: Փոխարենը, այս խումբն աշխատում է ներքին աուդիտի գործառույթի հետ՝ ստուգելով աշխատանքային փաստաթղթերը, համապատասխան մեթոդաբանության կիրառումը և այլ գործողություններ: Ներքին աուդիտի գործառույթի կատարողականի չափանիշները ներառված են Որակի հավաստիացման և բարելավման ծրագրի շրջանակներում: Ներքին աուդիտի ղեկավարը

դեպարտամենտի կառավարման ռազմավարության շրջանակում պետք է ապահովի աուդիտի գործառույթի ինքնագնահատումների իրականացումը և որակի ու կատարողականի գնահատումը:

Ներքին աուդիտի գործառույթը յուրաքանչյուր հինգ տարին մեկ պետք է անցնի որակի անկախ գնահատում, ինչպես պահանջվում է 1312 – «Արտաքին գնահատում» ստանդարտով: Պարբերական ինքնագնահատումների անցկացումը և բացահայտված խնդիրների լուծումը կօգնեն հաջողության հասնել արտաքին գնահատման ժամանակ:

Ֆինանսական ծառայություններ մատուցող բազմաթիվ կազմակերպություններ ունեն այդ նպատակին հասնելուն աջակցող առանձին մասնագիտացված գործառույթ: Քանի որ շատ ֆինանսական կազմակերպություններ մեծ են և վարձում են աուդիտի մեծ խումբ, նրանք պետք է կառավարեն իրենց գործունեությունը՝ միասնական մոտեցումը խթանելու համար: Ներքին աուդիտի գործառույթը պետք է ունենա ընթացակարգեր յուրաքանչյուր տեսակի հանձնառության համար, ինչպես նաև բոլոր այլ գործողությունների համար փաստաթղթավորված փորձ (ռիսկերի գնահատում, հետստուգում, անկախության/ օբյեկտիվության պրակտիկա և այլն)՝ աուդիտորներին ամենուր ուղղորդելու համար:

Մասնագիտական գործունեության ներքին գործառույթը կլինի ներքին աուդիտի գործառույթի հիմնական մեթոդաբանության փաստաթղթավորման սեփականատերը, որը կանոնավոր կերպով կստուգի գործառույթի աշխատանքը՝ հավաստիանալու համար, որ գործընթացները, քաղաքականությունը և ընթացակարգերը համապատասխանում են մեթոդաբանությանը: Մասնագիտական գործունեության գործառույթը կարող է նաև խորհրդատվություն տրամադրել ներքին աուդիտին՝ ստորաբաժանման մեթոդաբանության կատարելագործման վերաբերյալ և կառավարել դեպարտամենտի ադմինիստրատիվ գործառույթները, ինչպիսիք են՝ բյուջեները, չափանիշները, ռազմավարությունը, բարելավման նախագծերը և այլն:

Հավելված 1. Կապակցված ՆԱԻ ստանդարտներ և ուղեցույցներ

Այս գործնական ուղեցույցում հղումներ են կատարվել ՆԱԻ ներքոնշյալ փաստաթղթերին: Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտների կիրառման վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար տե՛ս ՆԱԻ-ի Կիրառական ուղեցույցները:

Էթիկայի կանոններ
Սկզբունք 1: Ազնվություն
Սկզբունք 2: Անաչառություն
Սկզբունք 3: Գաղտնիություն
Սկզբունք 4: Կարողություն
Ստանդարտներ
Ստանդարտ 1100 – Անկախություն և անաչառություն
Ստանդարտ 1110 – Կազմակերպական անկախություն
Ստանդարտ 1111 – Խորհրդի հետ անմիջական փոխհարաբերություն
Ստանդարտ 1130 – Անկախության կամ անաչառության խաթարում
Ստանդարտ 1200 – Հմտություն և մասնագիտական պատշաճ ուշադրություն
Ստանդարտ 1230 – Շարունակական մասնագիտական զարգացում
Ստանդարտ 1300 – Որակի հավաստիացման և բարելավման ծրագիր
Ստանդարտ 1312 – Արտաքին գնահատում
Ստանդարտ 2000 – Ներքին աուդիտի գործառույթի կառավարում
Ստանդարտ 2010 – Պլանավորում
Ստանդարտ 2050 – Կոորդինացում և ապավինում
Ստանդարտ 2100 – Աշխատանքի էությունը
Ստանդարտ 2110 – Կորպորատիվ կառավարում
Ստանդարտ 2120 – Ռիսկերի կառավարում
Ստանդարտ 2130 – Հսկողություն
Ստանդարտ 2201 – Պլանավորման նկատառումներ
Ստանդարտ 2400 – Արդյունքների ներկայացում
Ստանդարտ 2410 – Ներկայացման չափանիշներ
Ստանդարտ 2440 – Արդյունքների տրամադրում
Ստանդարտ 2450 – Ընդհանուր եզրակացություններ

Ուղեցույցներ

«Բանկերի կապիտալի համարժեքության և սթրես-թեստավորման աուդիտ» գործնական ուղեցույց
(“Auditing Capital Adequacy and Stress Testing for Banks,” 2018)

«Իրացվելիության ռիսկի աուդիտ. ընդհանուր ակնարկ» գործնական ուղեցույց
(“Auditing Liquidity Risk: An Overview,” 2018)

«Մոդելների ռիսկերի կառավարման աուդիտ» գործնական ուղեցույց
(“Auditing Model Risk Management,” 2018)

«Կոորդինացում և ապավինում. Հավաստիացման քարտեզի մշակում» գործնական ուղեցույց
(“Coordination and Reliance: Developing an Assurance Map,” 2018)

«Հանձնառության պլանավորում. Նպատակների և շրջանակների սահմանում» գործնական ուղեցույց
(“Engagement Planning: Establishing Objectives and Scope,” 2017)

«Ներքին աուդիտը և պաշտպանության երկրորդ գիծը» գործնական ուղեցույց
(“Internal Audit and the Second Line of Defense,” 2012)

«Որակի հավաստիացման և բարելավման ծրագիր» գործնական ուղեցույց
(“Quality Assurance and Improvement Program,” 2012)

«Տաղանդների կառավարում. թիմի հիանալի անդամների աշխատանքի ընդունելը, զարգացնելը, մոտիվացնելը և պահելը» գործնական ուղեցույց
(“Talent Management: Recruiting, Developing, Motivating, and Retaining Great Team Members,” 2015)

Հավելված 2. Տերմինաբանություն

Աստղանիշով (*) նշված տերմինները վերցված են *ՆԱԻ Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի, 2017* հրատարակման «Տերմինաբանություն» բաժնից: Որոշ սահմանումներից բացի այստեղ ներառված են նաև հիմնական տերմինները: Դրանցից որոշները կարող են ներկայացված լինել հավելվածներում:

կապիտալ – Բազել III-ի համաձայն այն կազմված է Առաջին մակարդակի (Tier 1) կապիտալի (անընդհատ գործունեության (going concern) կապիտալ) և Երկրորդ մակարդակի (Tier 2) կապիտալի (ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում օգտագործվող (gone concern) կապիտալ) գումարից: Յուրաքանչյուր դասի համար կա չափանիշների խումբ, որին գործիքները պետք է բավարարեն: Այդ պահանջները նկարագրված են Բազելի փաստաթղթերում:

կապիտալի համարժեքություն – գործունեությունը շարունակելու և միևնույն ժամանակ վարկային, շուկայական և գործառնական ռիսկերը և անկայունությունը կլանելու համար բավարար կապիտալ:

ներքին աուդիտի ղեկավար* - Ներքին աուդիտի ղեկավարն իրենից ներկայացնում է բարձրագույն պաշտոնատար անձի դերը, ով պատասխանատու է ներքին աուդիտի գործառույթը արդյունավետորեն կառավարելու համար՝ ներքին աուդիտի կանոնադրությանը և Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի պարտադիր տարրերին համապատասխան: Ներքին աուդիտի ղեկավարը կամ նրան հաշվետու անձիք պետք է ունենան համապատասխան մասնագիտական հավաստագրեր և որակավորումներ: Ներքին աուդիտի ղեկավարի պաշտոնը (անվանումը) և/կամ պարտականությունները կազմակերպությունից կազմակերպություն կարող է տարբեր լինել:

հսկողություն* - Ղեկավարության, խորհրդի կամ այլ անձանց կողմից իրականացվող ցանկացած գործողություն, որն ուղղված է ռիսկերի կառավարմանն և սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման հավանականության բարձրացմանը: Ղեկավարությունը պլանավորում, կազմակերպում և ուղղորդում է բավարար գործողություններ՝ տրամադրելով խելամիտ հավաստիացում, որ սահմանված նպատակներն ու խնդիրները կիրականացվեն:

հսկողության միջավայր* - Խորհրդի և ղեկավարության վերաբերմունքն ու գործողությունները կազմակերպությունում հսկողության կարևորության վերաբերյալ: Հսկողական միջավայրն ապահովում է ներքին հսկողության

համակարգի առաջնային նպատակների իրականացման կարգն ու կառուցվածքը: Հսկողական միջավայրը ներառում է հետևյալ տարրերը.

- պարկեշտություն և բարոյական արժեքներ,
- ղեկավարության փիլիսոփայություն և գործելակերպ,
- կազմակերպական կառուցվածք,
- իրավասությունների ու պարտականությունների սահմանում,
- մարդկային ռեսուրսների քաղաքականություն ու փորձ,
- անձնակազմի կարողություններ:

ռիսկի հիմնական ցուցանիշներ – Համապատասխան ցուցանիշներ, որոնք օգտակար պատկերացումներ են տալիս կազմակերպության նպատակների իրականացման վրա ազդեցություն ունեցող հնարավոր ռիսկերի վերաբերյալ: [28]

լևերեջի ցուցանիշ – Բազել III-ի համաձայն՝ կապիտալի ցուցանիշը (համարիչ) բաժանած ռիսկի ցուցանիշի վրա (հայտարար), արտահայտված տոկոսով: լևերեջի ցուցանիշ = կապիտալի ցուցանիշ/ ռիսկի ցուցանիշ

իրացվելիություն – Բանկի՝ ակտիվների մեծացումը ֆինանսավորելու և պարտավորությունները ժամանակին կատարելու կարողությունն է՝ առանց անընդունելի կորուստներ ունենալու: [29]

ռիսկ* – Այն դեպքի ի հայտ գալու հավանականությունը, որը բացասական ազդեցություն կունենա նպատակների իրականացման վրա: Ռիսկը չափվում է ազդեցությամբ և հավանականությամբ:

ռիսկի ախորժակ* – Ռիսկի այն մակարդակը, որը կազմակերպությունը պատրաստ է ընդունել:

ռիսկի ախորժակի սահմանում – Գրավոր ձևակերպում ռիսկի ընդհանուր մակարդակի և տեսակների մասին, որոնք բանկը՝ իր բիզնես նպատակներին հասնելու համար, ընդունում է կամ որոնցից խուսափում է: Այն ներառում է քանակական ցուցանիշներ, որոնք արտահայտված են եկամուտների, կապիտալի, ռիսկի, իրացվելիության և այլ համապատասխան ցուցանիշների նկատմամբ: Այն նաև պետք է ներառի որակական սահմանումներ՝ հեղինակության և վարքագծային ռիսկերի, ինչպես նաև փողերի լվացման և էթիկայի կանոններին հակասող գործելակերպի վերաբերյալ: [30]

---

[28] Mark S. Beasley, Bruce C. Branson, and Bonnie V. Hancock, *Developing Key Risk Indicators to Strengthen Enterprise Risk Management* (COSO, December 2010). https://www.coso.org/Documents/COSO-KRI-Paper-Full-FINAL-for-Web- Posting-Dec110-000.pdf.

[29] "Principles for Sound Liquidity Risk Management and Supervision," Basel Committee on Banking Supervision, Bank for International Settlements, September 2008, https://www.bis.org/publ/bcbs144.pdf.

[30] "Principles for An Effective Risk Appetite Framework," Financial Stability Board, November 2013, http://www.fsb.org/wp-content/uploads/r_131118.pdf.

ռիսկի սահմանաչափ – Որոշակի քանակական ցուցանիշներ կամ սահմանաչափեր՝ հիմնված, օրինակ, հեռանկարային ենթադրությունների վրա, որոնք բաշխում են բանկի համախառն ռիսկը բիզնես գործառույթների, իրավաբանական անձանց, ռիսկերի որոշակի կատեգորիաների, կենտրոնացումների և այլ համապատասխան չափանիշների միջև: [19]

ռիսկի պրոֆիլ – Ներկայիս կամ հեռանկարային ենթադրություններից ելնելով որոշակի պահի դրությամբ գնահատված բանկի համախառն ռիսկը (նախքան զսպող միջոցների կիրառումը) կամ զուտ ռիսկը (զսպող միջոցները հաշվի առնելուց հետո)՝ համախմբված յուրաքանչյուր համապատասխան ռիսկի կատեգորիայի ներսում և դրանց միջև: [19]

ռիսկերի կառավարում* – Հավանական դեպքերի կամ իրավիճակների բացահայտման, գնահատման, կառավարման և հսկման գործընթաց, որն ուղղված է կազմակերպության նպատակների իրականացման վերաբերյալ խելամիտ հավաստիացում տրամադրելուն:

ռիսկի ռազմավարություն – Կազմակերպության՝ իր առաքելությանը և տեսլականին հասնելու և հիմնական արժեքը գործադրելու ծրագիրը:

Հավելված 3. Ֆինանսական կազմակերպությունների կանոնակարգման հիմնական սկզբունքները

Կաշառքի և կոռուպցիայի դեմ պայքար – Կաշառքը սահմանվում է որպես որևէ արժեքավոր բան առաջարկելը, տալը կամ ստանալը, որը նպատակ է հետապնդում անձին դրդել կատարել որոշակի գործողություն կամ պարգևատրել արդեն կատարած գործողության համար: Երկրների մեծամասնությունն ունի օրենքներ և կանոնակարգեր, որոնցով կաշառք առաջարկելը և ստանալը, ինչպես նաև՝ դրա հետ կապված կոռուպցիոն վարքագիծը, համարվում է անօրինական: Կաշառքի և կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունները պետք է ներառեն դրույթներ, որոնք նկարագրում են ուղղակիորեն կամ անուղղակիորեն այլ անձանց վրա ազդելու (կաշառք կամ գումարից որոշակի տոկոս տալով կամ ստանալով, կամ անօրինական, էթիկայի կանոններին հակասող, կամ կազմակերպության ազնիվ և պարկեշտ լինելու հեղինակությանը վնասող ցանկացած այլ եղանակով) հետևանքները: Արժեքավոր բան համարվում է ոչ միայն փողը, այլ նաև նվերները, հյուրասիրությունները, ճանապարհորդությունը, քաղաքական ներդրումները, աշխատանքի առաջարկները և այլն: [31]

Փողերի լվացման դեմ պայքար – Փողերի լվացման դեմ պայքարի ծրագրերը բաղկացած են մի շարք ընթացակարգերից, օրենքներից և կանոնակարգերից, որոնց նպատակն է անձանց կողմից և կազմակերպված հանցավորությունների միջոցով բանկային համակարգի միջոցով գումար ուղարկելով, անօրինական կերպով ստացված եկամուտը որպես օրինական եկամուտ քողարկելու դեպքերի բացահայտումն և կանխումը: Որոշ երկրներ այս օրենքներում ներառում են նաև ահաբեկչության ֆինանսավորման արգելքներ: Ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունները պարտավոր են ունենալ քաղաքականություն և ընթացակարգեր՝ կանխելու փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման նպատակով տեխնոլոգիական զարգացումների օգտագործումը, ինչպիսիք են՝ էլեկտրոնային փողը, ԱԳՄ-ները, կամ այլ դեպոզիտային ցանցերը և ոչ անձնական գործարքները: Նրանցից նաև պահանջվում է ներդնել բոլոր գործարքների համար մոնիտորինգի այնպիսի գործընթաց, որը թույլ կտա պարզել, արդյոք հաճախորդի գործարքը համապատասխանում է ներդրված գործարքների և վարքագծի ընդունելի պրոֆիլներին: [32]

[31] "Global Overview of Anti-Corruption Laws 2017," Global Compliance News. 2017, accessed June 13, 2019. https://globalcompliancenews.com/anti-corruption/anti-corruption-laws-around-the-world/.

[32] "New Ecuadorean resolutions establish mandatory compliance programs for financial institutions and insurance companies," Global Compliance News, August 27, 2018, accessed June 13, 2019. https://globalcompliancenews.com/ecuador-mandatory-compliance-programs-20180827/#.

Խորհրդի և պաշտոնյաների որակավորման պահանջներ – Համաձայն Ավանդների երաշխավորման դաշնային կորպորացիայի (Federal Deposit Insurance Corporation (FDIC)). «խորհրդի անդամների ընտրությունը կարգավորող տարբեր օրենքներ ընդգծում են տնօրենի պաշտոնի կարևորությունը: Օրենսդրական կամ կանոնակարգող որակավորումները սովորաբար ներառում են պաշտոնում երդմնակալելը, բանկի կապիտալի որոշակի մասնաբաժնի ազատ տիրապետելը և բնակությանը և քաղաքացիությանը վերաբերող պահանջներ: Այլ օրենքներ նույնպես վերաբերում են տնօրենների որակավորմանը և ընտրությանը: Օրինակ, կան որոշակի սահմանափակումներ, արգելքներ և պատժամիջոցներ կապված այլ կազմակերպությունում տնօրեն լինելու հետ (interlocking directorates), տնօրենների կողմից ակտիվների գնման կամ տնօրեններին ակտիվների վաճառքի հետ, վարկերի ստացման համար միջնորդավճարների և նվերների հետ, և հանցավոր գործողությունների հետ, ինչպիսիք են՝ յուրացումը, վատնումը, կազմակերպության միջոցների՝ ոչ կազմակերպության շահերից ելնելով օգտագործումը, կեղծ տվյալների մուտքագրում կատարելը և ոչ պատշաճ քաղաքական ներդրումները: Այս որակավորումներն ու սահմանափակումները չունեն իրենց համարժեքները ընդհանուր կորպորատիվ իրավունքի մեջ և ցույց են տալիս ու շեշտում են բանկային գործունեության քվազի-հանրային բնույթը, բանկի տնօրենի բացառիկ դերը և այդ կառույցի լուրջ պարտականությունները»:[33]

Կապիտալի պահանջներ – Բազելյան ստանդարտը բանկերից պահանջում է պահպանել վնասները ծածկելու համար կապիտալի նվազագույն մակարդակներ՝ իրենց հաշվեկշիռներում առկա ռիսկային ակտիվներին համամասնորեն: Յուրաքանչյուր բանկ պատասխանատու է **կապիտալի համարժեքության** նվազագույն ցուցանիշի պահպանման համար և պետք է հաշվի առնի կապիտալը կայացված ցանկացած որոշման մեջ: Տարածաշրջանային կամ գլոբալ ներկայություն ունեցող բանկերը պետք է ապահովեն, որ բացի Բազել II և III պահանջներից, իրենց կողմից հաշվի առնվեն նաև տեղական կանոնակարգերով սահմանված կապիտալի պահանջները, քանի որ դրանք կարող են տարբեր լինել:

[33] Federal Deposit Insurance Corporation. 2018. RMS Manual of Examination policies. Section 4.1-3. https://www.fdic.gov/regulations/safety/manual/section4-1.pdf.

Սպառողների պաշտպանություն - Երկրների մեծամասնությունն ունի սպառողների պաշտպանության համակարգ, որը ներառում է մի շարք օրենքներ, կանոնակարգեր և հարկադիր կատարման մարմիններ: Սպառողների պաշտպանության օրենսդրության և հարկադիր կատարման նպատակն է հնարավորություն տալ սպառողներին կատարել տեղեկացված ընտրություն և պաշտպանված լինել վնաս պատճառող գործարար պրակտիկայից: Կարգավորման տարածված մոտեցումից մեկն այն է, որ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններից պահանջվում է ֆինանսական պրոդուկտի գնման ժամանակ հաճախորդներին տրամադրել Էական պայմանների թերթիկ (Key Facts Statement) (պրոդուկտի առանձնահատկությունների և ծախսերի պարզ, համեմատելի ամփոփագիր): Հետազոտության արդյունքների համաձայն, 81 օրենսդրություններից… հայտնում են, որ ֆինանսական ծառայություններ մատուցող ընկերությունների համար առկա են Էական պայմանների թերթիկ տրամադրելու մի շարք պահանջներ: [34]

Տվյալների գաղտնիություն. Համաշխարհային մասշտաբով կան տարբեր կանոնակարգեր, որոնք կարգավորում են հաճախորդների տվյալները: ԱՄՆ-ում, «Գրամմ-Լիչ-Բլիլի» օրենքը (Gramm-Leach-Bliley Act), որն ընդունվել է 1999 թվականին, դեպոզիտորական հաստատություններից պահանջում է մշակել գաղտնիության քաղաքականություն և սպառողներին ներկայացնել, թե ինչպես են դեպոզիտորական հաստատությունները հավաքում և կիսվում անդամների վերաբերյալ «զգայուն» տեղեկատվությամբ, այդ թվում՝ անուն, հասցե և սոցիալական ապահովության համարներ: [35] ԵՄ Խորհրդարանի կողմից 2016թ. մշակվել է և 2018թ. մայիսից ուժի մեջ է մտել Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (General Data Protection Regulation (GDPR)): Կանոնակարգը ընկերություններից պահանջում է պաշտպանել ԵՄ քաղաքացիների անձնական տվյալները և գաղտնիությունը ԵՄ անդամ երկրներում իրականացվող գործարքների համար: Կանոնակարգը կարգավորում է նաև անձնական տվյալների արտահանումը ԵՄ-ից դուրս: Այնպիսի տվյալների համար, ինչպիսիք են անհատի թվային ինտերնետ-հասցեն (IP հասցե) կամ ինտերնետ բրաուզերի քուքի տվյալները (cookie data), ընկերություններին անհրաժեշտ կլինի պաշտպանության նույն մակարդակը, որը նրանք ապահովում են անվան, հասցեի և սոցիալական ապահովության համարի համար: Համապատասխանությունը չապահովելը կարող է հանգեցնել խիստ պատժամիջոցների կիրառմանը: [36]

---

[34] The World Bank. January 31, 2018. "New Resources and Benchmarking on Financial Consumer Protection and Financial Inclusion." https://www.worldbank.org/en/news/feature/2018/01/31/new-resources-and-benchmarking-on- financial-consumer-protection-and-financial-inclusion.

[35] National Association of Federally-Insured Credit Unions, Compliance GPS (2017) p. 495.

[36] Nadeau, Michael. 2018. "General Data Protection Regulation [GDPR]: What you need to know to stay compliant." *CSO Magazine.* April 23, 2018. https://www.csoonline.com/article/3202771/general-data-protection-regulation-gdpr- requirements-deadlines-and-facts.html.

Ֆինանսական հաշվետվությունների կանոնակարգումներ – Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (International Financial Reporting Standards (IFRS)) հաշվապահական այն սկզբունքների ամբողջությունն են, որոնց ընկերությունները հետևում են իրենց ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և հրապարակելիս՝ ապահովելով ընկերության ֆինանսական գործունեության ներկայացման ստանդարտացված ձևը: Հանրային հաշվետու ընկերություններից (որոնք ցուցակված են հանրային ֆոնդային բորսաներում) և ֆինանսական կազմակերպություններից օրենքով պահանջվում է հրապարակել իրենց ֆինանսական հաշվետվությունները՝ համապատասխան համաձայնեցված հաշվապահական հաշվառման ստանդարտներին: [37]

Ճանաչիր քո հաճախորդին (Know Your Customer (KYC))/ Հաճախորդի պատշաճ ուսումնասիրում (Customer Due Diligence (CDD)) – Կապված փողերի լվացման դեմ պայքարի համապատասխանության հետ՝ «Ճանաչիր քո հաճախորդին» կանոնները կարգավորում են կազմակերպությունների՝ հաճախորդի ինքնությունը ստուգելու կարողությունը: «Հաճախորդի պատշաճ ուսումնասիրությունը» նույնականացումից հետո բացահայտում է հաճախորդի «կենսունակությունը» կամ հնարավոր ռիսկերը, ներառյալ՝ պատշաճ ուսումնասիրության պահանջները հաստատությունների նկատմամբ:

Սանկցիաներ – Տնտեսական սանկցիաները մեկ կամ մի քանի երկրների կողմից կիրառվող առևտրային և ֆինանսական պատժամիջոցներն են՝ թիրախավորված ինքնիշխան պետության, խմբի կամ անհատի դեմ: Տնտեսական պատժամիջոցները կարող են ներառել տարբեր տեսակի առևտրային խոչընդոտներ, սակագներ և ֆինանսական գործարքների սահմանափակումներ: ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն՝ միայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միջազգային հանրության կողմից ունի մանդատ՝ կիրառելու պատժամիջոցներ (Հոդված 41), որը պետք է կատարեն ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրները (Հոդված 2,2): Դրանք հանդիսանում են միջազգային հանրության ամենաուժեղ «խաղաղ միջոցները»՝ միջազգային խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող վտանգները կանխելու կամ կարգավորելու համար: Պատժամիջոցները չեն ներառում ռազմական ուժի կիրառում:

[37] International Financial Reporting Standards. “About us.” Accessed April 23, 2019. https://www.ifrs.org/about- us/who-we-are/.

ՄԱԿ-ի պատժամիջոցները չպետք է շփոթել միակողմանի պատժամիջոցների հետ, որոնք սահմանվում են առանձին երկրների կողմից՝ իրենց ռազմավարական շահերից ելնելով:[38] Սովորաբար նախատեսված լինելով որպես հզոր տնտեսական հարկադրանք, միակողմանի պատժամիջոցների ներքո կիրառվող միջոցները կարող են տատանվել հարկադրական դիվանագիտական ջանքերից մինչև տնտեսական պատերազմ և պատերազմի նախերգանք: Բազմաթիվ ֆինանսական հաստատություններ օգտագործում են Արտաքին ակտիվների վերահսկողության գրասենյակի (Office of Foreign Assets Control (OFAC)) սանկցիաների ցուցակը, որը տրամադրվում է ԱՄՆ կողմից: ԵՄ-ն նույնպես ներկայացնում է պատժամիջոցների ենթարկված երկրների, հաստատությունների և մարդկանց ցուցակ: Ֆինանսական ծառայություններ մատուցող շատ ընկերություններ օգտագործում են նաև Միացյալ Թագավորության HM Treasury-ի կողմից հրապարակված ցուցակը: Այս ցուցակները ծավալուն են և ոչ համադրելի, ինչի արդյունքում գործարքների սքրինինգը հսկայական խնդիր է դառնում մեծ կազմակերպությունների համար:

[38] Carisch, Enrico, Loraine Rickard-Martin, Shawna R. Meister. The evolution of UN sanctions: from a tool of warfare to a tool of peace, security and human rights. Cham, Switzerland: Springer, 2017. https://www.worldcat.org/title/evolution- of-un-sanctions-from-a-tool-of-warfare-to-a-tool-of-peace-security-and-human-rights/oclc/1008962905.

Հավելված 4. Հապավումների ուղեցույց

Այս հապավումները հաճախ օգտագործվում են ֆինանսական ծառայությունների ոլորտում:

Ֆինանսական ծառայությունների ոլորտի հապավումներ

Հապավում	Կազմակերպություն/ հաստատություն/ կառավարության գործողություններ/ տարածված արտահայտություններ
AIFMD	Alternative Investment Fund Managers Directive
AML	Anti-money laundering
AMLD 4	Anti-Money Laundering Directive (fourth)
AMLD 5	Anti-Money Laundering Directive (fifth)
BCBS	Basel Committee of Banking Supervision
BHCA	Bank Holding Company Act of 1956
BIS	Bank for International Settlements
BRRD	Bank Recovery and Resolution Directive
BSA	U.S. Bank Secrecy Act of 1970
CAT	Cybersecurity Assessment Tool
CCP	Central Counterparties
CDD	Customer Due Diligence
CFPB	Consumer Financial Protection Bureau
CFR	Code of Federal Regulations
COBIT	Control Objectives for Information and Related Technologies
COREP	Common Reporting
COSO	Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission
CRD IV	Capital Requirements Directive IV
CRR	Capital Requirements Regulation
EBA	European Banking Authority
EC	European Commission
ECB	European Central Bank
EIOPA	European Insurance and Occupational Pensions Authority
ELTIF	European Long-term Investment Funds
EMIR	European Market Infrastructure Regulation
ESAs	European Supervisory Authorities
ESFS	European System of Financial Supervision
EMSA	European Securities and Market Authority
EU	European Union
EuSEF	European Social Entrepreneurship Funds
EuVECA	European Venture Capital Fund
FDIC	Federal Deposit Insurance Corporation
FDICIA	Federal Deposit Insurance Corporation Act of 1991

Ֆինանսական ծառայությունների ոլորտի հապավումներ (շարունակություն)

Հապավում	Կազմակերպություն/ հաստատություն/ կառավարության գործողություններ/ տարածված արտահայտություններ
FFEIC	Federal Financial Institution Examination Council
FinCEN	Financial Crimes Enforcement Network
FINRA	Financial Industry Regulatory Authority
FINREP	Financial reporting
FinTECH	Financial technology
FIO	Financial Insurance Office
FRB	Federal Reserve Board (also known as The Fed)
FSOC	Financial Stability Oversight Council
GDPR	General Data Protection Regulation
IAIS	International Association of Insurance Supervisors
ICAAP	Internal Capital Adequacy Assessment Process
IFRS	International Financial Reporting Standards
IOSCO	International Organization of Securities Commissions
IPPF	International Professional Practices Framework
KPIs	Key performance indicators
KRIs	Key risk indicators
KYC	Know Your Customer
MiFID II	Markets in Financial Instruments Directive
MiFIR	Markets in Financial Instruments Regulation
NACFU	National Association of Federally-Insured Credit Unions
NAIC	National Association of Insurance Commissioners
NBFI	Nonbank financial institutions
NCUA	National Credit Union Administration
NIST	National Institute of Standards and Technology
OCC	Office of the Comptroller of the Currency
OTC	Over-the-counter
OFAC	Office of Foreign Assets Control
OTF	Organised Trading Facility
PCAOB	Public Company Accounting Oversight Board
PEPs	Politically exposed persons
RCSA	Risk and control self-assessments
SEC	U.S. Securities and Exchange Commission
SRO	Self-regulatory organization
SSM	Single Supervisory Mechanism
UCITS	Undertakings for Collective Investment in Transferable Securities
USA PATRIOT Act	Uniting and Strengthening America by Providing Appropriate Tools Required to Intercept and Obstruct Terrorism Act of 2001

Հավելված 5. Կենտրոնական բանկերի դերը

Կենտրոնական բանկը, պահուստային բանկը կամ դրամավարկային մարմինը այն հաստատությունն է, որը կառավարում է երկրի կամ արժութային միության արժույթը, փողի զանգվածը և տոկոսադրույքները, և վերահսկում է առևտրային բանկային համակարգը, ներառյալ վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերը: ԱՄՆ-ում որպես կենտրոնական բանկ հանդես է գալիս Դաշնային պահուստային խորհուրդը (Fed), այլ կենտրոնական բանկերից են՝ Եվրոպական կենտրոնական բանկը (ECB), Անգլիայի բանկը (Bank of England), Չինաստանի ժողովրդական բանկը (People's Bank of China): Որոշ երկրներում կենտրոնական բանկերը և պրուդենցիալ/ վերահսկողական կարգավորող մարմինները մեկ կազմակերպություն են, ինչպիսին է Սաուդյան Արաբիայում Սաուդյան Արաբիայի դրամավարկային մարմինը (Saudi Arabian Monetary Authority SAMA)): Զարգացած երկրների մեծ մասում կենտրոնական բանկերը ինստիտուցիոնալ առումով անկախ են քաղաքական ազդեցությունից:

Կենտրոնական բանկերը հսկում են փողի զանգվածը երեք եղանակով.

- Պահանջելով բանկերից ունենալ պահուստներ,
- Կառավարելով տոկոսադրույքները,
- Ապահովելով բաց շուկայում գործառնությունները:

Բանկերից պահանջվում է բանկում պահել բոլոր ավանդների որոշակի տոկոսը, որը հայտնի է որպես «պարտադիր պահուստավորման պահանջ» կամ «իրացվելիության ցուցանիշ»:[39] Երբ պահուստավորման պահանջները բարձրանում են, բանկերն ավելի քիչ փող են ունենում վարկեր տրամադրելու համար, և հակառակը: Կենտրոնական բանկերը վերահսկում են նաև «զեղչատոկոսը», որն այն տոկոսադրույքն է, որը կենտրոնական բանկը գանձում է իրենից վարկ վերցնող բանկերից: Տոկոսադրույքների իջեցումը հիմնականում հանգեցնում է փողի զանգվածի ավելացմանը և տնտեսությունում իրացվելիություն բարձրացմանը: Կենտրոնական բանկերը շուկայում իրենց մասնակցությունն են ունենում նաև պետական արժեթղթերով: Կենտրոնական բանկերը գնում և վաճառում են գանձապետական արժեթղթեր (ԱՄՆ-ում դրանք հայտնի են որպես գանձապետական կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր (T-bills, T-notes, T-bonds)) կամ ընդհանուր՝ «պետական պարտք»): Կենտրոնական բանկերը նվազեցնում են փողի զանգվածը գանձապետական արժեթղթեր վաճառելով և բարձրացնում են փողի զանգվածը՝ դրանք գնելով:

[39] "Basel III: The Liquidity Coverage Ratio and liquidity risk monitoring tools," Basel Committee on Banking Supervision, Bank for International Settlements, January 2013, https://www.bis.org/publ/bcbs238.pdf.

Կենտրոնական բանկերի կողմից բաց շուկայական գործառնությունների ամենատարածված տեսակը մեկօրյա (օվերնայթ) հետգնման կամ «ռեպո» համաձայնագիրն է, որը կարճ ժամանակահատվածում փոխում է փողի զանգվածը՝ ժամանակավորապես գնելով կամ վաճառելով պետական արժեթղթեր:

Հավելված 6. Ռիսկի կատեգորիաների օրինակներ – Ֆինանսական հաստատություններ

Աղյուսակում ներկայացված են ռիսկի հիմնական ոլորտները, որոնք պետք է հաշվի առնեն ներքին աուդիտորները ֆինանսական հաստատություններում հանձնառությունների իրականացման ժամանակ: Ցանկն ամբողջական չէ և նախատեսված չէ որպես հանձնառության աշխատանքային ծրագիր կամ ստուգաթերթ օգտագործելու համար:

Ռիսկի կատեգորիաների օրինակներ ֆինանսական հաստատությունների համար

Ռիսկի կատեգորիա	Ռիսկի նկարագրություն
Ռազմավարական ռիսկ	Կազմակերպության ռազմավարական նպատակներին չհասնելու ռիսկ: Օրինակ՝ ծախսերի կառավարում; ճգնաժամային կառավարում; կորպորատիվ կառավարում; նոր բիզնեսի հաստատումներ և ղեկավարությանը տրամադրվող տեղեկատվության որակ; կլիմայի ռիսկ; ֆինանսական տեխնոլոգիաների հեղափոխություն; միաձուլումներ և ձեռքբերումներ; քաղաքական անկայունություն:
Վարքագծային և հեղինակության	Վարքագծային պահանջներին չհամապատասխանելու և հեղինակության ռիսկի ոչ արդյունավետ կառավարման ռիսկ: Օրինակ՝ մատչելիություն և խոցելի հաճախորդներ; կաշառքի դեմ պայքար; բողոքներ; խթաններ; փողերի լվացման դեմ պայքար; շուկայի չարաշահում; պատժամիջոցներ; համապատասխանություն (suitability); մրցակցություն; վերահսկողության պակաս:
Գործառնական ռիսկ	Մարդկանց և գործընթացները ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ վերջնական օգտագործողի ծրագրային ապահովում (end-user computing); գործառնական ռիսկերի կառավարում; արտապատվիրակում; կատարողականի կառավարում; վերապատրաստում; պայմանագրային փաստաթղթավորում; մշակույթ և վարքագիծ; տվյալների ամբողջականություն; տաղանդների կառավարում:
SS	SS ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ կիբերանվտանգություն; տվյալների կորստի կանխում; «ժառանգված համակարգեր» (legacy systems); տեխնոլոգիական ռիսկի կառավարում; ամպային (cloud) տեխնոլոգիաներ; տվյալների պաշտպանություն; տվյալների պահպանում; թվային ուղիներ; դիմացկունություն; անընդհատություն:
Կարգավորում և համապատասխանություն	Օրենքներին և կանոնակարգերին չհամապատասխանելու ռիսկը: Օրինակ՝ հաճախորդի ակտիվներ/ CASS ռեժիմ; համապատասխանության ռիսկերի կառավարում; գործարքների վերաբերյալ հաշվետվողականություն; փողերի լվացման դեմ պայքարի դիրեկտիվներ; BCBS 239 – ռիսկի տվյալների ագրեգացում; տեղական և գլոբալ համակարգային նշանակության բանկեր; Եվրոպական շուկայի ենթակառուցվածքի կարգավորում (European market infrastructure regulation); Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ (GDPR); Ֆինանսական գործիքների շուկաների դիրեկտիվ (MiFID II); վճարային ծառայությունների դիրեկտիվ; բանկերի վերականգնման ծրագրեր (Bank Recovery and Resolution Directive [BRRD]):

Աշխարհաքաղաքական	Շրջակա միջավայրի և քաղաքական իրավիճակների փոփոխություններին չադապտացվելու ռիսկը: Օրինակ ՝ Brexit; մակրոտնտեսություն; բնական աղետ; քաղաքական միջամտություն; պատժամիջոցներ; ահաբեկչություն; կլիմայի փոփոխություն:
Շուկայական ռիսկ	Շուկայական ռիսկի ոչ արդյունավետ կառավարման ռիսկ: Օրինակ՝ շուկայական ռիսկի կառավարում; մոդելների ռիսկ; սթրես-թեստավորում; ներդրումային գործունեության մատյանի (ֆինանսական գործիքների պորտֆել) արմատական վերանայում; տոկոսադրույքի ռիսկ:
Վարկային ռիսկ և ակտիվների որակ	Վարկային ռիսկը ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ գրավի կառավարում; կենտրոնացումներ; գործընկերոջ ռիսկ; վարկային ռիսկի կառավարում; վարկային պատժամիջոցների կիրառում; մոդելների ռիսկ; պահուստների ձևավորում; ՖՀՄՍ 9: ֆինանսական գործիք; գնագոյացում:
Ֆինանսական և հարկային ռիսկ	Հարկային կարգավորումներին չհամապատասխանելու և հարկերն ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ աուդիտի ռոտացիա; կորպորատիվ քրեական հանցագործություն; ֆինանսավորման ծախսեր; պրոդուկտի գնագոյացում; տրանսֆերային գնագոյացում; գնահատում; նոր հաշվապահական ստանդարտ:
Կապիտալի և իրացվելիության ռիսկ	Կապիտալը և իրացվելիությունը ոչ զգուշորեն և անարդյունավետորեն կառավարելու ռիսկ: Օրինակ՝ սթրես-թեստավորում; կապիտալի կառավարում; ընդհանուր հաշվետվողականություն (COREP); ֆինանսական հաշվետվողականություն (FINREP); կապիտալի պահանջների դիրեկտիվ IV (CRD IV, կապիտալի պահանջների կարգավորում (CRR), և Բազել III); Ներքին կապիտալի համարժեքության գնահատման գործընթաց (ICAAP); իրացվելիության ցուցանիշ; իրացվելիության կառավարում; Բազել IV; **լևերեջի ցուցանիշ**:

Աղբյուրը. Ադապտացված PwC և Միջազգային հաշվարկների բանկի (Bank for International Settlements (BIS)) հրապարակումներից

Հավելված 7. Ռիսկի կատեգորիաների օրինակներ – Ապահովագրական ընկերություններ

Աղյուսակում ներկայացված են ռիսկի հիմնական ոլորտները, որոնք պետք է հաշվի առնեն ներքին աուդիտորները ապահովագրական ընկերություններում հանձնառությունների իրականացման ժամանակ: Ցանկն ամբողջական չէ և նախատեսված չէ որպես հանձնառության աշխատանքային ծրագիր կամ ստուգաթերթ օգտագործելու համար:

Ռիսկի կատեգորիաների օրինակներ ապահովագրական ընկերությունների համար

Ռիսկի կատեգորիա	Ռիսկի նկարագրություն
Ռազմավարական ռիսկ	Կազմակերպության ռազմավարական նպատակներին չհասնելու ռիսկ: Օրինակ՝ ծախսերի կառավարում; ճգնաժամային կառավարում; կորպորատիվ կառավարում; նոր բիզնես հաստատումներ և ղեկավարությանը տրամադրվող տեղեկատվության որակ; կլիմայի ռիսկ; միաձուլումներ և ձեռքբերումներ; քաղաքական անկայունություն; մրցակցություն; գործունեության մոդել; ձեռքբերման վտանգ:
Վարքագծային և հեղինակության	Վարքագծային պահանջներին չհամապատասխանելու և հեղինակության ռիսկի ոչ արդյունավետ կառավարման ռիսկ: Օրինակ՝ մատչելիություն և խոցելի հաճախորդներ; կաշառքի դեմ պայքար; բողոքներ; խթաններ; փողերի լվացման դեմ պայքար; շուկայի չարաշահում; պատժամիջոցներ; համապատասխանություն (suitability); մրցակցություն; վերահսկողության պակաս:
Գործառնական ռիսկ	Մարդկանց և գործընթացները ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ վերջնական օգտագործողի ծրագրային ապահովում (end-user computing); գործառնական ռիսկերի կառավարում; արտապատվիրակում; կատարողականի կառավարում; վերապատրաստում; պայմանագրային փաստաթղթավորում; մշակույթ և վարքագիծ; տվյալների ամբողջականություն; տաղանդների կառավարում:
SS	SS ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ բարդություն և մաշվածություն; ֆինանսական տեխնոլոգիաներ; դիմացկունություն; թվային հեղափոխություն; երրորդ անձ մատակարարներ; ներդրումների օպտիմալացում; կիբերանվտանգություն; տվյալների կորստի կանխում; «ժառանգված համակարգեր»; տեխնոլոգիական ռիսկի կառավարում; ամպային (cloud) տեխնոլոգիաներ; տվյալների պաշտպանություն; տվյալների պահպանում; թվային ուղիներ; անընդհատություն:
Կարգավորում և համապատասխանություն	Օրենքներին և կանոնակարգերին չհամապատասխանելու ռիսկը: Օրինակ՝ համապատասխանության ռիսկերի կառավարում; փողերի լվացման դեմ պայքարի դիրեկտիվներ; BCBS 239 – ռիսկի տվյալների ագրեգացում; Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգ (GDPR); բողոքներ; «Վճարունակություն II» ակտիվների կանոններ; «Վճարունակություն II» հաշվետվողականություն; ՖՀՍՍ 4; Ֆինանսական գործիքների շուկաների դիրեկտիվ (MiFID II); ստանդարտ բանաձևերի վերանայում:

Անդերրայթինգ /պահուստավորում	Ռիսկի ենթարկվածությունը չափելու և դրան համապատասխան ապահովագրավճարը սահմանելու ձախողումը: Օրինակ՝ ոչ համարժեք պահուստավորում; վատ անդերրայթինգ (underwriting); անդերրայթինգի ռազմավարություն, պարտավորության նոր տեսակները; գնագոյացման ճկունություն:
Աշխարհաքաղաքական	Շրջակա միջավայրի և քաղաքական իրավիճակների փոփոխություններին չադապտացվելու ռիսկը: Օրինակ՝ Brexit; մակրոտնտեսություն; բնական աղետ; քաղաքական միջամտություն; պատժամիջոցներ; ահաբեկչություն; կլիմայի փոփոխություն; կյանքի սպասվող տևողություն:
Ֆինանսական և հարկային ռիսկ	Հարկային կարգավորումներին չհամապատասխանելու և հարկերն ոչ արդյունավետ կառավարելու ռիսկը: Օրինակ՝ աուդիտի ռոտացիա; կորպորատիվ քրեական հանցագործություն; ֆինանսավորման ծախսեր; պրոդուկտի գնագոյացում; տրանսֆերային գնագոյացում; գնահատում; նոր հաշվապահական ստանդարտ:
Շուկայի և հաճախորդների	Շուկայի փոփոխություններին և հաճախորդների վարքագծին ադապտացվել չկարողանալը: Օրինակ՝ տեղաբաշխման ուղիներ (distribution channels); անուիտետի փոփոխություններ; բրենդի քայքայում; հաճախորդների վարքագծեր; երաշխավորված ապրանքներ; փոխվող ժողովրդագրություն; հասարակության ավտոմատացում; դատական գործ; երկարաժամկետ պարտավորություններ; նոր մասնակիցներ; նորարարություն:

Աղբյուրը. Ադապտացված PwC և Միջազգային հաշվարկների բանկի (Bank for International Settlements (BIS)) հրապարակումներից

Հավելված 8. Հղումներ և լրացուցիչ ընթերցանություն

Հղումներ

Basel Committee on Banking Supervision. *Basel III: The Liquidity Coverage Ratio and liquidity risk monitoring tools.* (Basel, Switzerland: Bank for International Settlements, 2013). https://www.bis.org/publ/bcbs238.pdf.

Basel Committee on Banking Supervision. *Compliance and the compliance function in banks.* (Basel, Switzerland: Bank of International Settlements, 2005). https://www.bis.org/publ/bcbs113.pdf.

Basel Committee on Banking Supervision. *Enhancements to the Basel II framework.* (Basel, Switzerland, Bank for International Settlements, 2009). https://www.bis.org/publ/bcbs157.pdf.

Basel Committee on Banking Supervision. *Principles for Sound Liquidity Risk Management and Supervision.* (Basel, Switzerland: Bank for International Settlements, 2008). https://www.bis.org/publ/bcbs144.pdf.

Basel Committee on Banking Supervision. *Principles for the Management of Credit Risk.* (Basel, Switzerland: Bank for International Settlements, 1999). https://www.bis.org/publ/bcbs54.pdf.

Basel Committee on Banking Supervision. *Principles for the Sound Management of Operational Risk.* (Basel, Switzerland: Bank of International Settlements, 2011). https://www.bis.org/publ/bcbs195.pdf.

Chartered Institute of Internal Auditors. *Conduct risk*. 2018. https://www.iia.org.uk/resources/sector-specific-standards-guidance/financial- services/conduct-risk/?downloadPdf=true.

Chockalingam, Arun, Shaunak Dabadghao, and Rene Soetekouw. 2017. "Strategic Risk, Banks, and Basel III: Estimating Economic Capital Requirements." *SSRN*, October 23, 2017: 1–19. http://dx.doi.org/10.2139/ssrn.3057235.

Citi. *Global Regulatory Update, Corporates Edition, 2017-2018*. Treasury and Trade Solutions. https://www.citibank.com/tts/sa/flippingbook/2017/Global-Regulatory-Update/files/assets/common/downloads/Global%20Regulatory%20Update.pdf.

Committee of Sponsoring Organizations of the Treadway Commission. 2017. *Enterprise Risk Management – Integrating with Strategy and Performance.* Durham, NC: AICPA. https://bookstore.theiia.org/enterprise-risk-management-integrating-with-strategy-and- performance.

European Banking Authority. n.d. “Market Risk.” Accessed May 1, 2019. https://eba.europa.eu/regulation-and-policy/market-risk.

European Banking Authority. October 28, 2016. “Guidelines on internal governance (revised).“ https://eba.europa.eu/regulation-and-policy/internal-governance/guidelines-on-internal- governance-revised-/-/regulatory-activity/consultation-paper.

European Banking Authority. July 26, 2016. “Final report on guidelines on communication between competent authorities and auditors.” https://eba.europa.eu/documents/10180/1531117/EBA-GL-2016-05+%28Final+report+on+GL+on+communication+between+competent+authorities%29.pdf / d095b68c-17a1-40b3-9188-5f9facc23886.

Federal Deposit Insurance Corporation. “Supervisory Guidance on Model Risk Management.” 2017. https://www.fdic.gov/news/news/financial/2017/fil17022a.pdf.

International Finance Corporation in partnership with Oesterreichische Entwicklungsbank AG. 2012. *Standards on Risk Governance in Financial Institutions*. Ukraine: World Bank Group. https://www.ifc.org/wps/wcm/connect/ce387e804c9ef58697c4d7f81ee631cc/ECACR-RiskGovernanceStandards.pdf?MOD=AJPERES.

International Professional Practices Framework, 2017 Edition. Lake Mary, FL: Internal Audit Foundation. https://bookstore.theiia.org/international-professional-practices-framework- ippf-2017-edition.

The Institute of Internal Auditors. The IIA’s Position Paper: *The Three Lines of Defense in Effective Risk Management and Control* (Altamonte Springs: The Institute of Internal Auditors, 2013). https://global.theiia.org/about/about-internal-auditing/Pages/Position-Papers.aspx.

Լրացուցիչ ընթերցանություն

Gup, Benton E. *The Bank Director’s Handbook*. Illinois: Irwin Professional Publishing, 1996.

Office of the Comptroller of the Currency. July 2016. The Director’s Book: Role of Directors for National Banks and Federal Savings Associations. https://www.occ.gov/publications/publications-by-type/other-publications-reports/the- directors-book.pdf.

Երախտիքի խոսք

Ուղեցույցի մշակման թիմ

Mark Carawan, CIA, QIAL, ԱՄՆ (նախագահ)
Keri Rogers, CIA, CRMA, ԱՄՆ (թիմի ղեկավար)
Hazem Keshk, CIA, CRMA, Կանադա
Takuya Morita, CIA, Ճապոնիա
Juergen Rohrmann, CIA, Գերմանիա
Stacey Schabel, CIA, ԱՄՆ

Գլոբալ ուղեցույցների աջակիցներ

Troy Damboise, CIA, CRMA, ԱՄՆ
Martin Falck-Hansen, CIA, Դանիա
Audbjorg Fridgeirsdottir, CIA, Իսլանդիա
Kivilcim Günbatti, Թուրքիա
David Lin, CIA, CRMA, ԱՄՆ
Mariana Viegas, Պորտուգալիա

ՆԱԻ գլոբալ ստանդարտներ և ուղեցույցներ

Jeanette York, CCSA, տնօրեն (նախագծի ղեկավար)
Jim Pelletier, փոխնախագահ
Cassian Jae, գործադիր տնօրեն
Anne Mercer, CIA, CFSA, տնօրեն
Mike Padilla, CIA, տնօրեն
John Wszelaki, CIA, CRMA, տնօրեն
Shelli Browning, տեխնիկական խմբագիր
Lauressa Nelson, տեխնիկական խմբագիր

ՆԱԻ-ն շնորհակալություն է հայտնում հետևյալ վերահսկողական մարմիններին իրենց աջակցության համար. Ֆինանսական ծառայությունների ուղղորդման հանձնաժողով (Financial Services Guidance Committee), Մասնագիտական ուղղորդման խորհրդատվական մարմին (Professional Guidance Advisory Council), Ներքին աուդիտի միջազգային ստանդարտների խորհուրդ (International Internal Audit Standards Board), Մասնագիտական պատասխանատվության և էթիկայի կոմիտե (Professional Responsibility and Ethics Committee), և Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգի վերահսկողության խորհուրդ (International Professional Practices Framework Oversight Council).

ՆԱԻ մասին

Ներքին աուդիտորների ինստիտուտը (ՆԱԻ) ներքին աուդիտի մասնագիտության ամենալայն ճանաչում ունեցող ջատագովն է և կրթող, ստանդարտներ, ուղեցույցներ մշակող ու սերտիֆիկատներ տրամադրող կազմակերպությունը: Հիմնադրված լինելով 1941 թվականին՝ ՆԱԻ-ն այսօր ծառայում է ավելի քան 200,000 անդամների ավելի քան 170 երկրներից և տարածքներից: Ասոցիացիայի գլխամասը գտնվում է ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Լեյք Մերի քաղաքում: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.globaliia.org:

Ծանուցում

ՆԱԻ-ն հրապարակում է այս փաստաթուղթը տեղեկատվական և կրթական նպատակներով և, որպես այդպիսին, նախատեսված միայն որպես ուղեցույց օգտագործման համար: Այս ուղեցուցային նյութը նախատեսված չէ մասնավոր դեպքերին միանշանակ պատասխաններ տալու համար: ՆԱԻ-ն խորհուրդ է տալիս կոնկրետ խնդիրների համար միշտ դիմել անկախ փորձագիտական խորհրդատվության: ՆԱԻ-ն պատասխանատվություն չի կրում որևէ մեկի համար, ով ապավինում է միայն այս ուղեցույցին:

Հեղինակային իրավունք

Օգոստոս 2019

The Institute of Internal Auditors | Global

Գլխամաս
The Institute of Internal Auditors
1035 Greenwood Blvd., Suite 401
Lake Mary, FL 32746, USA
Հեռ.: +1-407-937-1111
Ֆաքս: +1-407-937-1101
www.theiia.org